ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2025Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 7

Հոդված 1. Կիրառման շրջանակները 7

Հոդված 2. Նպատակները 8

Հոդված 3. Տերմինների սահմանումը 9

ՄԱՍ 2: ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 30

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՈՂԸ 30

Հոդված 4. Արտոնագրողի պարտականությունները 30

Հոդված 5. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը 30

Հոդված 6. Ակումբների Արտոնագրման մարմինները (որոշում կայացնող մարմինները) 31

Հոդված 7. Պատասխանատվության միջոցների ցանկը 36

Հոդված 8. Արտոնագրման հիմնական գործընթացը 36

Հոդված 9. Գնահատման գործընթացը 37

Հոդված 10. Իրավահավասարությունը և գաղտնիությունը 38

ԳԼՈՒԽ 2. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ և ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ 39

Հոդված 11. Արտոնագրման թեկնածուի սահմանումը և երեք տարվա կանոնը 39

Հոդված 12. Արտոնագրման թեկնածուի ընդհանուր պարտականությունները 40

Հոդված 13. Արտոնագրերը՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը և Ազգային արտոնագիրը 40

Հոդված 14. ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու հատուկ թույլտվությունը 41

ԳԼՈՒԽ 3. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ 43

Հոդված 15. Ընդհանուր դրույթները 43

ՄԱՐԶԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 44

Հոդված 16. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագիրը 44

Հոդված 17. Մանկապատանեկան թիմերը 45

Հոդված 18. Կանանց ֆուտբոլի թիմը 46

Հոդված 19. Ֆուտզալի թիմը 46

Հոդված 20. Ֆուտբոլիստների բժշկական խնամքը 46

Հոդված 21. Ֆուտբոլիստների գրանցումը 46

Հոդված 22. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների հետ գրավոր պայմանագիրը 47

Հոդված 23. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարձակալությունը 47

Հոդված 24. Մրցավարական հարցերը և խաղի կանոնները 47

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ **48**

Հոդված 25. Սոցիալական և բնապահպանական կայունության ռազմավարությունը 48

Հոդված 26. Հավասարություն և ընդգրկվածություն 48

Հոդված 27. Ռասիզմի դեմ պայքար 48

Հոդված 28. Երեխաների պաշտպանվածություն և բարեկեցություն 48

Հոդված 29. Շրջակա միջավայրի պաշտպանություն 49

Հոդված 30. Ֆուտբոլը բոլորի համար 49

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ **50**

Հոդված 31. ՈՒԵՖԱ-ի ակումբային և ազգային մրցաշարերի (պրոֆեսիոնալ, մանկապատանեկան և սիրողական) անցկացման համար հաստատված մարզադաշտը 50

Հոդված 32. Ուսումնամարզական շինությունները և դրանց հասանելիությունը 50

Հոդված 33. Ուսումնամարզական շինությունները և անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքները 51

ԿԱԴՐԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ **52**

Հոդված 34. Աշխատակազմի գրանցումը 52

Հոդված 35. Ակումբի կոնտակտային տվյալներ 52

Հոդված 36. Գործադիր տնօրենը 53

Հոդված 37. Ֆինանսական հարցերով պատասխանատուն 53

Հոդված 38. Մամուլի քարտուղարը 53

Հոդված 39. Առաջին թիմի Բժիշկը 54

Հոդված 40. Առաջին թիմի Ֆիզիոթերապիստը 56

Հոդված 41. Մանկապատանեկան թիմերի բժիշկը 56

Հոդված 42. Ապահովության և անվտանգության հարցերով պատասխանատուն 57

Հոդված 43. Սոցիալական և բնապահպանական կայունության պատասխանատու 58

Հոդված 44. Երկրպագուների հարցերով պատասխանատուն 58

Հոդված 45. Սահմանափակ կարողություններ ունեցող երկրպագուների հարցերով պատասխանատուն 59

Հոդված 46. Խաղերի կազմակերպման պատասխանատուն 59

Հոդված 47. Ադմինիստրատորը 59

Հոդված 48. Առաջին թիմի գլխավոր մարզիչը 60

Հոդված 49. Առաջին թիմի գլխավոր մարզչի օգնականը 60

Հոդված 50. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարը 60
Հոդված 51. Առաջին թիմի Դարպասապահների մարզիչ 61
Հոդված 52. Առաջին թիմի այլ մարզիչները 61
Հոդված 53. Մանկապատանեկան թիմերի մարզիչները 62
Հոդված 54. Մանկապատանեկան թիմերի դարպասապահների մարզիչ 62
Հոդված 55. Կանանց թիմի գլխավոր մարզիչը 63
Հոդված 56. ՈՒԵՖԱ-ի մարզչական որակավորումներին առնչվող այլ ընդհանուր դրույթները 63
Հոդված 57. Գրավոր պայմանագրեր 64
Հոդված 58. Ծառայությունների մատուցում / առթսորսինգ 65
Հոդված 59. Պաշտոնների համատեղելիությունը 66
Հոդված 60. Վարչական կառուցվածք 67
Հոդված 61. Մրցաշրջանի ընթացքում փոխարինման պարտականությունը 67
ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ **68**
Հոդված 62. ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին և Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցելու հայտարարագիրը 68
Հոդված 63. Նվազագույն իրավական տեղեկատվությունը 69
Հոդված 64. Արտոնագրման թեկնածուի ինքնությունը, պատմությունը և ժառանգությունը 70
Հոդված 65. Գրավոր պայմանագիրը ֆուտբոլային կազմակերպության հետ 70
Հոդված 66. Իրավական խմբի կառուցվածքը 71
Հոդված 67. Գլխավոր վերահսկող կողմ, հիմնական շահառուները և նշանակալի ազդեցություն ունեցող կողմ 73
Հոդված 68. Ղեկավարության կողմից դիմում-հավաստագիրը արտոնագրման որոշում ընդունելուց առաջ 74
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ **76**
Հոդված 69. Հաշվետու իրավաբանական անձը / անձինք և հաշվետու խումբը 76
Հոդված 70. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները 78
Հոդված 71. Ֆինանսական հաշվետվության հրապարակումը 79
Հոդված 72. Սեփական կապիտալի կանոնը 80
Հոդված 73. Ժամկետանց պարտավորությունների բացակայությունը ֆուտբոլային ակումբների նկատմամբ 81
Հոդված 74. Ժամկետանց պարտավորությունների բացակայությունը աշխատակիցների նկատմամբ 83

Հոդված 75. Ժամկետանց պարտավորությունների բացակայությունը սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ 85

Հոդված 76. Ժամկետանց պարտավորությունները ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի նկատմամբ 87

Հոդված 77. Ապազա ֆինանսական տեղեկատվությունը 88

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ Հայաստանի ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑ ԹԻՄԸ (2-ՐԴ ԹԻՄԸ) **90**

Հոդված 78. Ընդհանուր դրույթներ 90

Հոդված 79. Հայաստանի Առաջին խմբի առաջնության խաղերի անցկացման հաստատված մարզադաշտը 90

Հոդված 80. Երկրորդ թիմի գլխավոր մարզիչը 90

Հոդված 81. Երկրորդ թիմի այլ մարզիչներ 91

Հոդված 82. Երկրորդ թիմի Բժիշկը 91

Հոդված 83. Երկրորդ թիմի Ֆիզիոթերապիստը 92

ՄԱՍ 3: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 93

Հոդված 84. Նամակագրության լեզուն 93

Հոդված 85. Հավելվածները 93

Հոդված 86. Համապատասխանելիության աուդիտները 93

Հոդված 87. Կարգապահական գործընթացները 94

Հոդված 88. Կիրառելի դրույթները 94

Հոդված 89. Նախկին կանոնակարգի չեղյալ համարումը, սույն կանոնակարգի ընդունումը և ուժի մեջ մտնելը 95

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 96

ՄԱՍ I 101

ՄԱՍ II 105

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԿԻՐԱՌՈՒՄԸ 109

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ 111

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 113

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 129

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.....143

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԱՐՏՈՆԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 145

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (2025Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)		
Խմբագրություն 2025	Ուժի մեջ է՝ 31.10.2025թ.-ից	Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 31.10.2025թ.-ին

Սույն կանոնակարգն ընդունվել է՝ հիմնվելով ՀՖՖ կանոնադրության Հոդված 23-ի 6-րդ կետի, Հոդված 56-ի, Հոդված 75-ի և ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման և ֆինանսական կայունության կանոնակարգի (Խմբագրություն 2025թ.) վրա:

ՄԱՍ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կիրառման շրջանակները

1.01. Սույն կանոնակարգը կիրառվում է այն դեպքերում, երբ վերջինիս հստակ հղում է կատարում Հայաստանի Պրեմիեր լիգան կարգավորող կանոնակարգերից որևէ մեկը: Ավելին, սույն կանոնակարգը կիրառելի է բոլոր այն ակումբների համար, որոնք ցանկանում են մասնակցել ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:

1.02. Սույն կանոնակարգը կարգավորում է ՀՖՖ-ի՝ ակումբների արտոնագրման համակարգում ներգրավված բոլոր կողմերի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, և, մասնավորապես, սահմանում հետևյալը՝

ա) նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարվեն ՀՖՖ-ի կողմից՝ որպես ակումբների արտոնագրող, և այն նվազագույն գործընթացները, որոնք արտոնագրողը պետք է իրականացնի արտոնագրման չափանիշների գնահատման ընթացքում,

բ) արտոնագրման թեկնածուին, ինչպես նաև ՀՖՖ-ի կողմից շնորհվող երկու տարբեր արտոնագրերը, այն է՝ ՈՒԵՖԱ-ի Արտոնագիր, որը պահանջվում է ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար, և Ազգային Արտոնագիրը, որն անհրաժեշտ է Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցելու համար,

գ) մարզական, սոցիալական և բնապահպանական կայունության, ենթակառուցվածքային, կադրային և վարչական, իրավական և ֆինանսական չափանիշներին վերաբերող այն նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարի ակումբը՝ ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի և Հայաստանի Պրեմիեր Լիգայի մասնակցության համար անհրաժեշտ համապատասխան արտոնագիր ստանալու համար:

1.03. ՈՒԵՖԱ-ի Ֆինանսական կայունության նպատակները խթանելու համար ակումբների վերահսկողության գործընթացում ներգրավված բոլոր կողմերի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը կարգավորվում են ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման և ֆինանսական

կայունության կանոնակարգով (Խմբագրություն 2025թ.)։ Նշված կանոնակարգը, մասնավորապես, սահմանում է հետևյալը՝

ա) ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական հսկողության մարմնի (CFCB) դերն ու խնդիրները, նվազագույն ընթացակարգերը, որոնց պետք է հետևի ՀՖՖ-ն ակումբների վերահսկողության պահանջները գնահատելիս, և արտոնագրվածների պարտականությունները ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի ընթացքում

բ) Ակումբների ֆինանսական վերահսկողության պահանջները, որոնց պետք է բավարարեն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցող արտոնագրվածները։

Հոդված 2. Նպատակները

2.01. Սույն կանոնակարգի նպատակն է՝

ա) խթանել և շարունակաբար նպաստել Հայաստանում ֆուտբոլային բոլոր ասպեկտների չափանիշների բարելավմանը և շարունակաբար առաջնահերթություն տալ յուրաքանչյուր ակումբում երիտասարդ ֆուտբոլիստների մարզմանն ու բարեկեցությանը,

բ) խթանել ներգրավվածությունը ֆուտբոլում և նպաստել կանանց ֆուտբոլի զարգացմանը,

գ) ապահովել ակումբների կառավարման և կազմակերպչական հմտությունների համապատասխան մակարդակը,

դ) համապատասխանեցնել ակումբների մարզական ենթակառուցվածքները՝ ֆուտբոլիստներին, երկրպագուներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին հարմարավետ, պատշաճ կահավորված և անվտանգ հարմարություններով ապահովելու համար,

ե) ապահովել Հայաստանի Պրեմիեր լիգայի և ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի ամբողջականությունն ու սահուն ընթացքը,

զ) պաշտպանել ակումբի ինքնությունը, պատմությունն ու ժառանգությունը,

է) խրախուսել ակումբների հետ համագործակցությունը և Հայաստանում ակումբների ֆինանսական, մարզական, իրավական, սոցիալական և

բնապահպանական կայունության, կադրային ու վարչական և ենթակառուցվածքային չափանիշների պահանջների զարգացումը,

ը) ստանձնել սոցիալական պատասխանատվությունը ֆուտբոլում,

թ) խթանել ակումբների և երկրպագուների միջև առողջ հարաբերությունները և բարձրացնել ֆուտբոլի մատչելիության մակարդակը,

2.02. Սույն կանոնակարգի նպատակն է նաև խթանել ակումբային ֆուտբոլի ֆինանսական հատվածում կարգապահության և բանականության առավել բարձր մակարդակի դրսևորումը և մասնավորապես.

ա) բարելավել ակումբների տնտեսական և ֆինանսական կայունությունը՝ նպաստելով վերջիններիս թափանցիկության և վստահելիության մակարդակի բարձրացմանը,

բ) անհրաժեշտ կարևորություն տալ վարկատուների պաշտպանությանը՝ երաշխավորելով, որ ակումբները ճշտապահորեն կատարեն իրենց պարտավորությունները աշխատակիցների, սոցիալական/հարկային մարմինների և, այլ ակումբների նկատմամբ:

գ) խթանել ծախսերի առավել լավ վերահսկողություն,

դ) խրախուսել ակումբներին գործել սեփական եկամուտների հիման վրա,

ե) խրախուսել պատասխանատու կերպով ծախսեր կատարելը ֆուտբոլում երկարաժամկետ օգուտ ստանալու նպատակով.

զ) ապահովել եվրոպական ակումբային ֆուտբոլի երկարաժամկետ կենսունակությունն ու կայունությունը.

Հոդված 3. Տերմինների սահմանումը

3.01. Սույն կանոնակարգում կիրառվում են տերմինների հետևյալ սահմանումները.

Վարչական գործընթացներ	Կամավոր կամ պարտադիր գործընթաց, որը կարող է ծառայել որպես իրավաբանական անձի լուծարման գործընթացի այլընտրանք. հաճախ հայտնի է որպես անցում վարչական գործընթացին: Այստեղ իրավաբանական

	անձի գործողությունների ամենօրյա կառավարումը կարող է իրականացվել վարկատուների կողմից երաշխավորված կառավարչի կողմից:
Գործակալ/ միջնորդ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով բանակցությունների ժամանակ անվճար կամ վճարի դիմաց հանդես է գալիս որպես ֆուտբոլիստների և/կամ ակումբների ներկայացուցիչ՝ վերջիններիս հետ աշխատանքային և/կամ տրանսֆերային պայմանագրի կնքումն ապահովելու նպատակով:
Համաձայնեցված ընթացակարգեր	Համաձայնեցված ընթացակարգեր իրականացնելու վերաբերյալ պայմանավորվածության դեպքում աուդիտորը պարտավորվում է անցկացնել աուդիտորական բնույթի համաձայնեցված ընթացակարգեր, որոնց շուրջ աուդիտորը, աուդիտի ենթարկվող սուբյեկտը և համապատասխան երրորդ կողմը եկել են համաձայնության և պետք է զեկուցեն փաստացի բացահայտումների մասին: Զեկույցը ստացողները վերջինիս վերաբերյալ պետք է կազմեն իրենց սեփական եզրակացությունները: Զեկույցը հասանելի է միայն այն կողմերին, ովքեր համաձայնության են եկել այդ ընթացակարգերի կիրառման շուրջ, քանի որ վերջիններիս հիմքում ընկած պատճառներից անտեղյակ կողմերը կարող են սխալ մեկնաբանել դրա արդյունքները:

Հարակից կողմ/Կապված Անձ	Կազմակերպություն (ներառյալ կարգավիճակ չունեցող կազմակերպություն, օր՝ գործընկերություն), որը չի հանդիսանում ո՛չ դուստր ձեռնարկություն, ո՛չ էլ շահառու համատեղ ձեռնարկության մեջ, և որի վրա ներդրողն ունի նշանակալի ազդեցություն:
Աուդիտոր	Անկախ աուդիտորական կազմակերպություն, որը գործում է պրոֆեսիոնալ հաշվապահների միջազգային վարքագրքի (այդ թվում՝ Անկախության միջազգային ստանդարտների) համաձայն:
Ֆինանսական տարվա վերջին օր	Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաշվետու ժամանակաշրջանի ավարտի ամսաթիվը
ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման SS հարթակ	ՈՒԵՖԱ-ի կողմից մշակված SS համակարգ սույն կանոնակարգի գործարկման, գնահատման և կիրառման շրջանակներում արտոնագրման թեկնածուներից/արտոնագրվողներից տեղեկատվություն հավաքագրելու և արտոնագրողների հետ վերջիններիս փոխկապակցված ակումբների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով
ԱՖՎՄ (CFCB)	**ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական վերահսկողության մարմին**
Ֆուտբոլի կառավարման համակարգ (FMS)	Էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր գործառույթները, որոնք ընդգրկում են ֆուտբոլային ենթակառուցվածքների, ֆուտբոլային ակումբների, ֆուտբոլիստների, մրցումների կազմակերպման և անցկացման, նախախաղային և հետխաղային տվյալների կառավարումը

Ակումբների արտոնագրման չափանիշներ	Պահանջներ՝ բաժանված վեց կատեգորիաների (մարզական, սոցիալական և բնապահպանական կայունության, ենթակառուցվածքային, կադրային և վարչական, իրավական, ֆինանսական), որոնք պետք է բավարարվեն արտոնագրման թեկնածուի կողմից, որպեսզի վերջինս ստանա ՀՖՖ-ի կողմից շնորհվող համապատասխան արտոնագիրը:
ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման որակի ստանդարտ	Փաստաթուղթ, որը սահմանում է այն նվազագույն պահանջները, որոնք պետք է կատարի արտոնագրողը՝ ակումբների արտոնագրման համակարգը գործադրելու համար:
Ակումբի վերահսկողության պահանջներ	Պահանջներ, որոնք պետք է բավարարվեն ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի, Եվրոպա լիգայի կամ Կոնֆերենցիաների լիգայի ընտրական փուլն անցած արտոնագրվածի կողմից:
Վերաակողություն	Կազմակերպության գործունեությունը վարելու և եկամուտների վրա ազդեցություն ունեցող ֆինանսական, գործառնական կամ մարզական քաղաքականությունները ղեկավարելու կարողություն՝ բաժնեմասային սեփականության, քվեարկության իրավունքի, սահմանադրական փաստաթղթերի (կանոնադրության),համաձայնագրի կամ այլ միջոցներով: Վերահսկողության օրինակներից է, երբ կողմը

ա) ունի բաժնետերերի կամ անդամների ձայների մեծամասնությունը,

բ) իրավունք ունի նշանակել կամ հեռացնել այն անդամների մեծամասնությանը, որոնք պատասխանատու են կազմակերպության կառավարման համար (օր.՝ կազմակերպության ցանկացած վարչական, կառավարման կամ վերահսկողության մարմին),

գ) լինելով կազմակերպության անդամ կամ ունենալով կազմակերպության բաժնեմասերի փոքրամասնությունը, կամ անհատապես, այլ բաժնետերերի կամ կազմակերպության անդամների հետ կնքված համաձայնագրերի կամ այլ միջոցներով, հնարավորություն է ստանում վերահսկողություն իրականացնել (այդ թվում՝ ինչպես սահմանված է ա) և բ) կետերում):

Ֆուտբոլիստի գրանցման համար ծախսեր

Վճարված կամ վճարման ենթակա գումարներ, որոնք ուղղակիորեն կապված են ֆուտբոլիստի գրանցման հետ և ներառում են՝

ա) ֆիքսված տրանսֆերային փոխհատուցումը

բ) Պայմանական տրանսֆերային փոխհատուցումները, որոնք վճարման ենթակա են դարձել հաշվետու ժամանակաշրջանը ընթացքում,

գ) ցանկացած այլ՝ ուղղակիորեն վերագրելի գումարները, որոնք վճարվել և/կամ ենթակա են վճարման այլ կողմին, ինչպիսին են՝ ֆուտբոլային ակումբը, գործակալը/ միջնորդը կամ ազգային ֆուտբոլային ասոցիացիան/լիգան:

Ամորտիզացիա	Նյութական ակտիվի ամորտիզացիոն գումարի համակարգված բաշխումը իր օգտակար ծառայության ընթացքում, այսինքն՝ այն ժամանակաշրջանի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվը հասանելի կլինի կազմակերպության կողմից օգտագործման համար:
Ուղղակիորեն վերագրելի	Որոշակի գործունեության հետ կապված ուղղակիորեն վերագրելի միջոցներ, ինչպիսիք են՝ ա) ծախսեր, որոնք չեն լինի որոշակի գործունեության չիրականացման արդյունքում, բ) ծախսեր, որոնք առանց որևէ բաժանման առանձին ճանաչելի են,
Շահաբաժիններ	Սեփական կապիտալի բաժնետերերին վճարվող բաժնեմաս
Արտոնագրողին դիմում ներկայացնելու վերջնաժամկետ	Արտոնագրողի կողմից նշանակված օր, մինչ որը արտոնագրման թեկնածուն պետք է ՀՖՖ ներկայացնի ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ համապատասխան արտոնագիր ստանալու դիմումը ձևակերպելու համար:
Աշխատակիցների վարձատրության ծախսեր	Աշխատակիցների մատուցած ծառայությունների կամ վերջիններիս աշխատանքից ազատելու դիմաց կազմակերպության կողմից տրամադրված բոլոր տեսակի փոխհատուցումները, այդ թվում՝ տնօրեններին, ղեկավար անձնակազմին և կառավարման մարմիններին:
Խոշոր տնտեսական կարևորություն ունեցող իրադարձություն կամ պայման	Իրադարձություն կամ պայման, որը տեղի է ունեցել հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ժամանակատվածում և

	ենթադրաբար էական ազդեցություն է գործել հաշվետու կազմակերպության /կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վրա և առաջանում է գործառոնությունների ֆինանսական վիճակի և զուտ ակտիվների այլ ցուցանիշների ներկայացման անհրաժեշտություն
Ապագա ֆինանսական տեղեկատվություն	Տեղեկատվություն, որը վերաբերում է ակումբի ֆինանսական վիճակին այն հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք ավարտվում են ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մեկնարկից հետո:
Կառավարություն	Կառավարության ցանկացած ձև, ներառյալ կառավարության գործակալություններ, կառավարության վարչություններ և նմանատիպ մարմիններ՝ թե՛ համայնքային, թե՛ ազգային:
Խումբ	Հիմնադիր/մայր կազմակերպությունը և նրա բոլոր դուստր ձեռնարկությունները: Հիմնադիր/մայր կազմակերպությունը իրավաբանական անձ է, որն ունի մեկ կամ մի քանի դուստր ձեռնարկություններ: Դուստր ձեռնարկությունը իրավաբանական անձ է (ներառյալ ձեռնարկության կարգավիճակով գրանցում չունեցող իրավաբանական անձինք՝ օր. Գործընկերությունը), որը վերահսկվում է մեկ ուրիշ իրավաբանական անձի (հայտնի որպես հիմնադիր/մայր կազմակերպություն) կողմից:

Հեղինակային իրավունքների վճարներ	Աշխատակիցներին վճարման ենթակա գումարներ (ուղղակի կամ անուղղակի), որոնք առաջացել են արտոնագրման թեկնածուի հետ ունեցած պայմանագրային հարաբերությունների արդյունքում՝ ֆուտբոլային կամ ոչ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելիս աշխատակիցների հեղինակության շահարկման իրավունքի համար:
Նյութական ակտիվների արժեզրկում	Արժեզրկումից կորուստ, որը հանդիսանում է այն գումարը, որով նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխատուցվող գումարը, այսինքն՝ ակտիվի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից ավելին:
Միջազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտներ	Միջազգային Հաշվապահական Ստանդարտների Խորհրդի (International Accounting Standards Board – IASB) կողմից ընդունված ստանդարտներ և մեկնաբանություններ: Վերջիններս բաղկացած են հետևյալից՝ • Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, • միջազգային հաշվապահական ստանդարտներ, և Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային հանձնաժողովի (International Financial Reporting Interpretations Committee – IFRIC) կամ նախկինում գործող մեկնաբանությունների կոմիտեի (Standing

	Interpretations Committee – SIC) կողմից կազմված մեկնաբանություններ /բացատրություններ:
ISRS 4400	Համապատասխան ծառայությունների միջազգային ստանդարտ 4400 (վերանայված), համաձայնեցված ընթացակարգերի ներգրավումով:
Համատեղ վերահսկողություն	Պայմանագրային հիմքերի վրա տնտեսական գործընթացների նկատմամբ վերահսկողության համատեղում, այն դեպքերում երբ տնտեսական գործընթացների մասով կայացվող ռազմավարական նշանակության ֆինանսական և գործառնական որոշումները պահանջում են համատեղ վերահսկողություն իրականացնող կողմերի միաձայն համաձայնություն:
Համատեղ ձեռնարկություն	Պայմանագրային հիմունքներով համաձայնություն, որով երկու կամ ավելի կողմեր համատեղ վերահսկողություն են իրականացնում տնտեսական գործունեության նկատմամբ:
Հիմնական ղեկավար անձնակազմ	Մարդիկ, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով լիազորություններ ունեն և պատասխանատվություն են կրում կազմակերպության գործողության պլանավորման, ղեկավարման և վերահսկողության համար (ներառյալ կազմակերպության ցանկացած տնօրեն

	(գործադիր կամ այլ)՝ առանց սահմանափակման):
Արտոնագիր	ՀՖՖ-ի կողմից տրված վկայական, որը հաստատում է արտոնագրման թեկնածուի կողմից բոլոր նվազագույն չափանիշների բավարարելը՝ որպես ՀՖՖ-ի և ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու նպատակով
Արտոնագրման թեկնածու	Իրավաբանական անձ, որն ամբողջովին և միանձնյա պատասխանատու է ազգային և միջազգային ակումբային մրցաշարերին մասնակցող ֆուտբոլային առաջին թիմի համար, և որը արտոնագիր ստանալու դիմում է ներկայացրել:
Արտոնագրված	Արտոնագրման թեկնածու, որին շնորհվել է արտոնագիր արտոնագրողի կողմից:
Արտոնագրման մրցաշրջան	ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի այն մրցաշրջանը, որի համար արտոնագրման թեկնածուն դիմել է կամ արդեն ստացել է արտոնագիր: Այն սկսվում է ՀՖՖ-ի կողմից արտոնագրման որոշումների ցանկը ՈՒԵՖԱ-ին հանձնելու վերջնաժամկետի հաջորդ օրվանից (վերջնաժամկետը սկզբունքորեն համարվում է մայիսի 31-ը) և տևում է մինչև հաջորդ տարվա նույն վերջնաժամկետի օրը:
Արտոնագրող	Մարմին, ով գործադրում է ակումբների արտոնագրման համակարգը և շնորհում

	համապատասխան արտոնագրեր: ՀՀ-ում և սույն կանոնակարգում արտոնագրողը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան է (ՀՖՖ):
Արտոնագրման որոշումների ցանկ	Արտոնագրողի կողմից ՈՒԵՖԱ-ին ներկայացվող ցանկ, որը, տրամադրվող այլ տեղեկատվության հետ մեկտեղ, ներառում է նաև տեղեկատվություն այն արտոնագրման թեկնածուների մասին, ովքեր անցել են արտոնագրման գործընթացը և ՀՖՖ-ի ակումբների արտոնագրման մարմինների կողմից ստացել են արտոնագիր ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված կարգով:
Կարևորություն/էական	Տեղեկությունների բացթողումը կամ խեղաթյուրումը համարվում է կարևոր/էական, եթե դրանք առանձին-առանձին կամ խմբակային ձևով կարող են ազդել տեղեկությունից օգտվողների որոշումների վրա, որոնք կայացվել են արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա: Կարևորության աստիճանը կախված է այդ բացթողումների կամ խեղաթյուրումների ծավալներից և բնույթից՝ դատելով շրջակա հանգամանքներից կամ իրավիճակից: Տեղեկատվության ծավալը կամ բնույթը կամ երկուսի համակցությունը կարող են որոշիչ գործոն հանդիսանալ:
Նվազագույն չափանիշներ	Չափանիշներ, որոնք պետք է բավարարի արտոնագրման թեկնածուն՝

	համապատասխան արտոնագիր /արտոնագրեր ստանալու համար:
Վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր	Փաստաթղթեր, որոնք պետք է սահմանված կարգով ներկայացվեն արտոնագրվածի կողմից ակումբի նկատմամբ վերահսկողության պահանջներին համապատասխան
Հաշվապահական հաշվառման տեղական փորձ	Հաշվապահական հաշվառում անցկացնելու և հաշվետվություն պատրաստելու/կազմելու փորձ, ինչպես նաև ՀՀ-ում տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ կազմակերպություններին ներկայացված պահանջներ
Ազգային Արտոնագիր	ՀՖՖ-ի կողմից շնորհվող հավաստագիր, որը հաստատում է արտոնագրման թեկնածուի՝ Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցելու համար անհրաժեշտ մինիմալ չափանիշների բավարարելը: Ակումբի՝ մարզական չափանիշներով որակավորվելուց զատ՝ Ազգային Արտոնագիրը կարևորագույն և պարտադիր պայման է (*sine qua non*) Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցելու համար:
Զուտ պարտք	Զուտ պարտքը հետևյալ ցուցանիշների մնացորդների գումարն է՝ - բանկային օվերդրաֆտներ, բանկային և այլ փոխառություններ, պարտավորություններ խմբի կազմակերպություններին, և այլ կապակցված կողմերին՝ հանած

	դրամական միջոցները և դրանց համարժեքները: - ֆուտբոլիստների տրանսֆերների զուտ մնացորդը, այսինքն՝ ֆուտբոլիստների տրանսֆերների համար վճարվող և ֆուտբոլիստների տրանսֆերներից ստացվող գումարների մնացորդը: - սոցիալական/ հարկային մարմիններին վճարվող գումարներ (ոչ ընթացիկ)
Զուտ արդյունք	Եկամտի բոլոր աղբյուրների հանրագումարը՝ հանած տվյալ ժամանակահատվածի ծախսերը՝ շահույթում կամ վնասում
Ներգրավված կողմեր	ՀՖՖ-ի և ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման համակարգի մեջ ներգրավված ցանկացած ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, ներառյալ ՈՒԵՖԱ-ի վարչակազմը, ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական վերահսկողության մարմինը, ՀՖՖ-ն, արտոնագրման թեկնածուն/արտոնագրվածը և նրանց անունից ներգրավված ցանկացած անհատ:
Կողմ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, իրավաբանական կազմակերպություն կամ ղեկավարություն:
Ֆուտբոլիստի գրանցում	Ֆուտբոլիստի գրանցում տերմինը սահմանված է ՀՖՖ Ֆուտբոլիստների

	կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգում:
Նյութական ակտիվների օտարումից շահույթ/ վնաս	Շահույթը կամ վնասը, որը հաշվարկվում է որպես օտարումից զուտ հասույթի (եթե այդպիսիք կան) և օտարման ամսաթվի դրությամբ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն
Պաշտպանություն պարտատերերից	Օրենքների կամ այլ իրավական ակտերի համաձայն գործող ընթացակարգեր, որոնց նպատակն է պաշտպանել կազմակերպությունը պարտատերերից, օգնել անվճարունակ կազմակերպություններին և հնարավորություն տալ նրանց շարունակել իրենց գործունեությունը՝ որպես անընդհատ գործող կազմակերպության: Այս գործընթացը ներառում է (կամավոր) լուծարում կամ վարչական ընթացակարգեր և այլ անվճարունակության գործընթացներ (որոնք կարող են հանգեցնել պարտատերերի հետ փոխզիջման, սնանկացման կամ լուծարման):
Կապակցված կողմ/Փոխկապակցված Անձ	Կապակցված կողմը անձ կամ կազմակերպություն կամ ղեկավար մարմին է, որը կապված է իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստող կազմակերպության հետ (հաշվետու կազմակերպություն): Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմերի հարաբերությունները դիտարկելիս՝

ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը և ոչ թե զուտ իրավական ձևին:

ա) անձը կամ այդ անձի ընտանիքի մերձավոր անդամը առնչվում է հաշվետու կազմակերպության հետ, եթե այդ անձը՝

- վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն ունի հաշվետու կազմակերպության նկատմամբ,
- էական և որոշիչ ազդեցություն ունի հաշվետու կազմակերպության վրա, կամ
- հաշվետու կազմակերպության կամ հաշվետու կազմակերպության հիմնադիր/մայր կազմակերպության հիմնական ղեկավար կազմի անդամ է:

բ) կազմակերպությունը համարվում է կապակցված հաշվետու կազմակերպության հետ, եթե բավարարվում է հետևյալ պայմաններից որևիցե մեկը՝

- կազմակերպությունը և հաշվետու կազմակերպությունը նույն խմբի անդամներ են (ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր մայր և դուստր կազմակերպություններ կապված են մյուսների հետ),
- նույն կողմը վերահսկում, համատեղ վերահսկում կամ զգալի և որոշիչ ազդեցություն է ունենում կազմակերպության և հաշվետու կազմակերպության վրա,
- մի կազմակերպությունը մյուս կազմակերպության ասոցիացված կամ

համատեղ ձեռնարկությունն է (կամ այն խմբի անդամի ասոցիացված կամ համատեղ ձեռնարկությունն է, որի անդամն է մյուս կազմակերպությունը),

- մի կողմը էական և որոշիչ ազդեցություն ունի մյուս կողմի վրա,
- երկու կազմակերպություններն էլ նույն երրորդ կողմի համատեղ ձեռնարկություններն են,
- մի կազմակերպությունը երրորդ կազմակերպության համատեղ ձեռնարկությունն է, իսկ մյուս կազմակերպությունը նույն երրորդ կազմակերպության ասոցիացված ձեռնարկությունն է:
- կազմակերպությունը հետաշխատանքային հատուցումների ծրագիր է՝ ի շահ հաշվետու կազմակերպության կամ հաշվետու կազմակերպության հետ կապված կազմակերպության աշխատակիցների: Եթե հաշվետու կազմակերպությունն ինքնին նմանատիպ ծրագիր է, ապա հովանավոր հանդիսացող գործատուները նույնպես կապված են հաշվետու կազմակերպության հետ:
- կազմակերպությունը վերահսկվում կամ համատեղ վերահսկվում է ա) կետով սահմանված անձի կողմից,
- վերոնշյալ ա) կետի առաջին ենթակետով սահմանված անձը էական և որոշիչ ազդեցություն ունի կազմակերպության վրա կամ հանդիսանում է

	կազմակերպության (կամ կազմակերպության մայր կազմակերպության) հիմնական ղեկավար անձնակազմի անդամ: - կազմակերպությունը կամ ցանկացած անդամը այն խմբի, որի մաս է կազմում վերջինս, հաշվետու կազմակերպությանը կամ հաշվետու կազմակերպության մայր կազմակերպությանը տրամադրում է հիմնական ղեկավար անձնակազմի ծառայություններ:
Հաշվետու իրավաբանական անձ/անձինք	Գրանցված անդամ և/կամ ֆուտբոլային կազմակերպություն, կազմակերպությունների խումբ կամ կազմակերպությունների այլ միավորում, որն ընդգրկված է հաշվետու խմբի մեջ և որը պետք է արտոնագրողին ներկայացնի տեղեկատվություն ակումբների արտոնագրման և ակումբների վերահսկողության նպատակների համար:
Հաշվետու ժամանակահատված	Ֆինանսական հաշվետու ժամանակաշրջանը, որն ավարտվում է ֆինանսական տարվա օրը: ՀՀ-ում հաշվետվության ժամանակաշրջանը օրացույցային տարին է (Հունվարի 1-ից Դեմկտեմբերի 31-ը):
Նշանակալի փոփոխություն	Արտոնագրողին արդեն ներկայացրած փաստաթղթային փաթեթի համար էական նշանակություն ունեցող իրադարձություն, որի համար կպահանջվի փաստաթղթերի այլ փաթեթի ներկայացում այլ մեկնաբանում,

	եթե վերջինս տեղի ունենար մինչև փաթեթը ներկայացնելը:
Նշանակալի ազդեցություն	Կազմակերպության ֆինանսական, գործառնական և սպորտային քաղաքականության վրա ազդելու, բայց ոչ տվյալ կազմակերպությունը վերահսկելու կամ համատեղ վերահսկելու իրավասություն՝ բաժնետոմսերի սեփականության, քվեարկության իրավունքի, սահմանադրական փաստաթղթերի (կանոնադրություններ), համաձայանգրի կամ այլ միջոցներով: Զգալի ազդեցության օրինակներից են, երբ՝ ա) ուղղակիորեն կամ անուղղակիորեն կողմին է պատկանում բաժնետերերի կամ անդամների ձայների իրավունքի 20%-ից մինչև 50%-ը: բ) կողմը կարողանում է ազդել կազմակերպության կառավարման համար պատասխանատու անդամների մեծամասանության նշանակման և հեռացման վրա (օր.՝ կազմակերպության ցանկացած վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնի վրա): գ) ունենալով կազմակերպության բաժնեմասերի փոքրամասնությունը կամ լինելով կազմակերպության անդամ, այլ բաժնետերերի կամ կազմակերպության անդամների հետ կնքված համաձայնագրերի կամ այլ միջոցներով, կարողանում է միանձնյա զգալի ազդեցություն գործադրել (այդ

թվում՝ ինչպես սահմանված է ա) և բ) կետերում):

դ) կողմը՝ մեկ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, միանձնյա կամ միևնույն գլխավոր վերահսկող կողմի կամ ղեկկավարության ներքո գործող այլ կողմերի հետ միասին (բացառությամբ ՈՒԵՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի անդամ ասոցիացիայի/ՀՖՖ-ի և փոխկապակցված լիգայի) տրամադրում է կազմակերպության՝ նույն ժամանակահատվածում ստացած ընդհանուր եկամտի 30%-ին համապատասխան գումար:

Մարզադաշտ — Մրցաշարային հանդիպման համար նախատեսված տարածք, որն ընդգրկում է նաև մարզադաշտի հարակից բոլոր կառույցները և հարմարությունները (օրինակ՝ գրասենյակներ, հյուրասիրության գոտիներ, լրատվական և հավատարմագրման կենտրոններ):

Ֆինանսական տարվա վերջին օր — ՀՀ—ում ֆինանսական տարվա վերջին օրն է դեկտեմբերի 31-ը:

Լրացուցիչ տեղեկատվություն — Ֆինանսական տեղեկատվություն, որը, ի լրումն ֆինանսական հաշվետվությունների, ներկայացվում է արտոնագրողին, եթե չեն բավարարվում հաշվապահական հաշվառման տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները:

	Լրացուցիչ տեղեկատվությունը պետք է կազմված լինի հաշվապահական հաշվառման, ինչպես նաև հաշվառման քաղաքականության հիման վրա, որը համապատասխանում է ֆինանսական հաշվետվություններին: Ֆինանսական հաշվետվությունները պետք է հիմնված լինեն այն աղբյուրների վրա, որոնք օգտագործվել են տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար: Անհրաժեշտության դեպքում ներկայացվող լրացուցիչ ֆինանսական տեղեկատվությունը պետք է համաձայնեցված լինի ֆինանսական հաշվետվության համապատասխան բացահայտումների հետ:
Նյութական ակտիվներ	Ակտիվներ, որոնք ունեն ֆիզիկական էություն և պահվում են ապրանքների կամ ծառայությունների արտադրման կամ մատակարարման, այլ անձանց վարձակալության կամ վարչական նպատակների համար՝ կազմակերպության գործունեության շարունակական հիմունքներով:
Մարզումային հարմարություններ	Այն վայրը/վայրերը/, որտեղ ակումբի գրանցված ֆուտբոլիստները կանոնավոր կերպով անցկացնում են ֆուտբոլային մարզումներ կամ ծավալում են մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանն ուղղված գործունեություն:

ՈՒԵՖԱ-ի Արտոնագիր	ՀՖՖ-ի կողմից շնորհվող հավաստագիր, որը հաստատում է արտոնագրման թեկնածուի՝ ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար անհրաժեշտ մինիմալ չափանիշների բավարարելը: Ի հավելումն ակումբի՝ մարզական չափանիշներով որակավորմանը՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը պարտադիր և կարևորագույն պայման է (*sine qua non*) ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար՝ համաձայն սույն կանոնակարգի Հոդված 15-ի:
Գլխավոր վերահսկող կողմ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիմնական վերահսկողություն է իրականացնում կազմակերպության նկատմամբ:

ՄԱՍ 2: ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՈՂԸ

Հոդված 4. Արտոնագրողի պարտականությունները

4.01. Արտոնագրող է հանդիսանում «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «ՀՖՖ»), ով ղեկավարում է ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգը:

4.02. Արտոնագրողը մասնավորապես պարտավոր է՝

ա) ունենալ ակումբների արտոնագրման բաժին՝ համաձայն Հոդված 5-ի,

բ) ունենալ որոշում կայացնող երկու մարմին՝ համաձայն Հոդված 6-ի,

գ) ստեղծել պատժամիջոցների ցանկ՝ համաձայն Հոդված 7-ի,

դ) սահմանել արտոնագրման հիմնական գործընթացը՝ համաձայն Հոդված 8-ի,

ե) գնահատել արտոնագրման թեկնածուների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանելիությունը և սահմանել գնահատման գործընթացը՝ համաձայն Հոդված 9-ի,

զ) ապահովել արտոնագրման բոլոր թեկնածուների իրավահավասարությունը և երաշխավորել արտոնագրման ընթացքում տրամադրված տեղեկատվության լիակատար գաղտնիությունը՝ համաձայն Հոդված 10-ի,

է) պարզել, թե արդյոք բոլոր չափանիշների պահանջները բավարարված են, և ինչպիսի լրացուցիչ տեղեկատվություն (եթե այդպիսին կա) է անհրաժեշտ՝ համապատասխան արտոնագիր շնորհելու համար:

Հոդված 5. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը

5.01. Արտոնագրողը պարտավոր է ունենալ ակումբների արտոնագրման պատասխանատուի հաստիք (ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի պետ), ով պատասխանատու է արտոնագրման բաժնի գործունեության համար:

5.02. ՀՖՖ Արտոնագրման բաժնի պարտականություններն ընդգրկում են հետևյալը՝

ա) ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի նախապատրաստում, կիրառում և հետագա զարգացում,

բ) արտոնագրման մարմիններին վարչական աջակցության ցուցաբերում,

գ) մրցաշրջանի ընթացքում արտոնագրվածներին աջակցության ցուցաբերում, խորհրդատվության տրամադրում և նրանց գործունեության վերահսկում՝ շնորհված արտոնագրի չափանիշների շրջանակներում,

դ) տեղեկատվության տրամադրում ՈՒԵՖԱ-ին արտոնագրման որոշում կայացնելուց հետո տեղի ունեցող ցանկացած դեպքի մասին, որը կհանգեցնի նախկինում ներկայացված տեղեկատվության էական փոփոխության, ներառյալ իրավական ձևի, իրավական խմբի կառուցվածքի (այդ թվում՝ սեփականության փոփոխության) կամ ինքնության փոփոխության մեջ

ե) կոնտակտային անձի պարտականությունների կատարում ՈՒԵՖԱ-ի անդամ հանդիսացող այլ ասոցիացիաների արտոնագրման բաժինների և հենց ՈՒԵՖԱ-ի հետ՝ փորձի փոխանակման համար:

5.03. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի առնվազն մեկ աշխատակից կամ արտաքին ֆինանսական փորձագետ պետք է ունենա ֆինանսական կրթություն, ունենա հաշվապահական հաշվառման /աուդիտորի/ մասնագետի դիպլոմ, որը հաստատվել է կամ համապատասխան ազգային մարմնի կողմից (օրինակ՝ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների միության), կամ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, կամ պետք է ունենա հինգ տարվա աշխատանքային փորձ վերոնշյալ ոլորտում («Իրավասության ճանաչում» ՀՖՖ-ի կողմից):

Հոդված 6. Ակումբների Արտոնագրման մարմինները (որոշում կայացնող մարմինները)

6.01. Ակումբների արտոնագրման որոշում կայացնող մարմիններն են Ակումբների արտոնագրման կոմիտեն (ԱԱԿ) (ԱԱԿ-ն գործում է որպես առաջին ատյանի մարմին) և Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեն (ԱԱԲԿ) (ԱԱԲԿ-ն գործում է որպես բողոքարկման մարմին կամ երկրորդ ատյանի մարմին): Այդ մարմինները պետք է գործեն միմյանցից անկախ:

6.02. Ակումբների արտոնագրման կոմիտեն որոշում է կայացնում արտոնագրման թեկնածուին համապատասխան արտոնագիր շնորհելու նպատակահարմարության

վերաբերյալ այն փաստաթղթերի հիման վրա, որոնք ներկայացվել են մինչև արտոնագրման թեկնածուի կողմից սահմանված վերջնաժամկետները, ինչպես նաև համապատասխան արտոնագրի մերժման և/կամ հետ կանչման վերաբերյալ:

6.03. Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեն գրավոր կերպով քննում է ներկայացված բողոքարկումները և կայացնում է վերջնական որոշում համապատասխան արտոնագիր շնորհելու կամ մերժելու վերաբերյալ: Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեի որոշումը կարող է բողոքարկվել միայն Լոզանի (Շվեյցարիա) Սպորտային հարցերով արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) առջև՝ համաձայն ՀՖՖ Կանոնադրության Հոդված 67-ի, Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեի որոշման ընդունման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

6.04. ԱԱԲԿ բողոքարկել կարող են միայն՝

ա) արտոնագրման թեկնածուն, ով մերժում է ստացել Ակումբների արտոնագրման կոմիտեի կողմից,

բ) արտոնագիր ստացած այն ակումբները, որոնց արտոնագիրը հետ է կանչվել Ակումբների արտոնագրման կոմիտեի կողմից,կամ

գ) ՀՖՖ-ի Արտոնագրման բաժնի պետը, ով գործում է ՀՖՖ-ի անունից:

6.05. Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեն իր որոշումները կայացնում է Ակումբների արտոնագրման կոմիտեի որոշումների և արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված բոլոր ընդունելի փաստաթղթերի հիման վրա՝ մինչև սահմանված վերջնաժամկետը ներկայացված բողոքարկման գրավոր դիմումի հետ միասին:

6.06. Ակումբների արտոնագրման մարմինների անդամները նշանակվում են ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի կողմից: Ակումբների արտոնագրման յուրաքանչյուր մարմին բաղկացած է նախագահից, նախագահի տեղակալից և ևս հինգ անդամներից: Ակումբների արտոնագրման մարմինների անդամները պետք է՝

ա) սեփական պարտականությունները կատարելիս գործեն անշահախնդիր,

բ) ձեռնպահ մնան քվեարկությունից այն դեպքում, երբ առկա են ինչ-որ կասկածներ արտոնագրման թեկնածուի նկատմամբ իրենց անկախության վերաբերյալ կամ շահերի բախման դեպքում: Այս կապակցությամբ արտոնագրման մարմնի անդամի անկախությունը չի կարող երաշխավորվել,

եթե նա կամ իր ընտանիքի որևէ անդամ (կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, եղբայր կամ քույր) հանդիսանում է արտոնագրման թեկնածուի անդամ, բաժնետեր, բիզնես-գործընկեր, հովանավոր կամ խորհրդատու: Վերոնշյալ ցանկը ծառայում է պարզաբանման նպատակների համար և սպառիչ չէ;

գ) միաժամանակ չհանդիսանան ՀՖՖ արտոնագրման պատասխանատու և/կամ ակումբի արտոնագրման ադմինիստրացիայի անդամ,

դ) միաժամանակ չհանդիսանան ՀՖՖ որևէ իրավական մարմնի անդամ,

ե) միաժամանակ չհանդիսանան ՀՖՖ Գործադիր Կոմիտեի անդամ,

զ) միաժամանակ չհանդիսանան ակումբների աշխատակից կամ ղեկավար անձնակազմի անդամ,

է) ներառի նվազագույնը մեկական որակավորված իրավաբան/իրավական հարցերով փորձագետ և ֆինանսական փորձագետ, ով ունի հաշվապահական հաշվառման/աուդիտորի բարձրագույն կրթության դիպլոմ կամ հավաստագիր՝ թողարկված և ճանաչված ՀՀԱԱ-ի անդամների կողմից:

6.07. Ակումբների արտոնագրման մարմինների քվորումն ապահովում է նվազագույնը՝

ա) 7 անդամներից 4-ը Ակումբների արտոնագրման կոմիտեի համար,

բ) 7 անդամներից 5-ը Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեի համար:

Հավասար ձայների դեպքում ակումբների արտոնագրման մարմնի նախագահի ձայնը որոշիչ է:

6.08. Ակումբների արտոնագրման մարմինները պետք է գործեն՝ համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի կողմից սահմանված գործընթացային կանոնների, որոնք կարգավորում են նվազագույնը հետևյալ չափանիշները՝

ա) վերջնաժամկետները, որոնք սահմանվում են ամենաուշը յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի կողմից – –հրապարակված առանձին փաստաթղթով և հաղորդվում բոլոր կողմերին, ովքեր ներգրավված են ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգում,

բ) իրավահավասարության սկզբունքների պաշտպանությունը (տե՛ս Հոդված 10),

գ) ներկայացուցչությունը, որն իրենից ենթադրում է, որ յուրաքանչյուր արտոնագրման թեկնածու պետք է ունենա առնվազն մեկ ներկայացուցիչ՝ ՀՖՖ-ի Արտոնագրման բաժնի հետ կապ պահելու համար:Ավելին, արտոնագրման թեկնածուն կարող է ներկայացնել իրավաբանական կրթությամբ անձ կամ

բարձր որակավորում ունեցող աուդիտոր: Ակումբների արտոնագրման մարմինները կարող են կողմի ներկայացուցչից պահանջել ներկայացնել վերջինիս մասնագիտական որակավորման ապացույց,

դ) Լսելի լինելու իրավունքը, որը երաշխավորվում է բոլոր արտոնագրման թեկնածուների համար արտոնագրման գործընթացի ընթացքում,

ե) պաշտոնական լեզուները՝

- ներքին հաղորդակցման համար՝ հայերեն
- արտաքին հաղորդակցման համար (ՈՒԵՖԱ, այլ ազգային ասոցիացիաներ և այլն)՝ անգլերեն և ռուսերեն,

զ) Սույն Կանոնակարգի այլ դրույթներին չհակասելու դեպքում բողոքարկման դիմում ներկայացնելու համար սահմանվում են հետևյալ ժամկետները՝

Բողոքարկման ժամկետը արտոնագրի մերժման որոշումը պաշտոնապես հայտարարելուց հետո հինգ օր է: Բողոքարկման դիմում ներկայացնելու ժամկետը լրանում է վերջնաժամկետի օրը՝ 18:00-ին: Բողոքարկման դիմումը հնարավոր է ներկայացնել արտոնագրի մերժման որոշման և վերջինիս մասին պաշտոնապես տեղեկացնելուն հաջորդող աշխատանքային օրվանից սկսած: Ոչ աշխատանքային օրերը և ՀՀ պետական տոները չեն ընդգրկվում հաշվարկման մեջ:

է) բողոքարկման արդյունքը,

ը) պահանջվող ապացույցի տեսակը. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի կողմից տվյալ գործի համար պահանջվող ցանկացած տիպի գրավոր ապացույց,

թ) ապացուցելու պարտականությունը. արտոնագրման թեկնածուն որոշում կայացնող մարմնի պահանջով պարտավոր է ներկայացնել ապացույցներ (լրացուցիչ տեղեկատվություն / փաստեր),

ժ) որոշման արձանագրությունը, որը պետք է լինի գրավոր և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- թողարկման վայրը, ամսաթիվը,
- որոշում կայացնող մարմնի անդամների անունները,
- շահագրգիռ կողմերի անունները և նրանց ներկայացուցիչների անունները,
- կողմերի բողոքները,
- որոշման դե ֆակտո և դե յուրե պատճառները,
- բողոքարկման ակտը,

- որոշում կայացնող մարմնի նախագահի ստորագրությունը,
- անհրաժեշտության դեպքում բողոքարկման իրավունքի մասին ցուցում՝ ներառյալ բողոքարկման դիմումի ձևը, մարմինը, թե ում պետք է դիմել և սահմանված բողոքարկման վերջնաժամկետը:

Որոշումը պետք է պաշտոնապես ներկայացվի շահագրգիռ կողմերին (ակումբներ, ՁԼՄ-ներ և այլն) մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

ի) հիմքեր բողոքարկումների համար.

բողոքարկման դիմում կարող է ներկայացվել միայն հետևյալ պատճառներով.

- Ակումբների արտոնագրման մարմինը արտոնագրման թեկնածուին հնարավորություն չի տվել անաչառորեն շարադրելու գործի հանգամանքները,
- Ակումբների արտոնագրման մարմինը ձեռնարկել է սահմանադրությանը հակասող գործողություններ,
- Ակումբների արտոնագրման մարմինը չի անցկացրել արդար լսումներ կամ էլ խախտել է դիմողի ձայնի իրավունքը,
- Ակումբների արտոնագրման մարմնի կայացրած որոշումը դե յուրե սխալ էր, որը խախտել է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգը և/կամ բնական արդարադատությունը և/կամ խեղաթյուրել է այն,
- Կարգապահական պատժամիջոցներն անհիմն խիստ են կամ էլ անտեղի:

լ) բողոքարկման դիմումի բովանդակությունը և ձևը. բողոքարկման դիմումը պետք է լինի գրավոր և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- որ որոշման դեմ է բողոքարկումը,
- բողոքարկման պատճառը,
- միջնորդությունները,

Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են ակումբների արտոնագրման կոմիտեում (1-ին ատյանի մարմնում)

Բողոքարկման կոմիտեն չի քննում ակումբների արտոնագրման կոմիտեի կողմից մերժված արտոնագրի դեմ բողոքը՝ որպես գործի կնկնակի վարում, բացառությամբ սույն հոդվածի 6.08 կետի ի) ենթակետում նշված հիմքով բողոքներից:

խ) քննարկում (լսումներ). քննարկումը (լսումները) տեղի է ունենում փակ դռների հետևում և ընդգրկում է որոշում կայացնող և քվորում ապահովող անդամների ցուցումները

ծ) գործընթացի արժեքը /ադմինիստրատիվ վճարներ/կանխավճարներ՝

- Ակումբների արտոնագրման կոմիտեի լսումներն անվճար են,
- Ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտեի լսումները կազմում են 100,000 ՀՀ դրամ:

Հոդված 7. Պատասխանատվության միջոցների ցանկը

7.01. Գնահատման գործընթացի պատշաճ իրականացման համար ՀՖՖ-ն

ա) ստեղծել է պատասխանատվության միջոցների ցանկ (ներկայացված է ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգում) ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի համար: Այս պատժամիջոցները վերաբերում են Հոդված 15-ում նշված չափանիշները չբավարարելուն:

բ) հղում է կատարում ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգում առկա պատժամիջոցների ցանկին՝ ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգի ցանկացած այլ խախտման դեպքում:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն է որոշում արտոնագրման թեկնածուների/արտոնագրվածների նկատմամբ կիրառել տվյալ պատասխանատվության միջոցները:

Հոդված 8. Արտոնագրման հիմնական գործընթացը

8.01. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը սահմանել է հիմնական գործընթաց ակումբների արտոնագրման չափանիշի ստուգման համար, և այսպիսով վերահսկում է արտոնագրերի տրամադրումը: Այն բաղկացած է 2 մասից (մեկը՝ Ազգային արտոնագրի համար, մյուսը՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագրի համար) և նկարագրված է Հավելված 1-ում:

8.02. ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի հիմնական գործընթացը սկսվում է ՀՖՖ արտոնագրման պատասխանատուի կողմից ակումբների արտոնագրման փաստաթղթերի ստեղծմամբ (դեկտեմբերին) և ավարտվում ՈՒԵՖԱ-ի աշխատակազմին արտոնագրման որոշումների ցուցակի ներկայացմամբ մինչև ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված վերջնաժամկետը (սկզբունքորեն մայիսի 31-ը):

8.03. Արտոնագրման հիմնական գործընթացը բաղկացած է հետևյալ նվազագույն հիմնական քայլերից.

ա) արտոնագրման փաստաթղթերի ներկայացում արտոնագրման թեկնածուներին,

բ) արտոնագրման փաստաթղթերը վերադարձ արտոնագրողին,

գ) արտոնագրման բաժնի կողմից փաստաթղթերի գնահատում,

դ) գրավոր կերպով ներկայացուցչական նամակի ներկայացում արտոնագրողին,

ե) որոշում կայացնող մարմինների կողմից գնահատում և որոշում,

զ) յուրաքանչյուր արտոնագրային որոշման ներկայացում ՈՒԵՖԱ-ին՝ յուրաքանչյուր որոշման վերջնական և պարտադիր դառնալուց հետո յոթ օրվա ընթացքում, և ամեն դեպքում ոչ ուշ, քան արտոնագրման մասին որոշումների վերջնական ցուցակը ՈՒԵՖԱ-ին ներկայացնելու վերջնաժամկետը (մայիսի 31):

8.04. Ինչպես նշված է Հոդված 6.08-ի ա) կետում, վերը նշված կարևոր քայլերի վերջնաժամկետները հստակորեն սահմանված են ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի կողմից և ժամանակին ներկայացվում են շահագրգիռ ակումբների ուշադրությանն ամենաուշը մինչև դեկտեմբեր ամսվա վերջը:

8.05. ՈՒԵՖԱ-ի արտոնագիր ստացած բոլոր ակումբները, որոնք մարզական ելույթների արդյունքում իրավունք են ստացել մասնակցելու ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին, պետք է բավարարեն ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման և ֆինանսական կայունության կանոնակարգի ՄԱՍ III-ում (Chapter III) սահմանված վերահսկողության գործընթացի պահանջները:

Հոդված 9. Գնահատման գործընթացը

9.01. Գնահատման գործընթացը սահմանվում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի կողմից՝ իր ստուգաթերթերում և գործընթացներում՝ բացառությամբ այն կետերի, որոնք պետք է վերահսկեն ֆինանսական չափանիշների կատարումը: Այս

գործընթացների համար գոյություն ունեն գնահատման հատուկ ընթացակարգեր՝ սահմանված Հավելված 7-ում:

Հոդված 10. Իրավահավասարությունը և գաղտնիությունը

10.01. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը ապահովում է արտոնագրման բոլոր թեկնածուների իրավահավասարությունն արտոնագրման հիմնական գործընթացի ողջ ընթացքում:

10.02. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինն արտոնագրման թեկնածուներին երաշխավորում է լիակատար գաղտնիություն արտոնագրման գործընթացի ողջ ընթացքում իր կողմից ներկայացված ցանկացած տեղեկատվության համար: Ցանկացած անձ, ով մասնակցում է արտոնագրման գործընթացին որպես արտոնագրող կամ նշանակված է Ակումբների արտոնագրման բաժնի կողմից, մինչ իր աշխատանքը սկսելը պարտավոր է ստորագրել գաղտնիության համաձայնագիր:

ԳԼՈՒԽ 2. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ և ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ

Հոդված 11. Արտոնագրման թեկնածուի սահմանումը և երեք տարվա կանոնը

11.01. Արտոնագրման թեկնածու կարող է լինել միայն ֆուտբոլային ակումբը, այսինքն՝ իրավաբանական անձ, ով ազգային և միջազգային ակումբային մրցաշարերին մասնակցող տղամարդկանց ֆուտբոլի առաջին թիմի պատասխանատուն է, և ով

ա) գրանցված է որպես ՀՖՖ-ի անդամ (այսուհետև՝ գրանցված անդամ), կամ

բ) գրանցված անդամի հետ ունի պայմանագրային հարաբերություններ (այսուհետև՝ «ֆուտբոլային ձեռնարկություն»):

11.02. Արտոնագրման ժամանակաշրջանի մեկնարկի դրությամբ անդամագրությունը և/կամ պայմանագրային հարաբերությունները (եթե այդպիսիք առկա են) պետք է առնվազն ունենան երեք շարունակական մրցաշրջանի վաղեմություն ՈՒԵՖԱ-ի Արտոնագրի համար և առնվազն մեկ մրցաշրջանի վաղեմություն՝ Ազգային արտոնագրի համար: Արտոնագրման թեկնածուների տղամարդկանց ֆուտբոլի առաջին թիմերը պետք է մասնակցեն պաշտոնական մրցումներին առնվազն երեք շարունակական մրցաշրջան ՈՒԵՖԱ-ի արտոնագրի համար և առնվազն մեկ մրցաշրջան՝ Ազգային արտոնագրի համար:

11.03. Արտոնագրման թեկնածուի/արտոնագրվողի իրավական ձևի, իրավական խմբի կառուցվածքի (ներառյալ այլ կազմակերպության հետ միաձուլում կամ ֆուտբոլային գործունեության փոխանցում այլ կազմակերպության) կամ ինքնության (ներառյալ շտաբ- գրասենյակի, ակումբի անվանման, տարբերանշանի կամ գույների) ցանկացած փոփոխության մասին պետք է անհապաղ տեղեկացվի ՀՖՖ-ին, իսկ ՀՖՖ-ն, իր հերթին, պետք է անհապաղ տեղեկացնի ՈՒԵՖԱ-ին:

11.04. Արտոնագրման թեկնածուի/արտոնագրվածի իրավական ձևի, իրավական խմբի կառուցվածքի (ներառյալ այլ կազմակերպության հետ միաձուլում կամ ֆուտբոլային գործունեության փոխանցում այլ կազմակերպության) կամ ինքնության (ներառյալ շտաբ-գրասենյակի, ակումբի անվանման, տարբերանշանի կամ գույների) ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունեցել արտոնագրման ժամանակաշրջանի մեկնարկին նախորդող երեք մրցաշրջանների ընթացքում՝ ի վնաս մրցաշարի ամբողջականությանը կամ ակումբի պատմությանն ու ժառանգությանը, մարզական արդյունքների տեսանկյունից արտոնագրման թեկնածուի որակավորումը մրցաշարին հեշտացնելու կամ արտոնագրման

թեկնածուի՝ արտոնագրի ստացումը հեշտացնելու նպատակով, համարվում է անդամակցության կամ պայմանագրային հարաբերությունների (եթե այդպիսիք կան) ընդհատում սույն դրույթի իմաստով:

11.05. Երեք տարվա կանոնից (UEFA Three-year rule) բացառություններ կարող են տրվել ՈՒԵՖԱ-ի Ակումբների Ֆինանսական Վերահսկողության մարմնի կողմից՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի Ակումբների Արտոնագրման և Ֆինանսական Կայունության կանոնակարգի Հավելված Ա-ի (Annex A):

Հոդված 12. Արտոնագրման թեկնածուի ընդհանուր պարտականությունները

12.01. Արտոնագրման թեկնածուն արտոնագրողին պետք է ներկայացնի հետևյալը՝

ա) ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնք լիովին հաստատում են արտոնագրման պարտականությունների կատարման փաստը, և

բ) արտոնագրման որոշում կայացնելու համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթուղթ:

12.02. Վերոնշյալը ներառում է տեղեկություն այն հաշվետու կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի վերաբերյալ պետք է տրամադրվի տեղեկատվություն մարզական, ֆուտբոլի սոցիալական պատասխանատվության. ենթակառուցվածքային, կադրային և վարչական, իրավական, ֆինանսական չափանիշներով:

12.03. Արտոնագրողին պետք է անհապաղ գրավոր տեղեկացնել արտոնագրման համար դիմումը ներկայացնելուց հետո տեղի ունեցած ցանկացած իրադարձության մասին, եթե վերջինս նախկինում ներկայացված տեղեկատվության մեջ էական փոփոխությունների պատճառ է հանդիսանում (ներառյալ արտոնագրման թեկնածուի իրավական ձևի, իրավական խմբի կառուցվածքի, սեփականության կամ ինքնության որևէ փոփոխություն):

Հոդված 13. Արտոնագրերը՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը և Ազգային արտոնագիրը

13.01. Այն ակումբները, որոնք որակավորվում են ՈՒԵՖԱ-ի Ակումբային մրցաշարերին իրենց մարզական արդյունքների հիման վրա, հաջորդ մրցաշրջանի համար պետք

է ձեռք բերեն ՀՖՖ-ի կողմից տրված արտոնագիր՝ համաձայն ՀՖՖ-ի ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ բացառությամբ Հոդված 14-ում նշված դեպքերի:

13.02. Այն ակումբները, որոնք որակավորվում են Հայաստանի Պրեմիեր լիգային մարզական արդյունքների հիման վրա, պետք է ձեռք բերեն ՀՖՖ կողմից տրվող Ազգային արտոնագիր՝ համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի:

13.03. ՈՒԵՖԱ-ի և Ազգային արտոնագրերի ժամկետները, առանց նախապես զգուշացման, սպառվում են այն մրցաշրջանի վերջում, որի ընթացքում դրանք շնորհվել են:

13.04. ՈՒԵՖԱ-ի և Ազգային արտոնագրերը ենթակա չեն փոխանցման:

13.05. ՈՒԵՖԱ-ի և Ազգային արտոնագրերը կարող են հետ կանչվել ՀՖՖ-ի Արտոնագրման որոշում կայացնող մարմինների կողմից, եթե

ա) արտոնագրի տրամադրման համար անհրաժեշտ որևէ պայման այլևս չի բավարարվում, կամ

բ) արտոնագրման թեկնածուն խախտում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգով սահմանված իր պարտականություններից որևէ մեկը:

13.06. Արտոնագրի հետ կանչման դեպքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը պետք է համապատասխանաբար այդ մասին տեղեկացնի ՈՒԵՖԱ-ին:

Հոդված 14. ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու հատուկ թույլտվությունը

14.01. Եթե ակումբն իր մարզական արդյունքների հիման վրա իրավունք է ստացել մասնակցելու ՈՒԵՖԱ-ի ակումբային որևէ մրցաշարի, սակայն ընդհանրապես չի անցել արտոնագրման որևէ գործընթաց կամ անցել է այնպիսինը, որը քիչ համարժեք է կամ ընդհանրապես համարժեք չէ այն գործընթացին, ինչը կիրառվում է ՀՖՖ-ի կողմից Հայաստանի Պրեմիեր լիգայի ակումբներին ՈՒԵՖԱ-ի արտոնագիր շնորհելու նպատակով (օրինակ՝ ակումբը հանդես է գալիս ՀՖՖ Առաջին խմբի առաջնությունում), ապա ՀՖՖ-ն, նման ակումբի անունից, իրավունք ունի դիմել

ակումբների արտոնագրման համակարգի արտակարգ կիրառման համար՝ համաձայն Հավելված 2-ի:

14.02. Հիմնվելով նման արտակարգ կիրառման վրա՝ ՈՒԵՖԱ-ն կարող է հատուկ թույլտվություն տալ ակումբին տվյալ ակումբային մրցաշարին մասնակցելու համար՝ ելնելով ՈՒԵՖԱ-ի համապատասխան ակումբային մրցաշարի կանոնակարգից: Նման արտակարգ կիրառումը կտարածվի միայն տվյալ արտոնագրման թեկնածուի վրա և միայն նշված ժամանակաշրջանի համար:

ԳԼՈՒԽ 3. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հոդված 15. Ընդհանուր դրույթները

ՈՒԵՖԱ-ի արտոնագիր

15.01. Ակումբները պետք է բավարարեն սույն կանոնակարգի Գլուխ 3-ում սահմանված չափանիշները՝ բացառությամբ 15.02 կետում նշվածների, որպեսզի վերջիններիս շնորհվի ՈՒԵՖԱ-ի արտոնագիր՝ ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգային, ՈՒԵՖԱ-ի Եվրոպա լիգային կամ ՈՒԵՖԱ-ի Կոնֆերենցիաների լիգային մասնակցելու համար:

15.02. Հոդված 19-ում, Հոդված 20.02-ում, Հոդված 22.02, Հոդված 23-ից մինչև Հոդված 30-ում, Հոդված 33-ում, Հոդված 43-ից մինչև Հոդված 46-ում, Հոդված 54-ում, Հոդված 57-ից մինչև Հոդված 61-ում, Հոդված 71-ում (բոլորը միասին՝ Բ կարգի պահանջներ) նշված չափանիշները չբավարարելը չի հանգեցնի ՈՒԵՖԱ-ի արտոնագրի մերժմանը, սակայն կհանգեցնի ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված պատասխանատվության միջոց(ներ)ի կիրառման:

Ազգային արտոնագիր

15.03. Ակումբները պետք է բավարարեն Գլուխ 3-ում սահմանված չափանիշները՝ բացառությամբ 15.04 կետում նշվածների, որպեսզի վերջիններիս շնորհվի Ազգային արտոնագիր Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցելու համար:

15.04. Հոդված 19-ում, Հոդված 20.02-ում, Հոդված 22.02, Հոդված 23-ից մինչև Հոդված 30-ում, Հոդված 33-ում, Հոդված 43-ից մինչև Հոդված 46-ում, Հոդված 54-ում, Հոդված 57-ից մինչև Հոդված 61-ում, Հոդված 71-ում (բոլորը միասին՝ Բ կարգի պահանջներ) նշված չափանիշները չբավարարելը չի հանգեցնի Ազգային արտոնագրի մերժմանը, սակայն կհանգեցնի ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված պատասխանատվության միջոց(ներ)ի կիրառման:

ՄԱՐԶԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հոդված 16. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագիրը

16.01. Արտոնագրման թեկնածուն պետք է ունենա մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման գրավոր ծրագիր՝ հաստատված ՀՖՖ-ի կողմից:

16.02. ՀՖՖ-ն պետք է պարբերաբար ստուգի հաստատված մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի կատարումը և գնահատի վերջինիս որակը:

16.03. Ծրագիրը պետք է ներառի առնվազն հետևյալ բնագավառները՝

ա) մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման նպատակային խնդիրներ և տեսլական;

բ) մանկապատանեկան սեկտորի կազմակերպչական նկարագիր (կազմակերպչական կառուցվածք, շահագրգիռ մարմիններ, հարաբերություններ արտոնագրման թեկնածուի հետ, մանկապատանեկան թիմեր և այլն);

գ) աշխատակազմ (տեխնիկական, բժշկական, վարչական և այլն)՝ անհրաժեշտ մինիմալ որակավորումներով;

դ) ենթակառուցվածք (ուսումնամարզական շինություններ, խաղադաշտեր և այլն);

ե) ֆինանսական ռեսուրսներ (բյուջե, աջակցություն արտոնագրման թեկնածուի, ֆուտբոլիստների կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլքի կողմից);

զ) տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ֆուտբոլային կրթություն (խաղային հմտությունները, տեխնիկական, տակտիկական և ֆիզիկական);

է) կրթական ծրագրեր (Խաղի կանոնների, հակախթանիչային, բարեվարքության, ռասիզմի դեմ պայքարի վերաբերյալ);

ը) պատանի ֆուտբոլիստներին բժշկական օգնություն (ներառյալ բժշկական զննումները հավաստող փաստաթուղթ)

թ) արդյունքների գնահատման և առաջադրված խնդիրների լուծման նպատակով ստուգման գործընթացի և հետադարձ կապի իրականացում

ժ) ծրագրի գործունեության ժամկետը (նվազագույնը երեք տարի, առավելագույնը՝ յոթ):

ի) մասսայական ֆուտբոլի զարգացման տեսլականը, դրա ուղղությամբ կատարվող և ապագայում պլանավորված քայլերի նկարագիրը:

16.04. Արտոնագրման թեկնածուն պետք է նաև երաշխավորի հետևյալը՝

ա) մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր ֆուտբոլիստ, համաձայն 14.04.1999թ.-ի «Կրթության մասին» ՀՀ Օրենքի, կարող է հաճախել հանրակրթական դպրոցի պարտադիր դասընթացներին,

բ) մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրում ընդգրկված ֆուտբոլիստներին ոչինչ պետք է չխոչընդոտի իրենց՝ ոչ ֆուտբոլային կրթությունը շարունակելու գործում:

16.05. Արտոնագրման թեկնածուն պետք է ՀՖՖ-ին ներկայացնի արտոնագրման մրցաշրջանի նախորդող օրացուցային տարվա ընթացքում ՄՖԶԾ-ի շրջանակներում ակումբի գործունեության համառոտ ամփոփում/նկարագիր, որտեղ ներառված կլինեն կատարված քայլերը, ֆինանսական ծախսերը և տվյալ ծախսերի ոլորտային բացվածքը:

Հոդված 17. Մանկապատանեկան թիմերը

17.01. Արտոնագրման թեկնածուն իր կամ իր իրավական խմբի կառուցվածքում ներառված այլ կազմակերպության կազմում պետք է ունենա նվազագույնը հետևյալ մանկապատանեկան թիմերը՝

ա) առնվազն չորս մանկապատանեկան թիմ 12-18 տարիքային խմբում;

բ) առնվազն մեկ մանկապատանեկան թիմ մինչև 12 տարեկան տարիքային խմբում;

գ) առնվազն չորս մանկապատանեկան թիմ՝ ցանկացած տարիքային խմբում

Ընդհանուր առմամբ, արտոնագրման թեկնածուն իր կամ իր իրավական խմբի կառուցվածքում ներառված այլ կազմակերպության կազմում պետք է ունենա ընդհանուր թվով 9 (ինը) մանկապատանեկան թիմ:

17.02. Յուրաքանչյուր մանկապատանեկան թիմ պետք է մասնակցի ազգային, շրջանային և տեղական մակարդակով կազմակերպված և ՀՖՖ-ի կողմից ճանաչված պաշտոնական մրցաշարերին::

Հոդված 18. Կանանց ֆուտբոլի թիմը

18.01. Արտոնագրման թեկնածուն իր կազմում պետք է ունենա առնվազն մեկ կանանց ֆուտբոլի թիմ, որը մասնակցում է Հայաստանի կանանց ֆուտբոլի Բարձրագույն կամ Առաջին խմբի առաջնություններից որևէ մեկին:

Հոդված 19. Ֆուտզալի թիմը

19.01. Արտոնագրման թեկնածուն իր կազմում պետք է ունենա առնվազն մեկ ֆուտզալի թիմ, որը մասնակցում է ՀՖՖ կողմից կազմակերպված ազգային, շրջանային կամ տեղական մակարդակով կազմակերպած պաշտոնական մրցաշարի:

Հոդված 20. Ֆուտբոլիստների բժշկական խնամքը

20.01. Արտոնագրման թեկնածուն պետք է մշակի և վարի այնպիսի քաղաքականություն, ըստ որի գլխավոր թիմի կազմում հանդես գալու իրավունք ունեցող բոլոր ֆուտբոլիստները կանցնեն ամենամյա բժշկական զննում՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի Բժշկական կանոնակարգով սահմանված համապատասխան դրույթների:

20.02. Արտոնագրման թեկնածուն պետք է մշակի և վարի այնպիսի քաղաքականություն, ըստ որի, 12 տարեկանից բարձր բոլոր երիտասարդ ֆուտբոլիստները կանցնեն տարեկան բժշկական հետազոտություն՝ համաձայն ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների և ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգերով սահմանված համապատասխան դրույթների:

Հոդված 21. Ֆուտբոլիստների գրանցումը

21.01. Արտոնագրման թեկնածուի 10 տարեկանից բարձր բոլոր ֆուտբոլիստները պետք է գրանցվեն ՀՖՖ-ում՝ համաձայն ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համապատասխան դրույթների:

Հոդված 22. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների հետ գրավոր պայմանագիրը

22.01. Արտոնագրման թեկնածուի յուրաքանչյուր պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ պետք է գրավոր պայմանագիր կնքի վերջինիս հետ՝ համաձայն ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համապատասխան դրույթների:

22.02. Արտոնագրման թեկնածուն պետք է ապահովի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների հետ կնքված պայմանագրերի համապատասխանելիությունը Եվրոպական Միության և ՈՒԵՖԱ-ի մնացած տարածաշրջանում պրոֆեսիոնալ ֆուտբոլի ասպարեզում ֆուտբոլիստների ստանդարտ պայմանագրերի նվազագույն պահանջներին վերաբերող Համաձայնագրի (Agreement regarding the minimum requirements for standard player contracts in the professional football sector in European Union and the rest of the UEFA territory (MRSPC)) համապատասխան դրույթներին:

Հոդված 23. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարձակալությունը

23.01. Արտոնագրման թեկնածուն պետք է առաջնորդվի ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի դրույթներով՝ կապված պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարձակալության հետ:

Հոդված 24. Մրցավարական հարցերը և խաղի կանոնները

24.01. Արտոնագրման թեկնածուն պետք է ապահովի, որ իր առաջին թիմի անդամները (ֆուտբոլիստներ, մարզիչներ և տեխնիկական անձնակազմի այլ անձինք) արտոնագրման մրցաշրջանին նախորդող 12 ամիսների ընթացքում մասնակցեն մրցավարական հարցերին վերաբերող խորհրդակցության կամ նմանատիպ այլ միջոցառման՝ կազմակերպված ՀՖՖ-ի կողմից կամ նրա անմիջական միջնորդությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հոդված 25. Սոցիալական և բնապահպանական կայունության ռազմավարությունը

25.01. Արտոնագրման թեկնածուն պետք է սահմանի և կիրառի Սոցիալական և բնապահպանական կայունության ռազմավարություն՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի Սոցիալական և բնապահպանական կայունության ռազմավարություն 2030-ի և համապատասխան ՈՒԵՖԱ ուղեցույցների, առնվազն հետևյալ ոլորտների համար՝ հավասարություն և ընդգրկվածություն, ռասիզմի դեմ պայքար, երեխաների և երիտասարդների պաշտպանություն և բարեկեցություն, ֆուտբոլը բոլորի համար, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանություն:

Հոդված 26. Հավասարություն և ընդգրկվածություն

26.01. Արտոնագրման թեկնածուն պետք է սահմանի և կիրառի քաղաքականություն՝ ապահովելու հավասար իրավունքներ և հնարավորություններ բոլոր այն մարդկանց համար, ովքեր հետևում և նպաստում են արտոնագրման թեկնածուի կողմից կազմակերպվող ֆուտբոլային գործունեությանը:

Հոդված 27. Ռասիզմի դեմ պայքար

27.01. Արտոնագրման թեկնածուն պետք է սահմանի և կիրառի ռասիզմի դեմ պայքարի քաղաքականություն և երաշխավորի, որ արտոնագրման թեկնածուի վարած բոլոր քաղաքականությունները, ծրագրերն ու գործելակերպն իրականացվում են առանց որևէ տեսակի խտրականության:

Հոդված 28. Երեխաների պաշտպանվածություն և բարեկեցություն

28.01. Արտոնագրման թեկնածուն պետք է սահմանի և կիրառի երիտասարդ ֆուտբոլիստների պաշտպանվածության, անվտանգության և բարեկեցության ապահովման վերաբերյալ քաղաքականություն և ապահովի նրանց անվտանգ

միջավայրում գտնվելն արտոնագրման թեկնածուի կողմից կազմակերպված միջոցառումների մասնակցության ժամանակ:

Հոդված 29. Շրջակա միջավայրի պաշտպանություն

29.01. Արտոնագրման թեկնածուն պետք է սահմանի և իրականացնի այնպիսի քաղաքականություն, որով կբարելավի իր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և կայունությունը՝ միջոցառումների կազմակերպման, ենթակառուցվածքների կառուցման և կառավարման հետ կապված:

Հոդված 30. Ֆուտբոլը բոլորի համար

30.01. Արտոնագրման թեկնածուն պետք է սահմանի և կիրառի այնպիսի քաղաքականություն, որ արտոնագրման թեկնածուի կողմից կազմակերպվող ֆուտբոլային գործունեությանը հետևելն ու դրան նպաստելը հասանելի և հաճելի լինի բոլորի համար՝ անկախ հաշմանդամությունից կամ անկարողության գործոններից:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հոդված 31. ՈՒԵՖԱ-ի ակումբային և ազգային մրցաշարերի (պրոֆեսիոնալ, մանկապատանեկան և սիրողական) անցկացման համար հաստատված մարզադաշտը

31.01. Արտոնագրման թեկնածուն իր տրամադրության տակ պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի, Հայաստանի Պրեմիեր լիգայի, մանկապատանեկան և սիրողական առաջնությունների անցկացման համար նախատեսված մարզադաշտ/մարզադաշտեր, որը/որոնք պետք է գտնվի/գտնվեն ՀՀ տարածքում և հաստատված լինի/լինեն ՀՖՖ-ի կողմից՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի Մարզադաշտերի ենթակառուցվածքների կանոնակարգի և ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի:

31.02. Եթե արտոնագրման թեկնածուն չի հանդիսանում մարզադաշտի սեփականատերը, ապա նա պետք է ներկայացնի գրավոր պայմանագիր այն մարզադաշտի սեփականատիրոջ (սեփականատերերի) հետ, որը կարող է օգտագործել:

31.03. Պետք է երաշխավորվի, որ առաջիկա արտոնագրման մրցաշրջանի ընթացքում մարզադաշտում(երում) հնարավոր է անցկացնել ՈՒԵՖԱ-ի և Հայաստանի Պրեմիեր լիգայի տնային հանդիպումները:

31.04. ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի համար նախատեսված մարզադաշտը(երը) պետք է բավարարի ՈՒԵՖԱ-ի Մարզադաշտի ենթակառուցվածքի կանոնակարգի նվազագույն պահանջները և պետք է դասակարգվի որպես ՈՒԵՖԱ-ի առնվազն 2-րդ կատեգորիայի մարզադաշտ:

31.05. Հայաստանի Պրեմիեր լիգայի անցկացման համար նախատեսված մարզադաշտը(երը) պետք է բավարարի/են ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի գործող խմբագրության նվազագույն պահանջները:

Հոդված 32. Ուսումնամարզական շինությունները և դրանց հասանելիությունը

32.01. Արտոնագրման թեկնածուն ամբողջ տարվա ընթացքում պետք է իր տրամադրության տակ ունենա ուսումնամարզական շինություններ, որոնք կծառայեն թիմերի ամառային և ձմեռային մարզումների անցկացման նպատակով:

32.02. Եթե արտոնագրման թեկնածուն չի հանդիսանում ուսումնամարզական շինությունների սեփականատերը, ապա նա պետք է ներկայացնի այդ շինությունների սեփականատիրոջ (սեփականատերերի) հետ կնքած գրավոր պայմանագիր:

32.03. Պետք է երաշխավորվի, որ արտոնագրման թեկնածուին պատկանող բոլոր թիմերը հաջորդ արտոնագրման մրցաշրջանի ընթացքում կարող են օգտվել ուսումնամարզական շինություններից՝ հաշվի առնելով արտոնագրման թեկնածուի մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագիրը:

Հոդված 33. Ուսումնամարզական շինությունները և անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքները

33.01. Ուսումնամարզական շինությունների ենթակառուցվածքը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջները.

ա) մեկ փակ և մեկ բացօթյա շինություն;

բ) տվյալ շինությունների առանձնահատկություններ (օրինակ՝ քանակ, խաղադաշտերի չափեր և այլն)

գ) հանդերձարան

դ) բժշկական սենյակ՝ իր նվազագույն պարագաներով հանդերձ (օր.՝ դեֆիբրիլյատոր և առաջին բժշկական օգնության պայուսակ)

ԿԱԴՐԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հոդված 34. Աշխատակազմի գրանցումը

34.01. Արտոնագրման թեկնածուի բոլոր այն աշխատակիցները, ում արտոնագրման թեկնածուն ներկայացնում է Ակումբների արտոնագրման Կադրային և վարչական նվազագույն չափանիշների բավարարման համար, պետք է պատշաճ կերպով գրանցված լինեն ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում (FMS):

34.02. Արտոնագրման թեկնածուն իր աշխատակիցներին FMS-ում գրանցելու համար պետք է FMS համակարգի համապատասխան բաժնում մուտքագրի յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսված մեկական փաստաթղթային փաթեթ: Որպես առաջին քայլ՝ արտոնագրման թեկնածուն աշխատողի աշխատանքային պայմանագիրը գրանցում է FMS համակարգում յուրաքանչյուր անձի օգտահաշվի «Պայմանագրեր» բաժնում: ՀՖՖ-ի կողմից հաստատումը ստանալուց հետո, որպես երկրորդ քայլ, արտոնագրման թեկնածուն FMS համակարգում յուրաքանչյուր անձի օգտահաշվի «Գրանցումներ» բաժնում ներկայացնում է պաշտոնական հրահանգը (աշխատանքի նկարագրությունը), անձը հաստատող փաստաթուղթը և մասնագիտական որակավորման վկայականը (օր.՝ մարզչական արտոնագիր, բարձրագույն կրթության դիպլոմ և այլն): Աշխատակիցը համարվում է FMS համակարգում լիարժեք գրանցված միայն վերը նշված երկու քայլերը հաջողությամբ կատարելուց հետո:

34.03. Փաթեթում ներառված բոլոր փաստաթղթերը պետք է ունենան հերթական համար և կազմման ամսաթիվ: Հերթական համարի բացակայության դեպքում Ակումբների արտոնագրման բաժինը կարող է սեփական հայեցողությամբ և ներքին ընթացակարգի համաձայն համարակալել փաստաթղթերը:

34.04. Բոլոր դեպքերում, ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը կարող է արտոնագրման թեկնածուից պահանջել հավելյալ այլ փաստաթղթեր՝ արտոնագրման գործընթացի շրջանակներում, որոնք պետք է ուղարկվեն ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի licensing@ffa.am պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

Հոդված 35. Ակումբի կոնտակտային տվյալներ

35.01. Արտոնագրման թեկնածուն պետք է ունենա պաշտոնական կայք, որի մասին արտոնագրման փաստաթղթերի հետ միասին պետք է առանձին գրությամբ ներկայացնի արտոնագրողին: Այդ գրությունը պետք է պարունակի նաև հետևյալը.

- Իրավաբանական հասցե
- Գործունեության հասցե
- Պաշտոնական վեբ կայքի հասցե
- Էլեկտրոնային հասցե
- Հեռախոսահամար
- Սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի հղումներ

Հոդված 36. Գործադիր տնօրենը

36.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի գործադիր տնօրեն կամ գործադիր տնօրենի հաստիքին համարժեք այլ հաստիք, որին նշանակված համապատասխան անձը պատասխանատու է օպերատիվ հարցերի կարգավորման համար:

Հոդված 37. Ֆինանսական հարցերով պատասխանատուն

37.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորում ունեցող ֆինանսական հարցերով պատասխանատու:

37.02. Ֆինանսական հարցերով պատասխանատուն պետք է ունենա հետևյալ որակավորումներից առնվազն մեկը՝

ա) հաշվապահի դիպլոմ և/կամ հավաստագիր,

բ) որակավորված աուդիտորի դիպլոմ և/կամ հավաստագիր,

գ) ֆինանսիստի դիպլոմ և/կամ որակավորում և/կամ հավաստագիր:

Հոդված 38. Մամուլի քարտուղարը

38.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի որակավորված մամուլի քարտուղար, ով պատասխանատու է ԶԼՄ-ների հետ համագործակցության, հանրությանը արտոնագրման թեկնածուի հետ կապված նորությունների

տեղեկացման, արտոնագրման թեկնածուի հանրային իմիջի ձևավորման և երկրպագուների ներգրավման համար:

38.02. Մամուլի քարտուղարը պետք է ունենա հետևյալ որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ստորև նշված մասնագիտություններից որևէ մեկի բարձրագույն կրթության դիպլոմ՝

- *Լրագրություն*
- *Հասարակայնության հետ կապեր*
- *Գովազդ*
- *Սոցիոլոգիա*

բ) լրագրության կամ հասարակայնության հետ կապերի ոլորտում առնվազն 3 տարվա մասնագիտական գործունեությունը հավաստող փաստաթղթեր

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքում, արտոնագրման թեկնածուի մամուլի քարտուղարը, մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը պարտավոր է մասնակցել ՀՖՖ Հաղորդակցության և մարքեթինգի դեպարտամենտի կողմից անցկացված որակավորման բարձրացման դասընթացին և ստանալ համապատասխան հավաստագիր: ՀՖՖ-ն պարտավորվում է նման դասընթաց անցկացնել առնվազն տարին մեկ անգամ՝ մինչև մարզական մրցաշրջանի մեկնարկը:

Մամուլի քարտուղարի վերոնշյալ հավաստագրի բացակայության դեպքում մարզական մրցաշրջանի մեկնարկից առաջ ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում տվյալ անձի գրանցումը չեղարկվելու է:

Հոդված 39. Առաջին թիմի Բժիշկը

39.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ բժիշկ, ով պատասխանատու է առաջին թիմի ֆուտբոլային հանդիպումների և մարզումների ընթացքում բժշկական ծառայությունների մատուցման, ինչպես նաև հակադոպինգային քաղաքականության համար:

39.02. Առաջին թիմի բժիշկը պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին և առնվազն ունենա

- բարձրագույն բժշկական կրթություն,

- առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական՝ սույն Հոդվածի 39.03 կետում նշված մասնագիտություններից մեկի և սպորտային բժշկություն (սպորտային բժիշկ) նեղ մասնագիտացման (կլինիկական օրդինատուրա կամ արտերկրյա համարժեք մագիստրատուրա) կամ սպորտային բժշկության նեղ մասնագիտացումով օրդինատուրայում սովորելու վերաբերյալ համապատասխան տեղեկանքի կամ Սպորտային բժշկության նեղ մասնագիտացման Fellowship ծրագրում սովորելու մասին տեղեկանքի միաժամանակյա առկայություն
- ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված ERC (European Resuscitation Council) կամ նրա կողմից ստեղծված Armenian Resuscitation Council-ի (Հայկական վերակենդանացման խորհուրդ) կամ Հայաստանում նրանց անունից Course Organisers/Centers (CO/CC) կողմից իրականացված BLS կրթական ծրագրի ակտիվ վկայական
- ավագ բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր, ինչպես նաև ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 613-Ն որոշմամբ «Շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող պարտադիր միջոցառումների ցանկում» ներառված՝ ա) Արտակարգ իրավիճակում առաջին բուժօգնության առնվազն 12 ՇՄԶ կրեդիտով և բ) Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների առնվազն 10 ՇՄԶ կրեդիտով և ՀՀ առողջապահության նախարարի կողմից վավերացված վկայականների առկայություն (սույն մասն անցումային շրջանով ամփոփվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ին)։

39.03. Պահանջվող առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական մասնագիտությունները հետևյալն են՝

- Ընտանեկան բժշկություն (ընտանեկան բժիշկ),
- Ներքին հիվանդություններ (թերապևտ),
- Սրտաբանություն
- Ֆիզիկական և վերականգնողական բժշկություն (վերականգնողաբան),
- Նյարդավիրաբուժություն (նյարդավիրաբույժ),
- Վնասվածքաբանություն և օրթոպեդիա՝ այդ թվում ուռուցքաբանություն (վնասվածքաբան օրթոպեդ),

- Անհետաձգելի բժշկություն (անհետաձգելի օգնության բժիշկ) հիմնական մասնագիտություն, այդ թվում «Մանկական անհետաձգելի բժշկություն»:

Հոդված 40. Առաջին թիմի Ֆիզիոթերապիստը

40.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ ֆիզիոթերապիստ, ով պատասխանատու է առաջին թիմի ֆուտբոլային հանդիպումների և մարզումների ժամանակ ֆուտբոլիստներին բժշկական օգնության ցուցաբերման և մերսման համար:

40.02. Առաջին թիմի Ֆիզիոթերապիստը պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին և առնվազն ունենա

- կինեզիոլոգ կամ ֆիզիոթերապիստ մասնագիտությամբ բարձրագույն կրթության կամ մերսողի միջին մասնագիտական կրթություն;

  Բուժակ-մերսողի միջին մասնագիտական կրթության դեպքում պարտադիր է նաև միջին բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր
- ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված ERC (European Resuscitation Council) կամ նրա կողմից ստեղծված Armenian Resuscitation Council-ի (Հայկական վերակենդանացման խորհուրդ) կամ Հայաստանում նրանց անունից Course Organisers/Centers (CO/CC) կողմից իրականացված BLS կրթական ծրագրի ակտիվ վկայական

Հոդված 41. Մանկապատանեկան թիմերի բժիշկը

41.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ բժիշկ, ով պատասխանատու է երիտասարդական թիմերին բժշկական ծառայությունների մատուցման համար (վերջինս կարող է լինել նույն անձը, ով պատասխանատու է առաջին թիմի համար):

41.02. Մանկապատանեկան թիմերի բժիշկը պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին և առնվազն ունենա

- բարձրագույն բժշկական կրթություն,
- Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական՝ սույն Հոդվածի 41.03 կետում նշված մասնագիտություններից մեկի և սպորտային բժշկություն (սպորտային

բժիշկ) նեղ մասնագիտացման (կլինիկական օրդինատուրա կամ արտերկրյա համարժեք մագիստրատուրա) կամ սպորտային բժշկության նեղ մասնագիտացումով օրդինատուրայում սովորելու վերաբերյալ համապատասխան տեղեկանքի կամ Սպորտային բժշկության նեղ մասնագիտացման Fellowship ծրագրում սովորելու մասին տեղեկանքի միաժամանակյա առկայություն

- ավագ բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր:

41.03. Պահանջվող առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական մասնագիտությունները հետևյալն են՝

- Ընտանեկան բժշկություն (ընտանեկան բժիշկ),
- Ներքին հիվանդություններ (թերապևտ),
- Մանկաբուժություն (Մանկաբույժ)
- Մանկական ֆիզիկական և վերականգնողական բժշկություն (Մանկական վերականգնողաբան)
- Մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա այդ թվում ուռուցքաբանություն (մանկական վնասվածքաբան օրթոպեդ)
- Անհետաձգելի բժշկություն (անհետաձգելի օգնության բժիշկ) հիմնական մասնագիտություն:

41.04. Սույն հոդվածի 41.02 կետի երկրորդ ենթակետի համար սահմանվում է անցումային ժամանակաշրջան մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը: Մինչ այդ վերջնաժամկետը, սույն հոդվածը գործելու է հետևյալ կարգով՝

«...Մանկապատանեկան թիմերի բժիշկը պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին և առնվազն ունենա

- բարձրագույն բժշկական կրթություն,
- Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական՝ սույն Հոդվածի 41.03 կետում նշված մասնագիտություններից մեկի առկայություն»

Հոդված 42. Ապահովության և անվտանգության հարցերով պատասխանատուն

42.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորում ունեցող ապահովության և անվտանգության հարցերով պատասխանատու հետևյալ պարտականություններով՝

- Մշակել, իրականացնել և վերանայել ապահովության և անվտանգության քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ ներառյալ ռիսկերի կառավարումն ու պլանավորումը.
- Ապահովության և անվտանգության հարցերի առնչությամբ հանդիսանալ հիմնական կոնտակտային անձը պետական մարմինների և արտոնագրման թեկնածուի միջև
- Ղեկավարել խաղի հետ կապված ապահովության և անվտանգության գործողությունները

42.02. Ապահովության և անվտանգության հարցերով պատասխանատուն պետք է ունենա հետևյալ որակավորումներից առնվազն մեկը՝

ա) օրինապահ մարմինների կամ անվտանգության ծառայության աշխատակցի արտոնագիր՝ համաձայն ՀՀ օրենսդրության,

բ) ապահովության և անվտանգության դիպլոմ (հավաստագիր) հատուկ դասընթացների մասնակցության համար, որը կազմակերպվել է ՀՖՖ-ի կամ վերջինիս կողմից ճանաչված այլ կազմակերպության կողմից:

42.03. Ապահովության և անվտանգության աշխատակիցը պետք է ունենա համապատասխան որակավորում և փորձառու լինի ամբոխի վերահսկման և ֆուտբոլային վայրերում ապահովության ու անվտանգության հարցերում:

Հոդված 43. Սոցիալական և բնապահպանական կայունության պատասխանատու

43.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի սոցիալական և բնապահպանական կայունության պատասխանատու, ով պատասխանատու է Սոցիալական և բնապահպանական կայունության քաղաքականության և միջոցառումների իրականացման համար՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի Սոցիալական և բնապահպանական կայունության ռազմավարություն 2030-ի և ՈՒԵՖԱ-ի համապատասխան ուղեցույցների:

Հոդված 44. Երկրպագուների հարցերով պատասխանատուն

44.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի երկրպագուների հարցերով պատասխանատու, ով հանդիսանում է երկրպագուների հետ կապող հիմնական օղակը:

44.02. Երկրպագուների հարցերով պատասխանատուն պարբերաբար պետք է հանդիպի և համագործակցի ակումբի համապատասխան անձնակազմի հետ՝ բոլոր անհրաժեշտ հարցերը քննարկելու նպատակով:

Հոդված 45. Սահմանափակ կարողություններ ունեցող երկրպագուների հարցերով պատասխանատուն

45.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի սահմանափակ կարողություններ ունեցող երկրպագուների հարցերով պատասխանատու, ով ապահովում է սահմանափակ կարողություններով երկրապագուների համար անհրաժեշտ հարմարությունների և ծառայությունների առկայությունն ու հասանելիությունը:

45.02. Սահմանափակ կարողություններ ունեցող երկրպագուների հարցերով պատասխանատուն պարբերաբար պետք է հանդիպի և համագործակցի տվյալ ակումբի համապատասխան անձնակազմի հետ՝ բոլոր անհրաժեշտ հարցերը քննարկելու նպատակով:

Հոդված 46. Խաղերի կազմակերպման պատասխանատուն

46.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի խաղերի կազմակերպման պատասխանատու, ով պատասխանատու է ակումբի առաջին թիմի տնային հանդիպումները ամբողջությամբ կազմակերպելու համար:

46.02. Խաղերի կազմակերպման պատասխանատուն հանդիսանում է ակումբի առաջին թիմի տնային խաղերի ժամանակ նշանակված ՀՖՖ Պատվիրակների հիմնական կոնտակտային անձը:

Հոդված 47. Ադմինիստրատորը

47.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի ադմինիստրատոր, ով պատասխանատու է ակումբի պրոֆեսիոնալ թիմերին խաղերի և մարզումների համար անհրաժեշտ քանակի և տեսակի հանդերձանքով և/կամ այլ պարագաներով ապահովելու և դրանց հաշվառման, ինչպես նաև պաշտոնական հրահանգով սահմանված այլ գործառույթների համար:

Հոդված 48. Առաջին թիմի գլխավոր մարզիչը

48.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորմամբ գլխավոր մարզիչ, ով ՀՖՖ FMS համակարգում հաստատված է որպես գլխավոր մարզիչ և պատասխանատու է առաջին թիմի հետևյալ հարցերի համար.

ա) ֆուտբոլիստների ընտրություն;

բ) Մարտավարություն և մարզում;

գ) ֆուտբոլիստների և տեխնիկական անձնակազմի ղեկավարում հանդերձարանում և տեխնիկական գոտում խաղից առաջ, խաղի ընթացքում և դրանից հետո; և

դ) ԶԼՄ-ների հետ կապված պարտականությունները (մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ և այլն):

48.02. Գլխավոր մարզիչը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի «Պրո» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 49. Առաջին թիմի գլխավոր մարզչի օգնականը

49.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի որակավորված մարզիչ, ով օգնում է գլխավոր մարզչին առաջին թիմին վերաբերող ֆուտբոլային բոլոր հարցերում:

49.02. Առաջին թիմի գլխավոր մարզչի օգնականը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված մարզչական հետևյալ որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 50. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարը

50.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորմամբ մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավար, ով

պատասխանատու է մանկապատանեկան ֆուտբոլի առօրյա աշխատանքների կազմակերպման, տեխնիկական հարցերի լուծման, ինչպես նաև մասսայական ֆուտբոլի զարգաման տեսլականի քայլերի ապահովման համար:

50.02. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի «Պրո» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 51. Առաջին թիմի Դարպասապահների մարզիչ

51.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորմամբ դարպասապահների մարզիչ, ով օգնում է գլխավոր մարզչին առաջին թիմին վերաբերող դարպասապահային հարցերում:

51.02. Դարպասապահների մարզիչը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի դարպասապահների «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 52. Առաջին թիմի այլ մարզիչները

52.01. Եթե արտոնագրման թեկնածուն նշանակում է առաջին թիմի այլ մարզիչներ (օրինակ՝ ֆիզիկական պատրաստականության մարզիչ և այլն), ապա այդ մարզիչները պետք է ունենան ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող ՈՒԵՖԱ-ի կողմից Իրավասության Ճանաչում (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 53. Մանկապատանեկան թիմերի մարզիչները

53.01. Արտոնագրման թեկնածուն իր յուրաքանչյուր պարտադիր մանկապատանեկան թիմի համար պետք է նշանակի առնվազն մեկ որակավորված մարզիչ, որը պատասխանատու է այդ թիմին վերաբերող բոլոր ֆուտբոլային հարցերի համար:

53.02. Այդ մարզիչներից առնվազն երեքը պետք է ունենան ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ նվազագույն մարզչական որակավորումներից մեկը՝

ա) առնվազն ՈՒԵՖԱ-ի «Ա» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝Իրավասության Ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին

53.03. Միևնույն մարզիչը չի կարող միաժամանակ գլխավորել ավելի քան երկու մանկապատանեկան թիմ:

53.04. Մնացած մարզիչները պետք է ունենան ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր (բացառությամբ Հոդված 53.05 կետում նշված մանկապատանեկան մարզիչների) կամ գործող ՈՒԵՖԱ-ի Իրավասության
Ճանաչում (Recognition of Competence)՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի մարզչական կոնվենցիայի, որը համարժեք է առնվազն ՈՒԵՖԱ-ի «Բ» կարգի մարզչական արտոնագրին:

53.05. Արտոնագրման թեկնածուի Մ8 – Մ12 տարիքային խմբերում հանդես եկող թիմերի մարզիչները պետք է ունենան առնվազն ՈՒԵՖԱ-ի «Ա» կարգի գործող մարզչական դիպլոմ կամ ՈՒԵՖԱ-ի կողմից Իրավասության անաչում (UEFA Recognition of Competence), որը համարժեք է առնվազն ՈՒԵՖԱ-ի «Ա» կարգի մարզչական դիպլոմին:

Հոդված 54. Մանկապատանեկան թիմերի դարպասապահների մարզիչ

54.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորմամբ ակումբի մանկապատանեկան թիմերի դարպասապահների մարզիչ, ով օգնում է մանկապատանեկան մարզիչներին մանկապատանեկան սեկտորին վերաբերող դարպասապահներին վերաբերող հարցերում:

54.02. Մանկապատանեկան թիմերի դարպասապահների մարզիչը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա) կետով նախատեսված արտոնագրին:

Հոդված 55. Կանանց թիմի գլխավոր մարզիչը

55.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորմամբ ակումբի կանանց առաջին թիմի գլխավոր մարզիչ, ով պատասխանատու է կանանց թիմի բոլոր ֆուտբոլային հարցերի համար:

55.02. Կանանց թիմի գլխավոր մարզիչը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի «Ա» կարգի գործող մարզչական դիպլոմ,

բ) գործող ՈՒԵՖԱ-ի իրավասության ճանաչում (Recognition of Competence), որը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 56. ՈՒԵՖԱ-ի մարզչական որակավորումներին առնչվող այլ ընդհանուր դրույթները

56.01. Մարզիչ են համարվում Հոդված 48-55-ում նշված և ՈՒԵՖԱ-ի մարզչական արտոնագիր ունեցող այն անձինք, ովքեր, համաձայն ՈՒԵՖԱ-ի մարզչական կոնվենցիայի դրույթների կիրառման՝

ա) ՈՒԵՖԱ-ի անդամ ասոցիացիայի կողմից ստացել են ՈՒԵՖԱ-ի մարզչական արտոնագիր, կամ

բ) առնվազն սկսել են հաճախել ՈՒԵՖԱ-ի մարզչական արտոնագրի անհրաժեշտ դասընթացը: Մարզչական արտոնագրի դասընթացին զուտ գրանցվելը դեռևս բավարար չէ տվյալ չափանիշը բավարարելու համար:

56.02. Բոլոր որակավորված մարզիչները պետք է պատշաճ կերպով գրանցված լինեն ՀՖՖ FMS-ում՝ սույն կանոնակարգի Հոդված 34-ում նկարագրված ընթացակարգի համաձայն:

Հոդված 57. Գրավոր պայմանագրեր

57.01. Հոդվածներ 36-55-ով սահմանված ողջ վարչական, տեխնիկական, բժշկական և անվտանգության անձնակազմը կամ նման ծառայություններ մատուցողները պետք է գրավոր պայմանագրեր ունենան արտոնագրման թեկնածուի (կամ վերջինիս իրավաբանական խմբի կառուցվածքում ընդգրկված իրավաբանական անձի հետ)՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում:

57.02. Հոդվածներ 36-55-ում նշված անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանված լինեն գրավոր կերպով՝ վերջիններիս աշխատանքային պայմանագրերում և աշխատանքի նկարագրություններում:

57.03. Արտոնագրման թեկնածուն պետք է ապահովի յուրաքանչյուր մարզչի հետ պայմանագրի համապատասխանելիությունը ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության Կանոնակարգի համապատասխան դրույթներին (Մարզիչներին աշխատանքի ընդունման կանոնները):

Մարզիչների հետ հարաբերությունները կարգավորվում են գրավոր աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրով՝ ստորև նշված պայմանների պահպանմամբ.

- Պայմանագիրը պետք է ներառի մարզչական գործունեությունը կարգավորող էական տարրեր, մասնավորապես և առանց սահմանափակման ի թիվս այլնի (inter alia)՝ պայմանագրի առարկա, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, մարզչի գործունեության բնույթն ու կարգավիճակը, համաձայնեցված վարձատրությունը, պայմանագրի ժամկետը, պայմանագրի վաղաժամկետ լուծման պայմաններն ու պահանջները, մարզչին տրամադրվող երաշխիքներն ու պաշտպանությունը, յուրաքանչյուր կողմի

ստորագրությունը:

- Պայմանագիրը պետք է լիովին համապատասխանի ՀՀ կիրառելի օրենսդրության, ՀՖՖ, ՈՒԵՖԱ և ՖԻՖԱ կանոնակարգերի պահանջներին, ընդ որում հակասությունների դեպքում պետք է նախապատվությունը տրվի ՀՀ օրենսդրության իմպերատիվ պահանջներին :
- Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը ու կարգավորումը պետք է նախատեսված լինի պայմանագրում, իսկ առանց որևէ հիմնավորման պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում պետք է նախատեսված լինի համարժեք փոխհատուցում մարզչի համար:
- Պայմանագրի լուծման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառման է ենթակա ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 8-րդ հավելվածի դրույթները՝ անկախ մարզչի հետ կնքված պայմանագրի տեսակից:

57.04. Աշխատակցի պաշտոնական հրահանգի (աշխատանքի նկարագրության) անհամապատասխանելիությունը փաստացի կատարած աշխատանքին կարող է հանգեցնել պատժամիջոցների ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից:

57.05. Որպես ակումբի գլխավոր մարզիչ չգրանցված անձի, ներառյալ ակումբի մեկ այլ պաշտոնում գրանցված անձի կողմից, գլխավոր մարզչի պարտականությունների փաստացի կատարումը մեկ մրցաշրջանի ընթացքում երկուսից ավելի անգամ, ինչպես նաեւ ակումբի կողմից տվյալ անձի պարբերաբար ներկայացումը որպես ակումբի գլխավոր մարզիչ (ներառյալ համացանցում, տպագիր մամուլում, փաստաթղթերում եւ այլ եղանակներով) կարող է հանգեցնել պատժամիջոցների ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից:

Հոդված 58. Ծառայությունների մատուցում / առութսորսինգ

58.01. Եթե տվյալ գործառույթը, ազգային օրենսդրության համաձայն, վստահված է ծառայություններ մատուցող արտաքին աղբյուրներին, ապա արտոնագրման թեկնածուն պետք է գրավոր պայմանագիր կնքի ծառայություններ մատուցողի հետ: Այն պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

ա) սահմանված առաջադրանքներ և պարտականություններ.

բ) Տեղեկություններ տվյալ գործառույթի համար պատասխանատու անձի (անձանց) մասին, ներառյալ նրանց համապատասխան որակավորումները:

Հոդված 59. Պաշտոնների համատեղելիությունը

59.01. Հոդվածներ 36 – 55-ով սահմանված պարտադիր պաշտոնները ներկայացնում են արտոնագրման թեկնածուից պահանջվող նվազագույն կազմակերպչական կառուցվածքը:

59.02. Ակումբի կառուցվածքում մեկ անձի կողմից մեկից ավելի պաշտոններ զբաղեցնելն արգելվում է, բացառությամբ սույն հոդվածի 59.04-րդ կետով սահմանված պաշտոնների:

59.03. Հոդվածներ 36-55-ում նշված պաշտոնների՝ Հայաստանի Պրեմիեր լիգայում կամ Հայաստանի Առաջին խմբի առաջնությունում հանդես եկող այլ ակումբների ցանկացած պաշտոնի հետ միաժամանակ համատեղումը արգելվում է:

59.04. Ակումբի կառուցվածքում մեկ անձի կողմից մեկից ավելի պաշտոններ զբաղեցնելը թույլատրվում է միայն հետևյալ պաշտոնների համար.

- Սոցիալական և բնապահպանական կայունության պատասխանատու – Երկրպագուների հարցերով պատասխանատու - Սահմանափակ կարողություններ ունեցող երկրպագուների հարցերով պատասխանատու
- Մանկապատանեկան թիմերի բժիշկ – Առաջին թիմի բժիշկ
- Խաղերի կազմակերպման հարցերով պատասխանատու – ցանկացած այլ վարչական պաշտոն, ինչպես նաև թիմի ադմինիստրատոր
- Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավար – Մանկապատանեկան թիմի մարզիչ
- Ակումբի կանանց թիմի մարզիչ – ակումբի մանկապատանեկան թիմերի մարզիչ
- Առաջին թիմի դարպասապահների մարզիչ – մանկապատանեկան թիմերի դարպասապահների մարզիչ
- Ակումբի մանկապատանեկան թիմերի դարպասապահների մարզիչ-մանկապատանեկան մարզիչ
- Երկրորդ թիմի մարզիչ – մանկապատանեկան մարզիչ՝ պայմանով, որ ՀՀ Առաջին Խմբի առաջնության մասնակից թիմում հայտավորված բոլոր մարզիչները՝ բացառությամբ գլխավոր մարզչի, կարող են հայտավորվել միևնույն ակումբի Մ-18Ա, Մ17Ա և Մ-16Ա տարիքային խմբերի առաջնությունների մասնակից թիմերից միայն մեկում:

Արգելվում է համատեղել Առաջին թիմի գլխավոր մարզչի պաշտոնը որևէ այլ պաշտոնի հետ:

Արգելվում է համատեղել Առաջին թիմի գլխավոր մարզչի օգնականի պաշտոնը որևէ այլ պաշտոնի հետ:

Հոդված 60. Վարչական կառուցվածք

60.01. Արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրողին տրամադրի ակումբի վարչական կառուցվածք, որտեղ հստակորեն նշվում են համապատասխան անձնակազմը և նրանց հիերարխիկ և գործառական պարտականությունները տվյալ կառուցվածքում:

60.02. Վարչական կառուցվածքը պետք է առնվազն տեղեկատվություն տրամադրի Հոդվածներ 36-ից մինչև 47-ով և Հոդված 50-ով սահմանված հիմնական անձնակազմի մասին:

Հոդված 61. Մրցաշրջանի ընթացքում փոխարինման պարտականությունը

61.01. Արտոնագրման մրցաշրջանի ընթացքում Հոդվածներ 36-55-ում նշված պաշտոններից ցանկացածի թափուր մնալու դեպքում արտոնագրվածը պետք է երաշխավորի, որ առավելագույնը 60-օրյա ժամկետում տվյալ պաշտոնին կնշանակի անհրաժեշտ որակավորում ունեցող անձի:

61.02. Հիվանդության կամ դժբախտ պատահարի հետևանքով տվյալ պաշտոնի թափուր մնալու դեպքում արտոնագրողը կարող է երկարաձգել նշված 60-օրյա ժամկետը, եթե արտոնագրման պատասխանատուն ներկայացնում է հիմնավոր փաստեր առ այն, որ պաշտոնակատար անձը դեռևս ֆիզիկապես պատրաստ չէ կատարելու իր պարտականությունները:

61.03. Արտոնագրվածը նման փոփոխության մասին պետք է անհապաղ գրավոր տեղեկացնի ՀՖՖ-ին 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հոդված 62. ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին և Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցելու հայտարարագիրը

62.01. Արտոնագրման թեկնածուն պետք է ներկայացնի իրավական ուժ ունեցող հայտարարագիր, որը հավաստում է հետևյալը՝

ա) ակումբն իրավաբանորեն պարտադիր է ճանաչում ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի կանոնադրությունները, կանոնակարգերը, ուղեցույցներն ու որոշումները, ինչպես նաև Լոզանում գտնվող Սպորտային հարցերով արբիտրաժային դատարանի՝ CAS-ի (Court of Arbitration for Sport) իրավազորությունը՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի կանոնադրության համապատասխան հոդվածների,

բ) ազգային մակարդակով մասնակցում է միայն ՀՖՖ-ի կողմից ճանաչված և հաստատված մրցաշարերին (օր.՝ ազգային առաջնություն, գավաթի խաղարկություն),

գ) միջազգային մակարդակով մասնակցում է միայն ՈՒԵՖԱ-ի կամ ՖԻՖԱ-ի կողմից ճանաչված մրցաշարերին (սույն դրույթը չի վերաբերում ընկերական խաղերին),

դ) ակումբը տեղեկացնում է արտոնագրողին ցանկացած կարևոր փոփոխության, միջոցառման կամ էական տնտեսական կարևորություն ներկայացնող իրավիճակի մասին,

ե) ենթարկվում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգին և գործում վերջինիս համաձայն,

զ) ենթարկվում է ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման և ֆինանսական կայունության կանոնակարգին և գործում վերջինիս համաձայն,

է) հաշվետու խումբը սահմանված է համաձայն Հոդված 68-ի դրույթների,

ը) Ֆուտբոլային ցանկացած գործունեության հետ կապված բոլոր եկամուտներն ու ծախսերը, որոնք սահմանված են Հոդված 68.03-ում ներառվում են հաշվետու խմբում

թ) հաշվետու խմբի մեջ ընդգրկված կազմակերպության ցանկացած հետևանք վերը նշված ե) և է) կետերին չհամապատասխանելու և չհետևելու դեպքում ենթակա է հաշվետվության,

ժ) վերջին 3 տարիների ընթացքում տեղի ունեցած իրավաբանական ձևի, իրավական խմբի կառուցվածքի (այդ թվում՝ սեփականության իրավունքի փոփոխության) կամ ինքնության փոփոխության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը տրամադրվում է ՀՖՖ-ին:

ի) բոլոր ներկայացված փաստաթղթերը լիարժեք են և ճշգրիտ,

լ) լիազորում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնին, ՀՖՖ Արտոնագրման մարմիններին, ՈՒԵՖԱ-ի վարչակազմին և ՈՒԵՖԱ-ի Իրավական մարմիններին ուսումնասիրելու ներկայացված համապատասխան փաստաթուղթը և պահանջելու տեղեկատվություն ցանկացած համապատասխան պետական կամ մասնավոր մարմիններից ՝ համաձայն ՀՀ օրենսդրության,

խ) ընդունում է, որ ՈՒԵՖԱ-ն իրավունք ունի անցկացնելու համապատասխանելիության աուդիտ ազգային մակարդակով՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման ֆինանսական կայունության կանոնակարգի Հոդված 99-ի:

ծ) հաստատում է, որ ուղղակիորեն և/կամ անուղղակիորեն ներգրավված չէ փողերի լվացմանն առնչվող որևէ գործունեության մեջ՝ հիմնված փողերի լվացման դեմ պայքարի օրինական դաշտի վրա;

կ) տեղեկացնելու է ՀՖՖ-ին կարգապահական կամ պետական մարմիններում ընթացող ցանկացած վարույթի մասին, որոնք վերաբերում են ակումբի կամ նրա պաշտոնյաների ներգրավվածությանը ցանկացած այնպիսի գործունեությանը, որն ուղղված է ազգային կամ միջազգային մակարդակով հանդիպման արդյունքների կազմակերպմանը կամ դրանց վրա ազդելուն, անկախ նրանից՝ ակումբը կամ նրա պաշտոնյաները արդարացվել են, թե ոչ:

62.02. Սույն հայտարարագիրը պետք է ստորագրվի ակումբի իրավասու անձի կողմից՝ արտոնագրման փաստաթղթերի տրամադրման վերջնաժամկետից առավելագույնը երեք ամիս առաջ:

Հոդված 63. Նվազագույն իրավական տեղեկատվությունը

63.01. Արտոնագրման թեկնածուն պետք է ներկայացնի արտոնագրման թեկնածուի (իսկ եթե տարբերվում է՝ գրանցված անդամի) վերաբերյալ առնվազն հետևյալ նվազագույն տեղեկատվությունը

- Ամբողջական իրավաբանական անուն,
- Կազմակերպաիրավական ձև,

- Գործող կանոնադրության պատճեն,
- Քաղվածք ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից,
- Ակումբի՝ ստորագրության իրավունք ունեցող անձանց ցանկ,
- Պահանջվող ստորագրության տեսակ (օր.՝ անհատական, կոլեկտիվ)։

63.02. Արտոնագրման թեկնածուն պետք է տրամադրի նաև հետևյալ կոնտակտային տվյալները՝

- Պաշտոնական գրասենյակի հասցե,
- Պաշտոնական կոնտակտային տվյալներ (օր.՝ հեռախոսահամր, էլեկտրոնային հասցե),
- Պաշտոնական վեբ կայք,
- Ակումբի արտոնագրման հարցերով գլխավոր կոնտակտային անձի անունը և անմիջական կոնտակտային տվյալները։

Հոդված 64. Արտոնագրման թեկնածուի ինքնությունը, պատմությունը և ժառանգությունը

64.01. Բոլոր տարրերը, որոնք կազմում են ֆուտբոլային ակումբի տեսողական ինքնությունը՝ կապված մրցումների պաշտոնական անվանման և/կամ թիմի անվան հետ, ինչպես օրինակ՝ պաշտոնական տարբերանշանը լոգոները, այլ ապրանքանիշերը և ակումբի պաշտոնական գույները, պետք է պատկանեն և լինել արտոնագրման թեկնածուի կամ գրանցված անդամի (եթե վերջինս տարբերվում է արտոնագրման թեկնածուից) միանձնյա հսկողության տակ, ինչպես սահմանված է 14.01 կետում:

64.02. Արտոնագրման թեկնածուի ինքնությունը պետք է գրանցվի արտոնագրողի մոտ՝ վերջինիս պատմության և ժառանգության հետ միասին, ներառյալ վերջինիս սպորտային նվաճումները:

Հոդված 65. Գրավոր պայմանագիրը ֆուտբոլային կազմակերպության հետ

65.01. Եթե արտոնագրման թեկնածուն ֆուտբոլային կազմակերպություն է Հոդված 11.01-ի բ) կետի իմաստով, ապա այն պետք է ներկայացնի գրանցված անդամի հետ կնքված գրավոր պայմանագիր իրավունքների փոխանցման վերաբերյալ:

65.02. Պայմանագիրը պետք է սահմանի հետևյալ նվազագույն դրույթները՝

ա) ֆուտբոլային կազմակերպությունը պետք է ենթարկվի ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի գործող կանոնադրություններին, կանոնակարգերին, ուղեցույցներին և որոշումներին,

բ) ֆուտբոլային կազմակերպությունը չի կարող փոխանցել մասնակցության իր իրավունքն ազգային և միջազգային մակարդակի մրցաշարերում,

գ) նմանատիպ մրցաշարերին ֆուտբոլային կազմակերպության մասնակցության իրավունքը կասեցվում է, եթե դադարում է իրավունքները փոխանցող ակումբի անդամակցությունն ասոցիացիային,

դ) եթե ֆուտբոլային կազմակերպությունն սնանկ է ճանաչվում կամ լուծարվում է, ապա դա համարվում է անդամակցության դադարեցում կամ պայմանագրային հարաբերությունների խզում՝ համաձայն Հոդված 11-ի: Եթե ֆուտբոլային կազմակերպությանն արդեն իսկ շնորհվել է արտոնագիր, ապա ֆուտբոլային կազմակերպությունն այն չի կարող փոխանցել գրանցված անդամի,

ե) ՀՖՖ-ն իրավունք ունի հաստատելու ֆուտբոլային կազմակերպության անվանունը, որով վերջինս հանդես է գալիս ՀՖՖ-ի կողմից ճանաչված և հաստատված ազգային ակումբային մրցաշարերին,

զ) իրավասու ազգային կամ միջազգային արբիտրաժային դատարանի կամ Լոզանի Սպորտային արբիտրաժային դատարանի (CAS) պահանջով՝ ֆուտբոլային կազմակերպությունը պետք է տրամադրի տեսակետներ և տեղեկատվություն և փաստաթղթեր, ազգային կամ միջազգային մրցաշարում իր մասնակցության վերաբերյալ:

65.03. Իրավունքների փոխանցման մասին պայմանագիրն ու վերջինիս վերաբերյալ ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի ՀՖՖ-ի կողմից:

Հոդված 66. Իրավական խմբի կառուցվածքը

66.01. Արտոնագրման թեկնածուն մինչև դիմումը արտոնագրողին հանձնելու վերջնաժամկետը, պետք է ՀՖՖ-ին տրամադրի մի փաստաթուղթ, որտեղ արտացոլված կլինի իր իրավական խմբի ընդհանուր կառուցվածքը տարեկան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

66.02. Սույն փաստաթուղթը պետք է հստակ տարանջատի և պարունակի տեղեկատվություն հետևյալի մասին՝

ա) արտոնագրման թեկնածուի և ՀՖՖ-ի գրանցված անդամի (եթե դրանք տարբեր կազմակերպություններ են),

բ) արտոնագրման թեկնածուի ցանկացած դուստր կազմակերպության և ՀՖՖ-ի գրանցված անդամի (եթե դրանք տարբեր կազմակերպություններ են),

գ) արտոնագրման թեկնածուի հարակից կողմ հանդիսացող ցանկացած ընկերության և ՀՖՖ-ի գրանցված անդամի (եթե դրանք տարբեր կազմակերպություններ են),

դ) արտոնագրման թեկնածուի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն իրականացնող ցանկացած կազմակերպության,

ե) արտոնագրման թեկնածուի նկատմամբ 10% (կամ ավելին) ուղղակի և անուղղակի սեփականություն կամ 10% (կամ ավելին) քվեարկության իրավունքներ ունեցող ցանկացած կազմակերպության,

զ) ցանկացած այլ ֆուտբոլային ակումբի վերաբերյալ, որի նկատմամբ ա)-ից մինչև ե) կետերում նշված ցանկացած կողմը կամ նրանց գլխավոր կառավարման կազմ ունեն սեփականության իրավունք կամ քվեարկության իրավունքկամ անդամություն կամ որևէ այլ ներգրավվածություն կամ ազդեցություն իր կառավարման, գործառնական կամ մարզական արդյունքներում, և

է) արտոնագրման թեկնածուի ղեկավար կազմի:

66.03. Հոդված 69-ով սահմանված հաշվետու խումբը պետք է հստակորեն ներկայացվի փաստաթղթում:

66.04. Անհրաժեշտության դեպքում արտոնագրողը կարող է արտոնագրման թեկնածուից պահանջել հավելյալ տեղեկատվություն (օր.՝ գլխավոր վերահսկող կողմին և/կամ ուղղակիորեն վերահսկող կողմին առնչվող և/կամ դուստր ընկերությունների մասին տեղեկատվություն):

66.05. Իրավական խմբի կառուցվածքի մեջ ընդգրկված յուրաքանչյուր կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

ա) իրավաբանական անձի անուն և կազմակերպաիրավական ձև;

բ) իրավաբանական անձի հիմնական գործունեություն, և

գ) սեփականության մասնաբաժնի տոկոսադրույք (և ընտրաձայների տոկոսադրույք, եթե վերջինս տարբերվում է սեփականության մասնաբաժնի տոկոսադրույքից)

Արտոնագրման թեկնածուի ցանկացած դուստր ընկերության և ՀՖՖ-ի գրանցված անդամի վերաբերյալ (եթե դրանք տարբեր մարմիններ են) անհրաժեշտ է տրամադրել նաև հետևյալ տեղեկատվությունը՝

դ) բաժնետիրական կապիտալ

ե) Ընդհանուր ակտիվները

զ) Ընդհանուր եկամուտները; և

է) սեփական կապիտալը:

66.06. Արտոնագրողին պետք է տեղեկացնել իրավական խմբի կառուցվածքում բոլոր այն փոփոխությունների մասին, որոնք կարող էին տեղի ունենալ տարեկան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա և արտոնագրողին փաստաթղթային փաթեթները ներկայացնելու ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում:

66.07. Արտոնագրման թեկնածուն պետք է հավաստի, որ իրավաբանական խմբի կառուցվածքի մասին տեղեկատվությունը ամբողջական է, ճշգրիտ և համապատասխանում է սույն կանոնակարգի դրույթներին: Վերոնշյալը հավաստվում է արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի / ղեկավարի կողմից ստորագրված համառոտ հայտարարությամբ:

Հոդված 67. Գլխավոր վերահսկող կողմ, հիմնական շահառուները և նշանակալի ազդեցություն ունեցող կողմ

67.01. Արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրողին տրամադրի փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկատվությունը հետևյալի վերաբերյալ՝

ա) արտոնագրման թեկնածուի գլխավոր վերահսկող կողմ,

բ) արտոնագրման թեկնածուի հիմնական շահառուն (այսինքն՝ ֆիզիկական անձ, որի անունից տնօրինվում կամ վերահսկվում է կազմակերպությունը կամ գործարքներ են իրականացնում) և,

գ) արտոնագրման թեկնածուի վրա նշանակալի կամ որոշիչ ազդեցություն ունեցող ցանկացած կողմ:

67.02. Արտոնագրման թեկնածուն արտոնագրողին պետք է տրամադրվի վերոնշյալ 67.01 կետում նկարագրված կողմերից յուրաքանչյուրի վերաբերյալ Հետևյալ տեղեկատվությունը (փաստաթղթերի ներկայացման օրվա դրությամբ)՝

ա) անվանումը, և, եթե կիրառելի է, կազմակերպաիրավական ձևը

բ) հիմնական գործունեությունը,

գ) արտոնագրման թեկնածուի նկատմամբ սեփականության մասնաբաժնի տոկոսը, և, եթե տարբերվում է, քվեարկության իրավունքի տոկոսը

դ) ղեկավար կազմը (եթե կիրառելի է),

ե) ցանկացած այլ ֆուտբոլային ակումբ, որի նկատմամբ կողմը կամ վերջինիս ղեկավար կազմից որևէ մեկն ունի սեփականության իրավունք, քվեարկության իրավունք կամ անդամակցություն կամ որևէ այլ ներգրավվածություն կամ ազդեցություն

67.03. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի՝ արդյոք 67.01 և 67.02 կետերով սահմանված տեղեկության առնչությամբ տեղի է ունեցել որևէ փոփոխություն՝ սկսած ֆինանսական հաշվետվությունների հաշվետու ժամանակաշրջանից մինչև արտոնագրողին տեղեկատվության տրամադրումը:

67.04. Եթե փոփոխությունը տեղի է ունեցել 67.03 կետում նկարագրվածի համաձայն, ապա այն պետք է մանրամասն նկարագրվի արտոնագրման թեկնածուի կողմից արտոնագրողին տրված տեղեկության մեջ: Առնվազն պետք է տրամադրվի հետևյալ տեղեկատվությունը՝

ա) ամսաթիվը, երբ տեղի է ունեցել փոփոխությունը,

բ) փոփոխության կատարման նպատակի և պատճառների նկարագրությունը,

գ) արտոնագրման թեկնածուի ֆինանսական, գործառնական և մարզական քաղաքականությունների հետևանքներ,

դ) արտոնագրման թեկնածուի սեփական կապիտալի կամ պարտավորությունների վրա որևէ ազդեցության նկարագրություն,

67.05. Անհրաժեշտության դեպքում արտոնագրողը արտոնագրման թեկնածուից կարող է պահանջել վերոնշյալ տեղեկատվությունից զատ հավելյալ տեղեկատվություն:

67.06. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի, որ գլխավոր վերահսկող կողմի, հիմնական շահառուի և նշանակալի կամ որոշիչ ազդեցություն ունեցող կողմի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը ամբողջական է, ճշգրիտ և համապատասխանում է սույն կանոնակարգին: Վերոնշյալը հավաստվում է արտոնագրման թեկնածուի և գլխավոր վերահսկող կողմի գործադիր մարմինների / ղեկավարների կողմից ստորագրված համառոտ հայտարարությամբ:

Հոդված 68. Ղեկավարության կողմից դիմում-հավաստագիրը արտոնագրման որոշում ընդունելուց առաջ

68.01. Արտոնագրման կոմիտեի /Առաջին ատյանի մարմին/ կողմից արտոնագրման որոշման կայացման օրվան նախորդող յոթ օրվա ընթացքում արտոնագրման թեկնածուն պետք է դիմում-հավաստագիր ներկայացնի արտոնագրողին՝ համաձայն սույն կանոնակարգի Հոդված 8-ի:

68.02. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի հետևյալը՝

ա) արտոնագրողին ներկայացված բոլոր փաստաթղթերը ամբողջական են, ճշգրիտ և համապատասխանում են սույն կանոնակարգի դրույթներին;

բ) տեղի չի ունեցել արդյոք արտոնագրման դիմումին կամ արտոնագրային որևէ չափանիշին վերաբերող որևէ էական փոփոխություն կամ նման իրադարձություն:

գ) տեղի չեն ունեցել արդյոք խոշոր տնտեսական նշանակություն ունեցող իրադարձություններ կամ չեն փոխվել պայմաններ, որոնք կարող են հակադարձ ազդեցություն ունենալ արտոնագրման թեկնածուի ֆինանսական կարգավիճակի վրա՝ սկսած աուդիտ անցած նախորդ տարեկան հաշվետվությունների օրվանից: Եթե տեղի է ունեցել տնտեսական նշանակություն ունեցող որևէ իրադարձություն կամ փոխվել են առկա պայմանները, ապա ղեկավարության կողմից գրված դիմում-հավաստագիրը պետք է ներառի իրադարձության կամ պայմանի բնութագիրը և դրա ֆինանսական ազդեցության գնահատականը կամ էլ հայտարարություն, որ նման գնահատական չի կարող տրվել:

դ) Արդյոք արտոնագրման թեկնածուն (կամ ՀՖՖ-ի գրանցված անդամը, որը պայմանագրային հարաբերություններ ունի արտոնագրման թեկնածուի հետ) կամ հաշվետու խմբում ընդգրկված արտոնագրման թեկնածուի ցանկացած մայր կազմակերպություն իր պարտատերերից չի փնտրում կամ չի ստացել պաշտպանություն՝ համաձայն օրենքների և կանոնակարգերի, արտոնագրման մրցաշրջանից 12 ամիս առաջ ընկած ժամանակահատվածում:

68.03. Արտոնագրման թեկնածուի ղեկավարության կողմից հավաստումը պետք է հաստատվի արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի անունից ստորագրությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հոդված 69. Հաշվետու իրավաբանական անձը / անձինք և հաշվետու խումբը

69.01. Արտոնագրման թեկնածուն սահմանում և արտոնագրողին է ներկայացնում հաշվետու խումբը, այսինքն՝ այն կազմակերպությունը կամ կազմակերպությունների խումբը, որոնց վերաբերյալ՝ համաձայն Հավելված 5-ի Բ կետի պետք է տրամադրվի և համաձայն Հավելված 7-ի՝ գնահատվի ֆինանսական տեղեկատվությունը (օր.՝ առանձին կազմակերպության, համախմբված կամ միավորված ֆինանսական հաշվետվությունները):

69.02. Հաշվետու խումբը պետք է իր մեջ ներառի՝

ա) արտոնագրման թեկնածուին և, եթե տարբերվում է, ՀՖՖ-ի գրանցված անդամին,

բ) արտոնագրման թեկնածուի, և եթե տարբերվում է, ՀՖՖ-ի գրանցված անդամի, ցանկացած դուստր կազմակերպություն,

գ) իրավական խմբի մեջ ներառված ցանկացած այլ կազմակերպություն, որը եկամուտ է ձևավորում և/կամ ծառայություններ մատուցում և/կամ ծախսեր իրականացնում՝ կապված ներքոնշյալ 69.03-րդ կետի գ)-ից մինչև ի) ենթակետերում նշված ցանկցած ֆուտբոլային գործունեության հետ,

դ) ցանկացած կազմակերպություն (անկախ այն հանգամանքից՝ այն ներառված է իրավական խմբի կառուցվածքի մեջ, թե ոչ), որը եկամուտ է ձևավորում և/կամ ծառայություններ մատուցում և/կամ ծախսեր իրականացնում՝ կապված ներքոնշյալ 69.03-րդ կետի ա) և բ) ենթակետերում նշված ցանկացած ֆուտբոլային գործունեության հետ:

69.03. Ֆուտբոլային գործունեությունը ներառում է՝

ա) անձնակազմին աշխատանքով ապահովելը (ինչպես սահմանված է Հոդված 74-ում), ներառյալ աշխատակիցներին պայմանագրային կամ իրավական պարտավորություններից բխող բոլոր տեսակի վճարումների տրամադրումը

բ) ֆուտբոլիստների գրանցումների (ներառյալ վարձակալություն) ձեռքբերումները/օտարումները

գ) տոմսերի իրացումը

դ) հովանավորչությունը և գովազդը

ե) հեռարձակումները

զ) մերչանդայզինգը/առևտուրը և հյուրընկալությունը

է) ակումբի գործունեությունը (ադմինիստրատիվ կառավարում, խաղերի կազմակերպում, ճամփորդություն, սկաուտինգ և այլն)

ը) մարզադաշտի և մարզումային ենթակառուցվածքների օգտագործումը և կառավարումը

թ) կանանց ֆուտբոլը

ժ) մանկապատանեկան սեկտորը

ի) ֆինանսավորում, ներառյալ սեփական կապիտալը, որը հանգեցնում է արտոնագրման թեկնածուի նկատմամբ պարտավորությունների, կամ արտոնագրման թեկնածուի ակտիվների կամ եկամուտների դիմաց ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապահովված կամ գրավադրված պարտավության:

69.04. Կազմակերպությունը կարող է չներառվել հաշվետու խմբում միայն եթե նրա կողմից իրականացվող ֆուտբոլային գործունեությունները արդեն արտացոլված են հաշվետու խմբի մեջ ներառված որևէ կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում կամ՝

ա) նրա գործունեությունը բացարձակ չի առնչվում 69.03-րդ կետում սահմանված ֆուտբոլային գործունեությունների և/կամ ֆուտբոլային ակումբի գտնվելու վայրի, ակտիվների կամ ապրանքանիշի հետ

բ) նրա գործունեությունը էական չէ՝ հաշվետու խմբի մեջ ներգրավված այլ կազմակերպությունների հետ համեմատության մեջ, և այն չի իրականացնում 69.03-րդ կետի ա) և բ) ենթակետերում սահմանված որևէ ֆուտբոլային գործունեություն

69.05. Արտոնագրման թեկնածուն պետք է ներկայացնի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից լիազորված հայտարարություն, որը կհաստատի արդյոք՝

ա) 69.03 կետում սահմանված ֆուտբոլային գործունեության հետ կապված բոլոր եկամուտներն ու ծախսերը ներառվել են հաշվետու խմբում և, եթե ոչ, կտրամադրի մանրամասն բացատրություն այս առնչությամբ

բ) իրավական խմբի կառուցվածքում ներառված որևէ կազմակերպություն չի ներառվել հաշվետու խմբի մեջ՝ մեկնաբանելով կազմակերպությունը չներառելը՝ հղում անելով 69.04 կետին:

Հոդված 70. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները

70.01. Արտոնագրման թեկնածուն արտոնագրողի կողմից սահմանված ժամկետում պետք է նախատապրաստի և ներկայացնի տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաշվետու ժամանակաշրջանի համար, որն ավարտվում է արտոնագրողին դիմումը ներկայացնելու վերջնաժամկետին նախորդող տարում և ՈՒԵՖԱ-ին արտոնագրման որոշումների ցանկը ներկայացնելու վերջնաժամկետին նախորդող տարում:

70.02. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամկանաշրջանի համեմատական ցուցանիշները, պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտներին համապատասխան և պետք է ներառեն՝

ա) հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ,

բ) հաշվետու ժամանակաշրջանի շահույթի և վնասի մասին հաշվետվություն,

գ) հաշվետու ժամանակաշրջանի համար դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվություն,

դ) հաշվետու ժամանակաշրջանից հետո սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

ե) ծանոթագրություններ, որոնք ներառում են կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում և այլ բացատրական նշումներ, և

զ) ղեկավարության կողմից պատրաստված ֆինանսական հաշվետվություն/զեկույց,:

70.03. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է ենթարկվեն աուդիտորական ստուգման անկախ աուդիտորի կողմից՝ համաձայն Հավելված 3-ում սահմանված կարգի:Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է համապատասխանեն Հավելված 4-ում սահմանված տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջներին և Հավելված 5-ում սահմանված հաշվապահական հաշվառման սկզբունքներին: Այնտեղ պետք է ներկայացվեն ֆինանսական տարվա ավարտի դրությամբ համեմատական ցուցանիշները:

Եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունները չեն համապատասխանում Հավելված 5-ով սահմանված տեղեկատվության բացահայտման նվազագույն

պահանջներին, ապա արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրողին ներկայացնի նաև,

ա) լրացուցիչ տեղեկատվություն Հավելված 4-ում սահմանված տեղեկատվության բացահայտման նվազագույն պահանջները բավարարելու համար, և

բ) նույն աուդիտորի կողմից տրամադրված ստուգումների վերաբերյալ հաշվետվությունը, որը հաստատում է տարեկան ֆինանսական հաշվետվություններն արտոնագրողի կողմից սահմանած համաձայնեցված ընթացակերով պատրաստելը և այսպիսով հաստատում լրացուցիչ տեղեկատվության ամբողջականությունն ու ճշգրտությունը։

70.04. Եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունները չեն համապատասխանում Հավելված 5-ով սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին, ապա արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրողին ներկայացնի նաև.

ա) վերանայված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են Հավելված 5-ում սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին և ընդգրկում են նույն հաշվետու ժամանակաշրջանը, ներառյալ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատական ցուցանիշները;

բ) արտոնագրման թեկնածուի ղեկավարության հայտարարությունն առ այն, որ վերանայված ֆինանսական հաշվետվությունները ամբողջական են, ճշգրիտ և համապատասխանում են կանոնակարգերին; և

գ) նույն աուդիտորի կողմից տրամադրված ստուգումների վերաբերյալ հաշվետվությունը, որը հաստատում է տարեկան ֆինանսական հաշվետվություններն արտոնագրողի կողմից սահմանած համաձայնեցված ընթացակարգերով՝ վերանայված ֆինանսական հաշվետվությունների ամբողջականության և ճշգրտության առնչությամբ

Հոդված 71. Ֆինանսական հաշվետվության հրապարակումը

71.01. Արտոնագրման թեկնածուն ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի կողմից նախապես սահմանված վերջնաժամկետի շրջանակներում (որը պետք է լինի ոչ ուշ քան մայիսի 31-ը) պետք է իր կամ ՀՖՖ պաշտոնական կայքում հրապարակի՝

ա) աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական տեղեկատվությունը՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար, որը գնահատվել է արտոնագրողի կողմից

բ) վերջին հաշվետու ժամանակաշրջանում գործակալներին/միջնորդներին կամ ի շահ գործակալների վճարված ընդհանուր գումարը։

Հոդված 72. Սեփական կապիտալի կանոնը

72.01. Արտոնագրման թեկնածուն պետք է իր տարեկան ֆինանսական հաշվետվություններում) ներկայացնի սեփական կապիտալի արժեքը, որը՝

ա) դրական է; կամ

բ) նախորդ դեկտեմբերի 31-ից հետո բարելավվել է 10%-ով և ավելի:

72.02. Սեփական կապիտալը կազմակերպության ակտիվների մնացորդային արժեքն է՝ նրա բոլոր պարտավորությունները հանելուց հետո, ինչպես սահմանված է նրա տարեկան ֆինանսական հաշվետվություններում: Եթե արտոնագրման թեկնածուի ակտիվները գերազանցում են նրա պարտավորությունները, ապա արտոնագրման թեկնածուն ունի դրական սեփական կապիտալ: Եթե արտոնագրման թեկնածուի պարտավորությունները գերազանցում են իր ակտիվները, ապա արտոնագրման թեկնածուն ունի բացասական սեփական կապիտալ:

72.03. Եթե արտոնագրման թեկնածուն դեկտեմբերի 31-ի դրությամբ չի համապատասխանում սույն հոդվածի 72.01. կետի պահանջին, արտոնագրման թեկնածուն կարող է նոր աուդիտի ենթարկված հաշվապահական հաշվեկշիռ ներկայացնել ամենաուշը մարտի 31-ի դրությամբ՝ ցույց տալու համար, որ սույն հոդվածի 72.01 կետի ա) կամ բ) պայմաններից մեկը այդ ժամանակից ի վեր կատարվել է:

72.04. Այս չափանիշին համապատասխանելու նպատակով սեփական կապիտալը կարող է ներառել ստորադաս փոխառություններ, որոնք առնվազն հաջորդ 12 ամիսների ընթացքում ստորադասված են բոլոր այլ պարտավորություններին և անտոկոս փոխառություններին:

72.05. Արտոնագրողի գնահատման գործընթացը պետք է համապատասխանի Հավելված 7 -ին:

72.06. Բացառիկ դեպքերում արտոնագրման թեկնածուն կարող է հայցել գնահատման այլընտրանքային ամսաթիվ, եթե՝

ա) ֆինանսական տարվա վերջին օրը՝ մայիսի 31-ն է, որի դեպքում նա կարող է պատրաստել միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ նոյեմբերի 30-ին ավարտվող վեցամսյա ժամանակաշրջանի համար և օգտագործել այդպիսի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները սեփական կապիտալի կանոնի նպատակներով; կամ

բ) ֆինանսական տարվա վերջին օրը նոյեմբերի 30-ն է, որի դեպքում նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները նոյեմբերի 30-ին ավարտվող

հաշվետու ժամանակաշրջանի համարկարող են օգտագործվել սեփական կապիտալի կանոնի նպատակներով:

72.07. ա) կամ բ) կետերի նման բացառիկ դեպքերում, սեփական կապիտալի կանոնում դեկտեմբերի 31-ի բոլոր հղումները պետք է ընկալվեն որպես նոյեմբերի 30:

Հոդված 73. Ժամկետանց պարտավորությունների բացակայությունը ֆուտբոլային ակումբների նկատմամբ

73.01. Արտոնագրման թեկնածուն պետք է հիմնավոր ապացույցներ ներկայացնի առ այն, որ արտոնագրման մրցաշրջանին նախորդող մարտի 31-ի դրությամբ այլ ֆուտբոլային ակումբների նկատմամբ չունի մինչև արտոնագրման մրցաշրջանին նախորդող փետրվարի 28-ը վճարման ենթակա ժամկետանց պարտավորություններ (համաձայն Հավելված 6-ի)՝, որոնք ձևավորվել են տրանսֆերային գործունեությունից բխող պարտավորությունների արդյունքում

73.02. Տվյալ համատեքստում պարտավորությունները ֆուտբոլային ակումբներին վճարման ենթակա գումարներն են, որոնք ձևավորվել են.

ա) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների տրանսֆերների արդյունքում (համաձայն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի), ներառյալ ցանկացած գումար, որը ենթակա է վճարման որոշակի պայմանների բավարարման դեպքում

բ) առաջին անգամ ֆուտբոլիստների՝ որպես պորֆեսիոնալ գրանցման արդյունքում՝ ներառյալ որոշակի պայմանների բավարարման դեպքում վճարման ենթակա ցանկացած գումար

գ) ՖԻՖԱ-ի՝ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված մարզումային փոխհատուցման ու համերաշխության վճարների արդյունքում, և

դ) որպես համապարտ և համաչափ պարտավորություն՝ իրավասու մարմնի որոշմամբ, որևէ ֆուտբոլիստի կողմից պայմանագրի խզման արդյունքում:

73.03. Արտոնագրման թեկնածուն պետք է պատրաստի ու արտոնագրողին ներկայացնի տրանսֆերների աղյուսակ, եթե տրանսֆերների մասին տեղեկություններն արդեն բացահայված չեն արտոնագրողին՝ համաձայն ներքին տեղափոխությունների գործող պահանջների (օրգինակ՝ ազգային հաշվեգրման համակարգ), և արտոնագրողը կարող է արտահանել և գնահատել ողջ պահանջվող

տեղեկությունը՝ համաձայն սույն հոդվածի 73.04 և 73.05 կետերի: Տրանֆերների աղյուսակը պետք է պատրաստվի նույնիսկ այն դեպքում, եթե տվյալ ժամանակաշրջանում տրանսֆերներ/վարձակալությամբ տրանսֆերներ տեղի չեն ունեցել:

73.04. Արտոնագրման թեկնածուն պետք է բացահայտի՝

ա) Փետրվարի 28-ին նախորդող 12 ամսվա ընթացքում կնքված տրանսֆերային պայմանագրերի արդյունքում բոլոր նոր ֆուտբոլիստների գրանցումները (ներառյալ վարձակալությունները)՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք մինչև փետրվարի 28-ի դրությամբ վճարման ենթակա գումար կա,թե՝ ոչ:

բ) բոլոր տրանսֆերները, որոնց համար առկա է մինչև փետրվարի 28-ը վճարման ենթակա պարտավորություն (անկախ այն հանգամանքից դրանք վերաբերում են ֆուտբոլիստների թողարկմանը կամ գրանցմանը և անկախ նրանից, թե երբ են կատարվել տրանսֆերները)

գ) բոլոր այն տրանսֆերները, որոնց համար ենթակա վճարումները բողոքարկվել են փետրվարի 28-ի դրությամբ (ինչպես սահմանված է Հավելված 6-ում).

73.05. Տրանսֆերային աղյուսակը (յուրաքանչյուր ֆուտբոլիստի տրանսֆերի դեպքում) պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝

ա) ֆուտբոլիստի անունը և ծննդյան ամսաթիվը

բ) տրանսֆերային համաձայնագրի ամսաթիվը

գ) պարտատեր հանդիսացողֆուտբոլային ակումբի անվանումը,

դ) վճարված և/կամ վճարման ենթակա տրանսֆերի (կամ վարձակալության) գումարը (ներառյալ մարզումային փոխհատուցումն ու համերաշխության վճարը), անգամ եթե վճարումը չի պահանջվել պարտատիրոջ կողմից

ե) ֆուտբոլիստի գրանցման համար վճարված և/կամ վճարման ենթակա այլ ուղղակի ծախսերը

զ) տրանսֆերային համաձայնագրի շրջանակներում վճարված կամ վճարման ենթակա ցանկացած այլ փոխհատուցում.

Է) մինչև փետրվարի 28-ը մարված պարտավորությունները և վճարման ամսաթիվը(ամսաթվերը) (ինչպես սահմանված է Հավելված 6-ում).

ը) փետրվարի 28-ի դրությամբ առկա պարտավորությունների մնացորդները՝ ներառյալ յուրաքանչյուր չվճարված մասի համար վճարման ժամկետ(ժամկետներ)

թ) փետրվարի 28-ի դրությամբ առկա չմարված պարտավորությունները, ներառյալ յուրաքանչյուր չվճարված մասի համար վճարման ժամկետը (ժամկետները) և, առկայության դեպքում, փետրվարի 28-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում մարված պարտավորությունները մարման ամսաթվերի հետ միասին, ինչպես նաև մարտի 31-ի դրությամբ վճարման ենթակա ժամկետանց պարտավորությունները (որոնք տեղափոխվել են փետրվարի 28-ից)՝ բացատրական մեկնաբանության հետ միասին

ժ) Փետրվարի 28-ի դրությամբ հետաձգված գումարները (ինչպես սահմանված է Հավելված 6-ում, (ներառյալ յուրաքանչյուր հետաձգված մասի վճարման սկզբնական և նոր ժամկետը(ները) և կողմերի միջև գրավոր համաձայնագրի կնքման ամսաթիվը.

ի) փետրվարի 28-ի դրությամբ վիճարկվող գումարները (ինչպես սահմանված է Հավելված 6-ում), ներառյալ գործի հղումները և բոլոր ներգրավված կողմերի դիրքորոշումների համառոտ նկարագրությունը, և

լ) պայմանական վճարումներ (պայմանական պարտավորություններ), որոնք դեռևս չեն ճանաչվել փետրվարի 28-ի դրությամբ կազմված հաշվապահական հաշվեկշռում

73.06. Արտոնագրման թեկնածուն պետք է ըստ տրանսֆերային աղյուսակի հավասարակշռի/համապատասխանեցնի պարտավորությունների իր հաշվապահական գրանցմանը:

73.07. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի, որ տրասնֆերային աղյուսակն ամբողջական է, ճշգրիտ և համապատասխանում է սույն կանոնակարգն: Այն պետք է հիմնավորվի արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի/ստորագելու իրավունք ունեցող անձանց հակիրճ հայտարարությամբ և ստորագրությամբ:

Հոդված 74. Ժամկետանց պարտավորությունների բացակայությունը աշխատակիցների նկատմամբ

74.01. Արտոնագրման թեկնածուն պետք է հիմնավոր ապացույցներ ներկայացնի առ այն, որ արտոնագրման մրցաշրջանին նախորդող մարտի 31-ի դրությամբ իր աշխատակիցների նկատմամբ չունի մինչև արտոնագման մրցաշրջանին նախորդող փետրվարի 28-ը վճարման ենթակա պայմանագրային կամ իրավական պարտականությունների կատարման արդյունքում ձևավորված որևէ ժամկետանց պարտավորություն (ինչպես սահմանված է Հավելված 6-ում)

74.02. Տվյալ համատեքստում պարտավորությունները աշխատակիցների նկատմամբ պայմանագրային կամ իրավական պարտականությունների կատարման արդյունքում ձևավորված բոլոր տեսակի գումարներն են, ներառյալ աշխատավարձերը, հեղինակային իրավունքների վճարումները, լրավճարներն ու այլ պարգևատրումները, ինչպես սահմանված է ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման և ֆինանսական կայունության կանոնակարգի Հավելված K.1.2(c)-ում:

74.03. «Աշխատակիցներ» տերմինն իր մեջ ներառում է հետևյալ անձանց՝

ա) բոլոր պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներին՝ համաձայն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության գործադրվող կանոնակարգի,

բ) Հոդվածներ 36-55-ում նշված վարչական, տեխնիկական, բժշկական և անվտանգության հարցերով զբաղվող ողջ անձնակազմը; և

գ) Հոդվածներ 36-55-ում նշված պաշտոնյաների գործառույթներն իրականացնող ծառայություններ մատուցողներին:

74.04. Եթե «աշխատակիցներից» որևէ մեկը աշխատում է,, ունի կնքած պայմանագիր , հանդիսանում է խորհրդատու կամ այլ կերպ ծառայություններ է մատուցում իրավաբանական խմբի կառուցվածքում կամ հաշվետու խմբում արտոնագրման թեկնածուից զատ ընդգրկված այլ կազմակերպությունում , ապա այս պարտավորությունները նույնպես պետք է ներառվեն 74.01:

74.05. Այն անձանց նկատմամբ պարտավորությունները , որոնք տարբեր պատճառներով այլևս չեն աշխատում արտոնագրման թեկնածուի կամ արտոնագրման թեկնածուի իրավական խմբի կառուցվածքում գտնվող կազմակերպությունում, ենթարկվում են սույն չափանիշին և պետք է վճարվեն պայմանագրով նախատեսված կամ օրենքով սահմանված ժամկետում՝ անկախ այն բանից, թե ինչպես են այդ պարտավորությունները հաշվառվում ֆինանսական հաշվետվություններում:

74.06. Արտոնագրման թեկնածուն պետք է պատրաստի և արտոնագրողին տրամադրի աշխատակիցների վարձատրության աղյուսակ, որտեղ կներկայացվեն արտոնագրման մրցաշրջանին նախորդող փետրվարի 28-ի դրությամբ աշխատակիցների մասով հետևյալընդհանուր մնացորդային գումարները.

ա) պարտավորությունների ընդհանուր մնացորդը

բ) ժամկետանց ընդհանուր գումարը, ինչպես նաև մարտի 31-ի դրությամբ մնացած ժամկետանց գումարը (տեղափոխված փետրվարի 28-ից);

գ) հետաձգված ընդհանուր գումարը (ինչպես սահմանված է Հավելված 6-ում); և

դ) վիճարկվող ընդհանուր գումարը (ինչպես սահմանված է Հավելված 6-ում).

74.07. Յուրաքանչյուր աշխատակցի մասով փետրվարի 28-ի դրությամբ առկա ժամկետանց, հետաձգված կամ վիճարկվող գումարի վերաբերյալ անհրաժեշտ է տրամադրել առնվազն հետևյալ տեղեկատվությունը բացատրական մեկնաբանությունների հետ միասին:.

ա) աշխատակցի անունը և զբաղեցրած պաշտոնը/գործառույթը (անկախ այն հանգամանքից տվյալ անձն աշխատել է կամ աշխատանքի է ընդունվել փետրվարի 28-ի նախորդող տարվա ընթացքում)

բ) աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման ամսաթիվը (եթե առկա է)

գ) Ժամկետանց գումարները, ներառյալ յուրաքանչյուր չվճարված մասի վճարման ժամկետը (ժամկետները) և, անհրաժեշտության դեպքում, փետրվարի 28-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում մարված գումարները մարման ամսաթվերի հետ միասին, ինչպես նաև մարտի 31-ի դրությամբ ժամկետանց պարտավորությունները (տեղափոխված փետրվարի 28-ից);

դ) հետաձգված գումարները, ներառյալ յուրաքանչյուր հետաձգված մասի վճարման սկզբնական և նոր ժամկետները, և կողմերի միջև գրավոր համաձայնագրի կնքման ամսաթիվը; և

ե) վիճարկվող գումարները, ներառյալ գործի հղումները և բոլոր ներգրավված կողմերի դիրքորոշումների համառոտ նկարագրությունը:

74.08. Արտոնագրման թեկնածուն պետք է իր պարտավորությունները՝ ըստ աշխատակիցների վարձատրության աղյուսակի ,համապատասխանեցնի իր համապատասխան հաշվապահական ցուցանիշների հետ:

74.09. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի, որ աշխատակիցների վարձատրության աղյուսակը ամբողջական է, ճշգրիտ և համապատասխանում է սույն կանոնակարգին: Այն պետք է հիմնավորվի արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի/ստորագելու իրավունք ունեցող անձանց հակիրճ հայտարարությամբ և ստորագրությամբ:

Հոդված 75. Ժամկետանց պարտավորությունների բացակայությունը սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ

75.01. Արտոնագրման թեկնածուն պետք է հիմնավոր ապացուցներ ներկայացնի առ այն, որ արտոնագրման մրցաշրջանին նախորդող մարտի 31-ի դրությամբ

սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ չունի մինչև արտոնագրման մրցաշրջանին նախորդ փետրվարի 28-ը վճարման ենթակաժամկետանց պարտավորություններ (ինչպես սահմանված է Հավելված 6-ում), որոնք ծագել են աշխատակիցների նկատմամբ պայմանագրային կամ իրավական պարտավորությունների արդյունքում:

75.02. Տվյալ համատեքստում պարտավորությունները սոցիալական և հարկային մարմիններին, բոլոր աշխատակիցների նկատմամբ պայմանագրային կամ իրավական պարտականությունների կատարման արդյունքում ձևավորված վճարման ենթակա գումարներն են: Պարտավորությունները ներառում են՝(սակայն չեն սահմանափակվում) անձնական եկամտային հարկը, կենսաթոշակային ֆոնդի վճարումները, սոցիալական ապահովության և նմանատիպ վճարումները:

75.03. Արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրողին ներկայացնի արտոնագրման մրցաշրջանին նախորդող փետրվարի 28-ի դրությամբ սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ պարտավորությունների աղյուսակ, որտեղ անհրաժեշտ է ներկայացնել՝

ա) Սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ պարտավորությունների ընդհանուր մնացորդը;

բ) Ժամկետանց ընդհանուր գումարը, ինչպես նաև մարտի 31-ի դրությամբ մնացած ժամկետանց գումարը (տեղափոխվածփետրվարի 28-ից);

գ) Հետաձգված ընդհանուր գումարը (ինչպես սահմանված է Հավելված 6-ում);

դ) Վիճարկվող ընդհանուր գումարը (ինչպես սահմանված է Հավելված 6-ում); և

ե) Ընդհանուր գւումարը պայմանավորված իրավասու մարմնի առկախված որոշումով (ինչպես սահմանված է Հավելված 6-ում):

75.04. Փետրվարի 28-ի դրությամբ սոցիալական/հարկային մարմիններին վճարման ենթակա յուրաքանչյուր ժամկետանց, հետաձգված, վիճարկվող կամ առկախ գումարի վերաբերյալ առնվազն պետք է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝ բացատրական մեկնաբանությունների հետ միասին:. `

ա) Պարտատիրոջ անունը

բ) Ժամկետանց գումարները, ներառյալ յուրաքանչյուր չվճարված մասի համար վճարման ժամկետը (ժամկետները) և, անհրաժեշտության դեպքում, փետրվարի 28-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում մարված գումարները մարման ամսաթվերի հետ միասին, ինչպես նաև մարտի 31-ի դրությամբ մնացած ժամկետանց պարտավորությունը (տեղափոխված փետրվարի 28-ից);

գ) Հետաձգված գումարները, ներառյալ յուրաքանչյուր հետաձգված մասի վճարման սկզբնական և նոր ժամկետները, և կողմերի միջև գրավոր համաձայնագրի կնքման ամսաթիվը.

դ) Գումարները պայմանավորված իրավասու մարմնի առկախված որոշումով և արտոնագրման թեկնածուի պահանջի համառոտ նկարագրությունը; և և

ե) Վիճարկվող գումարները, ներառյալ գործին առնչվող հղումները և բոլոր ներգրավված կողմերի դիրքորոշումների համառոտ նկարագրությունը:

75.05. Արտոնագրման թեկնածուն պետք է իր պարտավորությունները՝ ըստ սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ պարտավորությունների աղյուսակի, համապատասխանեցնի իր համապատասխան հաշվապահական ցուցանիշների հետ:

75.06. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի, որ սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ պարտավորությունների աղյուսակն ամբողջական է, ճշգրիտ և համապատասխանում է սույն կանոնակարգին: Այն պետք է հիմնավորվի արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի/ստորագրելու իրավունք ունեցող անձանց հակիրճ հայտարարությամբ և ստորագրությամբ:

Հոդված 76. Ժամկետանց պարտավորությունները ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի նկատմամբ

76.01. Արտոնագրման թեկնածուն պետք է ապացուցի, որ արտոնագրման մրցաշրջանին նախորդող մարտի 31-ի դրությամբ չունի մինչև արտոնագրման մրցաշրջանին նախորդող փետրվարի 28-ը վճարման ենթակա ժամկետանց պարտավորություններ (ինչպես սահմանված է Հավելված 6-ում) ՈՒԵՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի արտոնագրողի կողմից նշանակված լրացուցիչ կազմակերպությունների կամ արտոնագրողի նկատմամբ:

76.02. ՈՒԵՖԱ-ի նկատմամբ պարտավորությունները ներառում են(սակայն չեն սահմանափակվում դրանցով) Ակումբների ֆինանսական կառավարման մարմնի (CFCB) կողմից պարտադրված ֆինանսական վճարումները::

76.03. ՀՖՖ Ակումբներիկ արտոնագրման բաժնի կողմից սահմանված ձևով և վերջնաժամկետում արտոնագրման թեկնածուն պետք է պատրաստի և ներկայացնի ՈՒԵՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կողմից նշանակված լրացուցիչ կազմակերպությունների և արտոնագրողի նկատմամբ, ընդհանուր

պարտավորությունները և ժամկետանց պարտավորությունների առկայությունը կամ բացակայությունը հավաստող հայտարարագիր

Հոդված 77. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը

77.01. Արտոնագրման թեկնածուն պետք է պատրաստի և ներկայացնի ապագա ֆինանսական տեղեկատվություն, որպեսզի արտոնագրողին ներկայացնի իր՝ մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը գործունեության անընդհատությունը ապահովելու հնարավորությունը, եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունների (ներկայացված Հոդվածի 70-ի համաձայն) վերաբերյալ աուդիտորի եզրակացությունը, ներառում է գործունեության անընդհատության վերաբերյալ, հատուկ շեշտադրում, նշանակալի աուդիտորական դիտարկում կամ ձևավորված կարծիք/եզրակացություն:

77.02. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է ընդգրկի այն ժամանակաշրջանը, որը սկսվում է ֆինանսական տարվա վերջին օրվանից անմիջապես հետո, և այն պետք է ընդգրկի առնվազն ողջ արտոնագրման մրցաշրջանը:

77.03. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը բաղկացած է՝

ա) կանխատեսվող հաշվապահական հաշվեկշռից՝ անմիջապես նախորդող հաշվետու ժամանակաշրջանի համեմատական ցուցանիշներով;

բ) կանխատեսվող շահույթի և վնասի հաշվետվությունից՝ անմիջապես նախորդող հաշվետու ժամանակաշրջանի և միջանկյալ ժամանակաշրջանի(եթե կիրառելի է) համեմատական ցուցանիշներով;

գ) կանխատեսվող դրամական հոսքերի վերաբերյալ հաշվետվությունից՝ անմիջապես նախորդող հաշվետու ժամանակաշրջանի համեմատական ցուցանիշներով;

դ) կից ծանոթագրություններից, ներառյալ յուրաքանչյուր էական ենթադրության վերաբերյալ հակիրճ նկարագրություն /պատմական, ֆինանսական և այլ տեղեկատվության համապատասխան հղումներով/, որն օգտագործվել է ապագա ֆինանսական տեղեկատվության նախապատրաստման համար, ինչպես նաև հակիրճ նկարագրություններ այնպիսի էական ռիսկերի, որոնք

կարող են բացասական անդրադառնալ կազմակերպության հետագա ֆինանսական արդյունքների վրա:

77.04. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է պատրաստվի նվազագույնը եռամսյակային կտրվածքով:

77.05. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է պատրաստվի հետևողականորեն նախորդ տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հետ միասին՝ կիրառելով հաշվապահական հաշվառման նույն քաղաքականությունը, որն օգտագործվել է տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, բացառությամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության այն փոփոխությունների, որոնք տեղի են ունեցել վերջին հաշվետու ամսաթվից հետո, և որոնք արտացոլված կլինեն հաջորդ տարվա հաշվետվություններում: Նշված դեպքերը պետք է մանրամասնորեն նկարագրվեն:

77.06. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է համապատասխանի Հավելված 4-ով սահմանված տեղեկատվության տրամադրմանը նվազագույն պահանջներին և Հավելված 5-ով սահմանված հաշվապահական հաշվառման սկզբունքներին: Լրացուցիչ հոդվածները կամ նշումները պետք է ներառվեն այն դեպքում, երբ դրանք պարզաբանում են ներկայացնում կամ, եթե դրանց բացակայության դեպքում ապագա ֆինանսական տեղեկատվությունը թերի և/կամ ոչ ճշգրիտ կլինի:

77.07. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև ենթադրությունները, որոնց հիման վրա այն պատրաստվել է, պետք է հաստատված լինեն արտոնագման թեկնածուի ղեկավարության կողմից, ինչը պետք է հաստատվի արտոնագրման թեկնածուի ղեկավարության հայտարարությամբ առ այն, որ ապագա ֆինանսական տեղեկատվությունն ամբողջական է, ճշգրիտ և համապատասխանում է կանոնակարգին:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ Հայաստանի ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԹԻՄԸ (2-ՐԴ ԹԻՄԸ)

Հոդված 78. Ընդհանուր դրույթներ

78.01. Այն պարագայում, երբ արտոնագրման թեկնածուն ներկայացնում է Հայաստանի Առաջին խմբի առաջնության մասնակից թիմ, ապա պարտավոր է բավարարել սույն գլխում սահմանված երկրորդ թիմի վերաբերյալ նվազագույն պահանջները:

Հոդված 79. Հայաստանի Առաջին խմբի առաջնության խաղերի անցկացման հաստատված մարզադաշտը

79.01. Արտոնագրման թեկնածուն իր տրամադրության տակ պետք է ունենա Հայաստանի Առաջին խմբի առաջնության խաղերի անցկացման համար նախատեսված մարզադաշտ, որը պետք է գտնվի ՀՀ տարածքում և հաստատված լինի ՀՖՖ-ի կողմից՝ համաձայն ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի Մաս III-ի պահանջների:

79.02. Եթե արտոնագրման թեկնածուն չի հանդիսանում մարզադաշտի սեփականատերը, ապա նա պետք է ներկայացնի գրավոր պայմանագիր այն մարզադաշտի սեփականատիրոջ (սեփականատերերի) հետ, որը կարող է օգտագործել:

Հոդված 80. Երկրորդ թիմի գլխավոր մարզիչը

80.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի համապատասխան որակավորմամբ երկրորդ թիմի գլխավոր մարզիչ, ով ՀՖՖ FMS համակարգում հաստատված է որպես երկրորդ թիմի գլխավոր մարզիչ և պատասխանատու է երկրորդ թիմի հետևյալ հարցերի համար.

ա) ֆուտբոլիստների ընտրություն;

բ) Մարտավարություն և մարզում;

գ) ֆուտբոլիստների և տեխնիկական անձնակազմի ղեկավարում հանդերձարանում և տեխնիկական գոտում խաղից առաջ, խաղի ընթացքում և դրանից հետո; և

դ) ԶԼՄ-ների հետ կապված պարտականությունները (մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ և այլն):

80.02. Երկրորդ թիմի Գլխավոր մարզիչը պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի «Ա» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 81. Երկրորդ թիմի այլ մարզիչներ

81.01. Եթե արտոնագրման թեկնածուն նշանակում է երկրորդ թիմի այլ մարզիչներ (օրինակ՝ երկրորդ թիմի գլխավոր մարզչի օգնական, երկրորդ թիմի դարպասապահների մարզիչ, ֆիզիկական պատրաստականության մարզիչ և այլն), ապա այդ մարզիչները պետք է ունենան ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն ՈՒԵՖԱ-ի որևէ անդամ ասոցիացիայի կողմից տրված հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը՝

ա) ՈՒԵՖԱ-ի «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր

բ) Գործող ՈՒԵՖԱ-ի կողմից Իրավասության Ճանաչում (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է վերոնշյալ ա)-ով նախատեսված արտոնագրին:

Հոդված 82. Երկրորդ թիմի Բժիշկը

82.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ բժիշկ, ով պատասխանատու է ֆուտբոլային հանդիպումների և մարզումների ընթացքում բժշկական ծառայությունների մատուցման, ինչպես նաև հակադոպինգային քաղաքականության համար:

82.02. Երկրորդ թիմի բժիշկը պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին և առնվազն ունենա

- բարձրագույն բժշկական կրթություն,
- առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական՝ Հոդվածի 39.03 կետում նշված մասնագիտություններից մեկի և սպորտային բժշկություն (սպորտային բժիշկ) նեղ մասնագիտացման (կլինիկական օրդինատուրա կամ արտերկրյա համարժեք մագիստրատուրա) կամ սպորտային բժշկության նեղ մասնագիտացումով օրդինատուրայում սովորելու վերաբերյալ

համապատասխան տեղեկանքի կամ Սպորտային բժշկության նեղ մասնագիտացման Fellowship ծրագրում սովորելու մասին տեղեկանքի միաժամանակյա առկայություն,

- ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված ERC (European Resuscitation Council) կամ նրա կողմից ստեղծված Armenian Resuscitation Council-ի (Հայկական վերակենդանացման խորհուրդ) կամ Հայաստանում նրանց անունից Course Organisers/Centers (CO/CC) կողմից իրականացված BLS կրթական ծրագրի ակտիվ վկայական,
- ավագ բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր, ինչպես նաև ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 613-Ն որոշմամբ «Շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող պարտադիր միջոցառումների ցանկում» ներառված՝ ա) Արտակարգ իրավիճակում առաջին բուժօգնության առնվազն 12 ՇՄԶ կրեդիտով և բ) Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների առնվազն 10 ՇՄԶ կրեդիտով և ՀՀ առողջապահության նախարարի կողմից վավերացված վկայականների առկայություն (սույն մասն անցումային շրջանով ամփոփվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ին)։

Հոդված 83. Երկրորդ թիմի Ֆիզիոթերապիստը

83.01. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ ֆիզիոթերապիստ, ով պատասխանատու է ֆուտբոլային հանդիպումների և մարզումների ժամանակ առաջին թիմի ֆուտբոլիստներին բժշկական օգնության ցուցաբերման և մերսման համար:

83.02. Երկրորդ թիմի Ֆիզիոթերապիստը պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին և առնվազն ունենա

- կինեզիոլոգ կամ ֆիզիոթերապիստ մասնագիտությամբ բարձրագույն կրթության կամ մերսողի միջին մասնագիտական կրթություն,

  Բուժակ-մերսողի միջին մասնագիտական կրթության դեպքում պարտադիր է նաև միջին բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր
- ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված ERC (European Resuscitation Council) կամ նրա կողմից ստեղծված Armenian Resuscitation Council-ի (Հայկական վերակենդանացման խորհուրդ) կամ Հայաստանում նրանց անունից Course Organisers/Centers (CO/CC) կողմից իրականացված BLS կրթական ծրագրի ակտիվ վկայական:

ՄԱՍ 3: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 84. Նամակագրության լեզուն

84.01. ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի և/կամ արտոնագրվածների միջև ամբողջ նամակագրությունը պետք է լինի անգլերեն լեզվով, ընդ որում ՈՒԵՖԱ-ն կարող է ՀՖՖ-ից և/կամ արտոնագրվածներից խնդրել անհրաժեշտ փաստաթղթերի հաստատված թարգմանությունը, ինչը պետք է արվի սեփական միջոցներով:

Հոդված 85. Հավելվածները

85.01. Սույն կանոնակարգի բոլոր հավելվածները կազմում են վերջինիս անբաժանելի մասը:

Հոդված 86. Համապատասխանելիության աուդիտները

86.01. ԱՖՎՄ-ն և ՈՒԵՖԱ-ի վարչակազմը կամ նրա կողմից նշանակված գործակալությունը, գնահատող կազմակերպությունը կամ այլ մարմիններն իրավունք ունեն ցանկացած ժամանակ համապատասխանելիության աուդիտի ենթարկել արտոնագրողին կամ արտոնագրման թեկնածուին/արտոնագրվածին:

86.02. Համապատասխանելիության աուդիտի նպատակն է համոզվել, որ արտոնագրողը, ինչպես նաև արտոնագրման թեկնածուն/արտոնագրվածը կատարել են իրենց պարտականությունները՝ համաձայն սույն կանոնակարգի, և որ ՈՒԵՖԱ-ի Արտոնագրերը պատշաճ կերպով շնորհվել են արտոնագրողի կողմից վերջնական որոշում կայացնելիս:

86.03. ՈՒԵՖԱ-ի վարչակազմը կարող է նշանակել և հանձնարարել երրորդ կողմի գործակալություններին, գնահատողներին կամ այլ մարմիններին իրականացնել համապատասխանելիության աուդիտ:

86.04. Համապատասխանելիության աուդիտ անցկացնելիս ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի անգլերեն և հայերեն տարբերակների մեկնաբանություններում ցանկացած անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տարբերակին:

86.05. Համաձայն ՈՒԵՖԱ-ի կանոնադրության, ինչպես նաև սույն կանոնակարգի շրջանակներում արտոնագրողի / արտոնագրման թեկնածուի / արտոնագրվածի պարտականությունների, և լիազորված երրորդ կողմի կողմից համապատասխանելիության աուդիտի առնչությամբ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու նպատակով, արտոնագրողը/արտոնագրման թեկնածուն / արտոնագրվածը պետք է և համաձայնում է որոշակի ֆինանսական և այլ տեղեկություններ տրամադրել ՈՒԵՖԱ-ին և համապատասխանելիության աուդիտ իրականացնող երրորդ կողմին:

86.06. ՈՒԵՖԱ-ին և լիազորված երրորդ կողմին հասանելի տեղեկատվության գաղտնի պահելը երաշխավորելու նպատակով արտոնագրողը/արտոնագրվածը/արտոնագրման թեկնածուն, ՈՒԵՖԱ-ն և լիազորված երրորդ կողմը կնքում են գաղտնիության համաձայնագիր: Գաղտնիության նման համաձայնագիրը կառավարվում և մեկնաբանվում է Շվեյցարիայի օրենսդրության համաձայն՝ բացառելով օրենքի սկզբունքների եվ միջազգային պայմանագրերի ցանկացած բախում, ներառյալ՝ ապրանքների միջազգային վաճառքի պայմանագրերի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (CISG):

86.07. ՈՒԵՖԱ-ի և արտոնագրողի/արտոնագրման թեկնածուի/արտոնագրվածի միջև ցանկացած վեճ, որը բխում է գաղտնիության համաձայնագրից կամ այլ կերպ կապված է վերջինիս հետ, պետք է ներկայացվի բացառապես Շվեյցարիայի Լոզանում գտնվող CAS-ին՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի կանոնադրությամբ սահմանված համապատասխան դրույթներին:

Հոդված 87. Կարգապահական գործընթացները

87.01. Սույն կանոնակարգի ցանկացած դրույթի խախտում քննվում է ՀՖՖ-ի կողմից՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի:

Հոդված 88. Կիրառելի դրույթները

88.01. ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժինը պետք է կայացնի որոշումներ և սահմանի մանրամասն շարադրված դրույթներ ուղեցույցների, շրջաբերական գրությունների կամ այլ համապատասխան փաստաթղթի տեսքով, որպեսզի ապահովի սույն կանոնակարգի կիրառումը:

Հոդված 89. Նախկին կանոնակարգի չեղյալ համարումը, սույն կանոնակարգի ընդունումը և ուժի մեջ մտնելը

89.01. Սույն կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից 2025 թվականի հոկտեմբեր 31-ին:

89.02. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից՝ բացառությամբ Հոդված 41-ում սահմանված սպորտային բժշկության նեղ մասնագիտացման առկայության պահանջին, որն ուժի մեջ է մտնում 2026թ. հուլիսի 1-ից:

89.03. Սույն կանոնակարգը փոխարինում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգին (2024թ. խմբագրություն):

89.04. Սույն կանոնակարգը չի կարող փոփոխություններ կրել արտոնագրման հիմնական գործընթացի ընթացքում, քանի դեռ պատշաճ կերպով հաստատված չէ ՈՒԵՖԱ-ի կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ստորև ներկայացված է ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի հիմնական ընթացակարգի գծանկարը:

Գծանկարում պատկերված թվերը տրամաբանական ընթացքով մանրամասն ներկայացնում են այն քայլերը, որոնք պետք է կատարվեն արտոնագրման թեկնածուի կողմից ակումբի արտոնագրային փաթեթի պատրաստման ընթացքում: Գծանկարում հերթականությամբ ներկայացված են 1-ից 30 թվերը (ձախ սյունակ): Այս քայլերին պետք է հետևել այն դեպքում, երբ ընթացակարգում ոչ մի հարց չի առաջացել, այսինքն՝ արտոնագրի հայտ ներկայացրած կողմը համապատասխանում է բոլոր պահանջներին, և արտոնագրի շնորհման ընթացակարգն ընթանում է՝ ըստ կատարյալ ծրագրի:

Գծանկարում պատկերված տառերը վերաբերում են այն հարցերին, որոնք կարող են ծագել կամ ամենայն հավանականությամբ կծագեն ընթացակարգում և որոնց հետ պետք է վարվել համապատասխանաբար: Գծանկարում քայլերի հերթականությունը նշվում է (A)-ից մինչև (M) տառերով (կենտրոնական սյունակ): Աջակողմյան սյունակը ընթերցողին ներկայացնում է յուրաքանչյուր քայլի համառոտ նկարագրությունը:

Հիմնական ընթացակարգը բաղկացած է 2 մասից՝

- Մաս I – բոլոր արտոնագրման թեկնածուների համար (և' ՈՒԵՖԱ-ի, և' Ազգային արտոնագրեր)
- Մաս II – արտոնագրման այն թեկնածուների համար, ովքեր մարզական որակավորում ունեն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար (միայն ՈՒԵՖԱ-ի արտոնագիր):

Հիմնական Ընթացակարգ

էջ 1



1. Արտոնագրման պատասխանատուն կազմում է ակումբի արտոնագրային փաստաթղթերը, որոնց մեջ մտնում են ակումբների արտոնագրման չափանիշները, բոլոր փաստաթղթային ձևերը և փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետները:

2. Արտոնագրման պատասխանատուն արտոնագրման թեկնածուին է հանձնում փաստաթղթերը:Փաթեթը արտոնագրողին է ուղարկվում էլեկտրոնային փոստով:

3. Արտոնագրման թեկնածուն լրացնում և համաձայնեցված ժամկետներում արտոնագրման պատասխանատուին է վերադարձնում փաստաթղթերը:

4. Արտոնագրման պատասխանատուն, ստուգում է ուղարկված փաստաթղթերի ամբողջականությունը:

- Սկսած քայլ 5-ից: Եթե արտոնագրման թեկնածուն չի ապահովել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա Արտոնագրման պատասխանատուն կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ՝ բացակայող տեղեկատվությունը ստանալու նպատակով:
- Սկսած քայլ 8-ից: Եթե արտոնագրման փորձագետը գտնում է բնագավառներ, որոնք հետագա տեղեկատվության կարիք ունեն, նա կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ՝ հետագա պարզաբանում պահանջող որևէ հարց քննարկելու համար:

6. Արտոնագրման պատասխանատուն տեսակավորում է ստացած տեղեկատվությունը, գրանցում այն և փոխանցում նշանակված փորձագետներին, ովքեր պատասխանատու են տվյալ ոլորտի համար:

7.Նշանակված փորձագետները ստանում և վերստուգում են արտոնագրման թեկնածուի կողմից ուղարկված փաստաթղթերը (օր.՝ իրավական փորձագետը ստուգում է իրավական չափանիշը, ֆինանսական փորձագետը՝ֆինանսական չափանիշը, և այլն): Ստուգումները պետք է հիմնավորված լինեն օժանդակող փաստաթղթերով (փաստարկներ, որ ակումբների արտոնագրման չափանիշները բավարարված են): Հիմք ընդունելով արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան փորձագետների կարծիքներն այդ առնչությամբ, արտոնագրման պատասխանատուն որոշում է կայացնում՝ արդյոք արտոնագրման թեկնածուն անցնում է հաջորդ փուլ, թե փաստաթղթերը հետ են վերադարձվում տվյալ թեկնածուին բարելավման նպատակով:

9. ԱՊ-ն ծանոթանում է ներկայացված զեկույցներին և փորձագետների կարծիքներին:

Հիմնական Ընթացակարգ

էջ 2



10.ԱՊ-ն գնահատում է արտոնագրման թեկնածուին: Փորձագետների զեկուցագրերի և/կամ տեղում կատարված ստուգայցերի հիման վրա նա կարող է առանձնացնել այն բնագավառները, որոնք մտահոգության տեղիք են տալիս և հետագա պարզաբանման կարիք ունեն:

(B) Արտոնագրման փորձագետը արտոնագրման թեկնածուի հետ քննարկում է այն բոլոր բնագավառները, որոնք հետագա տեղեկատվության կարիք ունեն, և փորձում է փոխադարձ համաձայնության հասնել ձեռնարկվող հետագա գործողությունների հարցում: Եթե ԱՊ-ն գտնում է բնագավառներ, որոնք հետագա վերստուգման կարիք ունեն, նա կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ իր մտահոգությունները քննարկելու համար: Արտոնագրման պատասխանատուն կարող է լրացուցիչ բացատրություններ կամ օժանդակող փաստաթղթեր պահանջել կամ որոշել այցելություն կատարել տրամադրված տեղեկատվության տեղում ստուգման նպատակով: Տեղում ստուգումներ կատարելու նպատակով ծրագրված այցելության ժամանակ արտոնագրման պատասխանատուն և/կամ փորձագետը հանդիպում են արտոնագրման թեկնածուի հետ և քննարկում խնդրահարույց բնագավառները: Հստակեցվում են ակումբի հետագա հնարավոր գործողությունները, ինչպես նաև այդ գործողությունների իրականացման ժամանակացույցը՝ խնդրահարույց բնագավառները շտկելու համար:

12. Եթե արտոնագրման պատասխանատուն հետագա պարզաբանման կարիք ունեցող որևէ բնագավառ չի հատկանշում, ապա համաձայնեցված ժամկետի ընթացքում պատրաստում է զեկույց Ակումբների Արտոնագրման Կոմիտեի դիտարկման համար: Այս զեկույցը պարունակում է տեղում կատարված ստուգումների բոլոր հանգամանքները, ինչպես նաև այլ ոլորտներ, ներառյալ արտոնագիր շնորհելու կամ չշնորհելու վերաբերյալ ԱՊ-ի եզրակացությունը:

(C) Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնվում է արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվող գործողությունների շուրջ, ուրեմն վերադարձ քայլ 10: Եթե արտոնագրման թեկնածուն համաձայն չէ արտոնագրման պատասխանատուի զեկույցի հետ և հրաժարվում է նոր տեղեկատվություն տրամադրել կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել, ուրեմն վերադարձ քայլ 12:

13. Առաջին ատյանի (ԱԱԿ) ստուգում: Սա կարող է լինել կա՛մ արտաքին փորձագետներից բաղկացած կոմիտե, կա՛մ կոմպետենտ ներքին աշխատակիցների խումբ: Ակումբների Արտոնագրման Կոմիտեն կարող է պահանջել լսումներ արտոնագրման թեկնածուի հետ, եթե ակումբում տեղի է ունեցել խոշոր տնտեսական կարևորության որևէ իրադարձություն:

14. Ակումբների Արտոնագրման կոմիտեն որոշում է կայացնում շնորհել արտոնագիր, թե ոչ:

(C) Արտոնագրի մերժում: Արտոնագրման թեկնածուն տեղեկացվում է նշված պատճառների մասին և ստանում բողոքարկման իրավունք:

(E) Արտոնագրման թեկնածուն բողոքարկում է: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն ծանուցում է ստանում և համաձայնեցնում հանդիպման օրը:

(F) Արտոնագրման թեկնածուն պատրաստում է զեկույց և ուղարկում վերաքննիչ մարմնին (ԱԱԲԿ):

(G) Վերաքննիչ մարմինը (ԱԱԲԿ) նիստ է հրավիրում և քննարկում ակումբի բողոքը:

(H) Վերաքննիչ մարմինը (ԱԱԲԿ) որոշում է կայացնում շնորհել արտոնագիր, թե ոչ:

15. Արտոնագրի շնորհում

(I) Արտոնագրի մերժում, որտեղ նշված են մերժման մանրամասները:

(J)-ից (M)Արտոնագրման թեկնածուն բողոք է ներկայացնում Արբիտրաժային մարմին: (E)-ից (I) ընթացակարգերը կիրառվում են:

16. Արտոնագրման պատասխանատուն ՀՖՖ-ին է ներկայացնում արտոնագիր ստացած թեկնածուների ցանկը:

Հիմնական Ընթացակարգ

էջ 3

05.04

17. Արտոնագրման պատասխանատուն ստանում է արտոնագրման թեկնածուի ֆինանսական փաստաթղթերը

18. Արտոնագրման պատասխանատուն ստուգում է ներկայացված փաստաթղթերի ամբողջական լինելը

19. Որոշում

(A) Արտոնագրման թեկնածուի հետ կապ և գործողությունների համաձայնեցում

10.04

20. Ֆինանսական փորձագետները ստուգում են փաստաթղթերը և զեկուցում արտոնագրման պատասխանատուին

21. Որոշում

22. Արտոնագրման պատասխանատուն ծանոթանում է փորձագետների զեկույցին

1

17. Արտոնագրման թեկնածուն պատրաստում է ֆինանսական փաստաթղթերը և վերադարձնում դրանք արտոնագրման պատասխանատուին մինչև սահմանված վերջնաժամկետը:

18. Արտոնագրման պատասխանատուն ստուգում է արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը:

(A)
- Սկսված քայլ 19-ից: Արտոնագրման թեկնածուն չի ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Արտոնագրման պատասխանատուն կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ բացակայող տեղեկատվությունը ստանալու նպատակով
- Սկսված քայլ 22-ից: Ֆինանսական փորձագետները ստուգում են թեկնածուի փաստաթղթերը և մատնանշում այն ոլորտները, որտեղ արտոնագրման թեկնածուից պահանջում են լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

20. Ֆինանսական փորձագետները ստուգում են թեկնածուի փաստաթղթերը: Ստուգումները պետք է հիմնավորված լինեն օժանդակող փաստաթղթերով (փաստարկներ, որ ֆինանսական չափանիշները բավարարված են): Հիմք ընդունելով արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան փորձագետների կարծիքներն այդ առնչությամբ, արտոնագրման պատասխանատուն որոշում է կայացնում՝ արդյոք արտոնագրման թեկնածուն անցնում է հաջորդ փուլ, թե փաստաթղթերը հետ են վերադարձվում տվյալ թեկնածուին բարելավման նպատակով:

22. Արտոնագրման պատասխանատուն ծանոթանում է զեկույցի և փորձագետների կարծիքների հետ:

Հիմնական Ընթացակարգ

էջ 4



23. Արտոնագրման պատասխանատուն գնահատում է արտոնագրման թեկնածուին: Փորձագետների զեկուցագրերի և/կամ տեղում ստուգումների արդյունքների հիման վրա արտոնագրման պատասխանատուն կարող է առանձնացնել մտահոգության տեղիք տվող այն բնագավառները, որոնք հետագա ուսումնասիրության կարիք ունեն:

(B) Արտոնագրման պատասխանատուն արտոնագրման թեկնածուի հետ քննարկում է առանձնացված այն ոլորտները, որոնք մտահոգության տեղիք են տալիս: Արտոնագրման պատասխանատուն կարող է պահանջել հետագա բացատրություններ կամ օժանդակող փաստաթղթեր կամ կարող է որոշել այցելություն կատարել տեղում հետագա ուսումնասիրության նպատակով: Եթե պլանավորված է այցելություն, ապա արտոնագրման պատասխանատուն հանդիպում է արտոնագրման թեկնածուի հետ և քննարկում խնդրահարույց բնագավառներն ու արտոնագրման թեկնածուի պոտենցիալ գործողությունները այդ բնագավառները համաձայնեցված ժամանակացույցի ընթացքում շտկելու համար:

25. Եթե արտոնագրման պատասխանատուն չի տեսնում որևէ բնագավառ, որը հետագա ուսումնասիրության կարիք ունի, ապա նա մինչև համաձայնեցված վերջնաժամկետը զեկույց է պատրաստում Ակումբների Արտոնագրման Կոմիտեի (ԱԱԿ) հարմար: Այս զեկույցը պարունակում է տեղում կատարված ստուգումների բոլոր հանգամանքները, ինչպես նաև այլ ոլորտներ, ներառյալ արտոնագիր շնորհելու կամ չշնորհելու վերաբերյալ ԱՊ-ի եզրակացությունը:	(C) Թեկնածուն համաձայնվում է գործողությունների ծրագրի հետ և անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում խնդրահարույց ոլորտները շտկելու համար: Թեկնածուն չի համաձայնվում գործողությունների ծրագրի հետ և չի կատարում հանձնարարված գործողությունները:

26. Արտոնագրման պատասխանատուն ստանում է արտոնագրման թեկնածուի ղեկավարության ներկայացուցչական նամակը, որտեղ նշված է, թե արդյոք տեղի է ունեցել խոշոր տնտեսական կարևորության որևէ իրադարձություն:

27. Արտոնագրման կոմիտեի ստուգում: Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (ԱԱԿ) կարող է պահանջել լսումներ թեկնածուի հետ, եթե, մասնավորապես, ակումբում տեղի է ունեցել խոշոր տնտեսական կարևորության որևէ իրադարձություն:

28. Ակումբների Արտոնագրման Կոմիտեն որոշում է կայացնում շնորհել արտոնագիր, թե ոչ:	(C) Արտոնագրի մերժում: Արտոնագրման թեկնածուն տեղեկացվում է նշված պատճառների մասին և ստանում է որոշումը բողոքարկելու իրավունք

(E) Արտոնագրման թեկնածուն բողոքարկում է: Վերաքննիչ մարմինը (ԱԲԿ) ծանուցում է ստանում և համաձայնեցնում հանդիպման օրը:

(F) Արտոնագրման պատասխանատուն պատրաստում է զեկույց և ուղարկում այն վերաքննիչ մարմնին (ԱԱԲԿ):

(G) Վերաքննիչ մարմինը հանդիպում և քննարկում է ակումբի բողոքը:

(H) Վերաքննիչ մարմինը (ԱԱԲԿ) որոշում է կայացնում շնորհել արտոնագիր, թե ոչ:

29. Արտոնագրի ստացում	(I) Արտոնագրի մերժում, որտեղ նշված են մերժման մանրամասները:

(J)-ից (M) Արտոնագրման թեկնածուն բողոքարկման դիմում է ներկայացնում Արբիտրաժային մարմին: (E)-ից (I) ընթացակարգերը կիրառվում են:

30. Արտոնագրման պատասխանատուն ՈՒԵՖԱ-ի համաձայնեցված վերջնաժամկետում ՈՒԵՖԱ է ուղարկում կայացված արտոնագրման որոշումների ցանկը

ՄԱՍ I

1. Արտոնագրման պատասխանատուն կազմում է ակումբի արտոնագրային փաստաթղթերը, որոնց մեջ մտնում են ակումբների արտոնագրման չափանիշները, հարցաթերթիկները, լրացված վերադարձի ենթակա բոլոր փաստաթղթային ձևերը, ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի վերջին տարբերակի պատճենը, փաստաթղթերի տրամադրման վերջնաժամկետները:

2. Արտոնագրման պատասխանատուն փաստաթղթերի նախօրոք պատրաստված փաթեթը հանձնում է արտոնագրման թեկնածուին: Փաստաթղթերի նախօրոք պատրաստված փաթեթը ներառում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի վերջին տարբերակի պատճենը: Այս փաթեթը ուղարկում է էլ. փոստով: Արտոնագրման պատասխանատուն կարող է փաստաթղթերի ստացման հավաստագիր պահանջել:

3. Արտոնագրման թեկնածուն լրացնում և համաձայնեցված ժամկետի ընթացքում արտոնագրման պատասխանատուին է վերադարձնում փաստաթղթերը (հարցաթերթիկները, փաստաթղթային ձևերը, և այլն): Այդ փաթեթը ուղարկվում է էլ. փոստով: Անհրաժեշտության դեպքում կցվում են նաև օժանդակող փաստաթղթեր:

4. Արտոնագրման պատասխանատուն, ստանալով փաստաթղթերը, ստուգում է արտոնագրման թեկնածուի կողմից ուղարկված փաստաթղթերի ամբողջականությունը, ինչպես նաև դրանց ներկայացման համաձայնեցված ժամկետների պահպանումը:

5. Որոշումը՝

Երկու տարբերակ՝ քայլ 6 կամ քայլ (A)

6. Եթե փաստաթղթերն ամբողջական են և ուղարկվել են համաձայնեցված ժամկետի ընթացքում, արտոնագրման պատասխանատուն տեսակավորում է ստացած տեղեկատվությունը, գրանցում այն և փոխանցում նշանակված փորձագետներին, ովքեր պատասխանատու են տվյալ բնագավառները վերստուգելու համար (օր.՝ իրավական փաստաթղթերը հետագա վերստուգման համար փոխանցվում են իրավական փորձագետին և այլն):

7. Նշանակված փորձագետները արտոնագրման պատասխանատուից ստանում են արտոնագրման թեկնածուի ուղարկած փաստաթղթերը, վերանայում դրանք, ստուգում դրանց համապատասխանությունը ակումբների արտոնագրման չափանիշներին և այնուհետև զեկուցում արտոնագրման պատասխանատուին համաձայնեցված ժամկետի ընթացքում և ըստ նախօրոք մշակված ձևերի (ստուգացանկեր, զեկուցագրեր և այլն): Ստուգումները պետք է հիմնավորված լինեն օժանդակող փաստաթղթերով (փաստարկներ, որ ակումբների արտոնագրման չափանիշները բավարարված են):

8. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 9 կամ քայլ (A)

9. Արտոնագրման պատասխանատուն հաստատում է, որ փորձագետների զեկույցները ամբողջական են և վերադարձվել են համաձայնեցված ժամկետում: Արտոնագրման պատասխանատուն ծանոթանում է զեկույցներին և փորձագետների կարծիքներին:

10. Արտոնագրման պատասխանատուն գնահատում է արտոնագրման թեկնածուին: Փորձագետների զեկույցների հիման վրա նա կարող է առանձնացնել այն բնագավառները, որոնք մտահոգության տեղիք են տալիս և կարող են հետագա պարզաբանման կարիք ունենալ:

11. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 12 կամ քայլ (B)

12. Եթե արտոնագրման պատասխանատուն հետագա պարզաբանման կարիք ունեցող որևէ բնագավառ չի առանձնացնում, ապա համաձայնեցված ժամկետի ընթացքում զեկույց է պատրաստում Ակումբների Արտոնագրման Կոմիտեի (Առաջին ատյանի մարմնի) դիտարկման համար: Այս զեկույցը պարունակում է վերստուգման բոլոր հանգամանքները (ստացված փաստաթղթերի վերլուծությունը և տեղեկատվություն տեղում կատարած այցելությունների մասին, եթե այդպիսիք եղել են):

13. Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (Առաջին ատյանի մարմինը) համաձայնեցված ժամկետի ընթացքում ստանում և ծանոթանում է արտոնագրման պատասխանատուի զեկույցին, անհրաժեշտության դեպքում դիմում արտոնագրման պատասխանատուին հետագա պարզաբանումների և հավելյալ փաստաթղթերի համար և որոշում կայացնում ազգային արտոնագիր շնորհելու կամ չշնորհելու վերաբերյալ:

Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (Առաջին ատյանի մարմինը) պետք է բավարարի սույն կանոնակարգով սահմանված որակավորման, անկախության և գաղտնապահության պահանջները:

14. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 15 կամ քայլ (D)

15. Արտոնագրման թեկնածուի փաստաթղթերը և արտոնագրման պատասխանատուի զեկույցն ուշադիր ուսումնասիրելուց հետո Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (Առաջին ատյանի մարմինը) շնորհում է Ազգային արտոնագիրը: Ազգային արտոնագրի շնորհումը կատարվում է այն պայմանով, որ արտոնագրման թեկնածուն ԲԱՎԱՐԱՐՈՒՄ է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգով սահմանված բոլոր նվազագույն չափանիշները: Շնորհված արտոնագիրը կարող է մանրամասն մատնանշել կամ չմատնանշել արտոնագրման թեկնածուի կողմից ուշադրություն պահանջող բնագավառները:

16. Արտոնագրման պատասխանատուն ստանում է Ակումբների Արտոնագրման Կոմիտեի (Առաջին ատյանի մարմնի) զեկույցը: Զեկույցում տեղ գտած որոշման հիման վրա արտոնագրման պատասխանատուն պատրաստում է այն արտոնագրվածների ցանկը, որոնք իրավասու են մասնակցելու Հայաստանի Պրեմիեր լիգային: Արտոնագրված ակումբների ցանկը ուղարկվում է ՀՖՖ հաստատված վերջնաժամկետի ընթացքում: Սահմանված վերջնաժամկետի մասին տեղեկացվում է մինչև ապրիլի 1-ը:

(A) Սկսած 5-րդ քայլից.

Եթե փաստաթղթերը ամբողջական չեն կամ եթե դրանք չեն ուղարկվել մինչև համաձայնեցված վերջնաժամկետը, արտոնագրման պատասխանատուն կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ ձեռնարկվող հետագա գործողությունների մասին համաձայնության գալու համար (օրինակ՝ լրացուցիչ տեղեկատվություն, օժանդակող փաստաթղթեր, հարցաթերթիկներ կամ ձևաթղթեր, որոնք պակասում են):

Որոշում՝

Երկու տարբերակ՝

• Եթե արտոնագրման թեկնածուն Արտոնագրման պատասխանատուի հետ համաձայության է գալիս իրականացվող գործողությունների շուրջ, ապա վերադառնալ 6-րդ քայլին:

• Եթե արտոնագրման թեկնածուն համաձայության չի գալիս Արտոնագրման պատասխանատուի հետ իրականացվող գործողությունների շուրջ, ապա վերադառնալ 10-րդ քայլին:

(B) Սկսած 8-րդ քայլից.

Եթե արտոնագրման փորձագետը գտնում է բնագավառներ, որոնք հավելյալ տեղեկատվություն են պահանջում, ապա նա կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ՝ հետագա պարզաբանում պահանջող որևէ հարց քննարկելու համար և փորձում է փոխադարձ համաձայնության հասնել ձեռնարկվող հետագա գործողությունների շուրջ:

Եթե արտոնագրման պատասխանատուն գտնում է բնագավառներ, որոնք հետագա վերստուգման կարիք ունեն (անհամապատասխանություն որոշ չափանիշներին, սխալներ, տեղեկատվության պակաս և այլն) ապա նա կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ իր մտահոգությունները քննարկելու համար: Արտոնագրման պատասխանատուն կարող է հետագա բացատրություններ կամ օժանդակող փաստաթղթեր պահանջել կամ կարող է որոշել այցելություն կատարել տեղում հետագա ստուգումներ կատարելու նպատակով: Եթե ծրագրված է տեղում ստուգայց, արտոնագրման պատասխանատուն և/կամ փորձագետը հանդիպում է արտոնագրման թեկնածուի հետ և քննարկում խնդրահարույց բնագավառները: Նրանք հստակեցնում են ակումբի հետագա հնարավոր գործողությունները խնդրահարույց բնագավառները ըստ որոշված ժամանակացույցի շտկելու համար:

(C) Որոշում՝

Երկու տարբերակ

• Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնվում է արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվող գործողությունների շուրջը, ուրեմն վերադարձ քայլ 10,

• Եթե արտոնագրման թեկնածուն չի համաձայնվում արտոնագրման պատասխանատուի զեկույցի հետ և հրաժարվում է նոր տեղեկատվություն տրամադրել կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել, ուրեմն վերադարձ քայլ 12:

(D) Արտոնագրման թեկնածուի ներկայացրած փաստաթղթերը և արտոնագրման պատասխանատուի զեկույցը մանրամասն ուսումնասիրելուց հետո Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (Առաջին ատյանի մարմինը) հրաժարվում է շնորհել ազգային արտոնագիր: Մերժման մեջ պետք է մանրամասն նկարագրվեն այն բնագավառները, որոնք շտկման կարիք ունեն: Արտոնագրման թեկնածուին հնարավորություն է տրվում բողոքարկել որոշումը Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի առջև:

(E) Արտոնագրման թեկնածուն բողոքարկում է որոշումը: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն ծանուցում է ստանում և նշանակում համաձայնեցված հանդիպման օր:

(F) Արտոնագրման պատասխանատուն զեկույց է կազմում և ներկայացնում Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեին: Զեկույցի մեջ մանրամասն նկարագրվում են մտահոգության տեղիք տվող բոլոր բնագավառները և մերժման պատճառները:

(G) Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն հանդիպում է և դիտարկում բողոքարկուի բողոքը: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն կարող է հետագա տեղեկատվություն և/կամ օժանդակող փաստաթղթեր պահանջել բողոքարկուից:

(H) Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 15 կամ քայլ (I):

(I) Բողոքարկուի փաստաթղթերը և արտոնագրման պատասխանատուի զեկույցը մանրամասն ուսումնասիրելուց հետո Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն մերժում է ազգային արտոնագրի շնորհումը: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի զեկույցում մանրամասն նկարագրվում են մերժման պատճառները և ուշադրություն պահանջող բնագավառները: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի զեկույցն ուղարկվում է Արտոնագրման բաժնի պետին (հետո վերադառնալ 16-րդ քայլին):

(J)-ից (M) Արտոնագրման թեկնածուն բողոք է ներկայացնում Արբիտրաժային մարմին: Կիրառվում են (E)-ից (I) բողոքարկման ընթացակարգերը:

ՄԱՍ II

17. Արտոնագրման թեկնածուն կարող է դիմել ՈՒԵՖԱ-ին արտոնագրման համար միայն այն դեպքում, եթե նրան շնորհվել է ազգային արտոնագիր: Այդ դեպքում նա պատրաստում է իր ֆինանսական փաստաթղթերը և վերադարձնում դրանք արտոնագրման պատասխանատուին մինչև սահմանված վերջնաժամկետը: Այդ փաստաթղթերը պետք է արտոնագրողին ուղարկվեն էլեկտրոնային փոստի միջոցով: Անհրաժեշտության դեպքում կարող են կցվել նաև օժանդակող փաստաթղթեր:

18. Արտոնագրման պատասխանատուն արտոնագրման թեկնածուի կողմից ուղարկված փաստաթղթերն ընդունելիս ստուգում է դրանց ամբողջականությունն ու մինչև սահմանված վերջնաժամկետը ներկայացնելու հանգամանքը:

19. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 20 կամ քայլ (A)

20. Ֆինանսական փորձագետը արտոնագրման պատասխանատուից ստանում է արտոնագրման թեկնածուի փաստաթղթերը, ծանոթանում դրանց հետ, ստուգում դրանց համապատասխանությունը ֆինանսական չափանիշներին և զեկուցում արտոնագրման պատասխանատուին մինչև համաձայնեցված վերջնաժամկետը և ըստ նախօրոք պատրաստված ձևերի (ստուգացանկեր, զեկույցներ և այլն): Ստուգումները պետք է հիմնավորված լինեն օժանդակ փաստաթղթերով (փաստարկներ, որ ֆինանսական չափանիշները բավարարված են):

21. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 22 կամ քայլ (A)

22. Արտոնագրման պատասխանատուն հավաստում է, որ ֆինանսական փորձագետի զեկույցներն ամբողջական են և ներկայացվել են մինչև համաձայնեցված վերջնաժամկետը: Արտոնագրման պատասխանատուն ծանոթանում է զեկույցներին և փորձագետի կարծիքներին:

23. Արտոնագրման պատասխանատուն գնահատում է արտոնագրման թեկնածուին: Փորձագետի զեկույցների հիման վրա արտոնագրման պատասխանատուն կարող է առանձնացնել մտահոգության տեղիք տվող այն բնագավառները, որոնք հետագա ուսումնասիրության կարիք ունեն:

24. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 25 կամ քայլ (B)

25. Եթե արտոնագրման պատասխանատուն չի առանձնացնում որևէ բնագավառ, որը հետագա ուսումնասիրության կարիք ունի, ապա նա մինչև համաձայնեցված վերջնաժամկետը զեկույց է պատրաստում Ակումբների Արտոնագրման Կոմիտեի (Առաջին ատյանի մարմնի) համար: Այս զեկույցը պարունակում է ստուգման բոլոր բնագավառները (ստացված ֆինանսական փաստաթղթերի վերլուծությունը և տեղեկություններ տեղում կատարած այցելությունների մասին, եթե այդպիսիք եղել են):

26. Արտոնագրման պատասխանատուն արտոնագրման թեկնածուից ստանում է ղեկավարության ներկայացուցչական նամակը (տես Հոդված 67), որտեղ նշված է տնտեսական կարևորություն ունեցող որևէ իրադարձության տեղի ունենալու կամ չունենալու հանգամանքը: Նշված նամակը կցվում է արտոնագրման պատասխանատուի զեկույցին: Համաձայն ստուգման արդյունքների՝ զեկույցն ընդգրկում է հանձնարարական՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը շնորհելու կամ մերժելու մասին:

27. Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (Առաջին ատյանի մարմինը) մինչև համաձայնեցված վերջնաժամկետը ստանում և ծանոթանում է արտոնագրման պատասխանատուի զեկույցին, անհրաժեշտության դեպքում խնդրում արտոնագրման պատասխանատուին տրամադրել հետագա բացատրություններ և փաստաթղթեր և որոշում կայացնում ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը շնորհելու կամ մերժելու մասին:

Ակումբների Արտոնագրման Կոմիտեն պետք է բավարարի սույն կանոնակարգով սահմանված որակավորման, անկախության և գաղտնապահության պահանջները:

28. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 29 կամ քայլ (C)

29. Արտոնագրման թեկնածուի փաստաթղթերն ու արտոնագրման պատասխանատուի ներկայացրած զեկույցը մանրամասն ուսումնասիրելուց հետո Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (Առաջին ատյանի մարմինը)/ Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն շնորհում է ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը: Արտոնագրի շնորհումը կատարվում է այն պայմանով, որ արտոնագրման թեկնածուն ԲԱՎԱՐԱՐՈՒՄ է ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգով սահմանված բոլոր նվազագույն չափանիշները: Շնորհված արտոնագիրը կարող է մանրամասն մատնանշել կամ չմատնանշել արտոնագրման թեկնածուի կողմից ուշադրություն պահանջող բնագավառները:

30. Արտոնագրման պատասխանատուն ստանում է Ակումբների Արտոնագրման Կոմիտեի (Առաջին ատյանի մարմնի)/ Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի զեկույցը: Զեկույցում տեղ գտած որոշման հիման վրա արտոնագրման պատասխանատուն պատրաստում է արտոնագրման որոշումների ցանկը: Այս ցանկն ուղարկվում է ՈՒԵՖԱ մինչև վերջինիս կողմից սահմանված և հաստատված վերջնաժամկետը (սկզբունքորեն մինչև մայիսի 31-ը):

(A) Սկսած 19-րդ քայլից՝

Եթե փաստաթղթերը ամբողջական չեն կամ եթե դրանք չեն ուղարկվել մինչև սահմանված վերջնաժամկետը, ապա արտոնագրման պատասխանատուն կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ հետագա քայլերի մասին համաձայնության գալու նպատակով (օր.՝. հավելյալ տեղեկատվություն, օժանդակող փաստաթղթեր, հարցաթերթիկներ կամ բացակայող ձևաթղթեր պահանջելու համար):

Որոշում՝

Երկու տարբերակ՝

- Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնվում է արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվող քայլերի շուրջ, ապա վերադառնալ 20-րդ քայլին:
- Եթե արտոնագրման թեկնածուն չի համաձայնվում արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվող քայլերի շուրջ, ապա վերադառնալ 23-րդ քայլին:

(B) Սկսած 21-րդ քայլից.

Եթե արտոնագրման փորձագետը գտնում է բնագավառներ, որոնք հավելյալ տեղեկատվություն են պահանջում, ապա նա կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ պարզաբանում պահանջող որևէ հարց քննարկելու համար և փորձում է հասնել փոխադարձ համաձայնության ձեռնարկվող հետագա գործողությունների շուրջ:

Եթե արտոնագրման պատասխանատուն գտնում է բնագավառներ, որոնք պահանջում են հետագա ուսումնասիրություն (անհամապատասխանություն որոշակի չափանիշներին, սխալներ, տեղեկատվության պակաս, և այլն), ապա նա կապ է հաստատում արտոնագրման թեկնածուի հետ իր մտահոգությունները քննարկելու համար: Արտոնագրման պատասխանատուն կարող է հետագա բացատրություններ կամ օժանդակող փաստաթղթեր պահանջել կամ կարող է որոշել ստուգայց կատարել տեղում հետագա ուսումնասիրություն կատարելու նպատակով: Եթե ծրագրված է տեղում ստուգայց, ապա արտոնագրման պատասխանատուն և/կամ փորձագետը հանդիպում է արտոնագրման թեկնածուի հետ և քննարկում խնդրահարույց բնագավառները:

Նրանք հստակեցնում են ակումբի հետագա հնարավոր գործողությունները խնդրահարույց բնագավառները ըստ որոշված ժամանակացույցի շտկելու համար: Որոշում՝

Երկու տարբերակ՝

- Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնվում է արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվող քայլերի շուրջ, ապա վերադառնալ 23-րդ քայլին:
- Եթե արտոնագրման թեկնածուն չի համաձայնվում արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվող քայլերի շուրջ, ապա վերադառնալ 25-րդ քայլին:

(C) Արտոնագրման թեկնածուի ներկայացրած փաստաթղթերի և արտոնագրման պատասխանատուի զեկույցի մանրամասն ուսումնասիրությունից հետո Ակումբների Արտոնագրման Կոմիտեն հրաժարվում է շնորհել ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը: Մերժման մեջ պետք է մանրամասն նկարագրվեն այն բնագավառները, որոնք շտկման կարիք ունեն: Արտոնագրման թեկնածուին հնարավորություն է տրվում բողոքարկել որոշումը Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի առջև:

Արտոնագրման թեկնածուն կարող է բողոքարկել ԱԱԿ-ի որոշումը պաշտոնական ծանուցումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն ծանուցում է ստանում և նշանակում համաձայնեցված հանդիպման օր: Արտոնագրման պատասխանատուն զեկույց է կազմում և ներկայացնում Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեին: Զեկույցի մեջ մանրամասն նկարագրվում են մտահոգության տեղիք տվող բոլոր բնագավառները և մերժման պատճառները:

Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն հանդիպում և քննարկում է արտոնագրման թեկնածուի բողոքը: ԱԱԲԿ-ն իր որոշումը կայացնում է ԱԱԿ-ի որոշման, արտոնագրման պատասխանատուի զեկույցի և արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված ընդունելի փաստարկների հիման վրա:

Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 29 կամ քայլ (D)

(D) Արտոնագրման թեկնածուի փաստաթղթերն ու Արտոնագրման պատասխանատուի զեկույցը մանրամասն ուսումնասիրելուց հետո Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն մերժում է ՈՒԵՖԱ-ի արտոնագրի շնորհումը: Ակումբների Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի զեկույցում մանրամասն նկարագրվում են մերժման պատճառները և ուշադրություն պահանջող բնագավառները: ԱԱԲԿ-ի զեկույցն ուղարկվում է Արտոնագրման բաժնի պետին (վերադարձ 30-րդ քայլին):

(J)-ից (M) Արտոնագրման թեկնածուն բողոք է ներկայացնում Արբիտրաժային մարմին: Կիրառվում են (E)-ից (I) ընթացակարգերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

Եթե Ազգային արտոնագիր ստանալուց հետո արտոնագրման թեկնածուի մոտ ոչ ֆինանսական չափանիշների շրջանակներում տեղի է ունեցել որևէ փոփոխություն, ապա ամբողջական փոփոխված տեղեկատվությունը պետք է ներկայացվի արտոնագրողին՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական փաստաթղթային փաթեթից զատ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԿԻՐԱՌՈՒՄԸ

1. ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման համակարգի արտակարգ կիրառման համար ՈՒԵՖԱ-ն սահմանում է անհրաժեշտ վերջնաժամկետներ և նվազագույն չափանիշներ՝ ինչպես նշված է Հոդված 14.01-ում, և այդ մասին տեղեկացնում է ՀՖՖ-ին ոչ ուշ, քան արտոնագրման համակարգի մրցաշրջանին նախորդող տարվա օգոստոսի 31-ը:
2. ՀՖՖ-ն պարտավոր է մինչև ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված վերջնաժամկետը արտոնագրման համակարգի յուրաքանչյուր այդպիսի արտակարգ կիրառման մասին գրավոր ծանուցագիր ներկայացնել ՈՒԵՖԱ՝ նշելով շահագրգիռ ակումբի (ակումբների) անվանումը (անվանումները) :
3. ՀՖՖ-ն պատասխանատվություն է կրում շահագրգիռ ակումբին (ակումբներին) նշված չափանիշների մասին տեղեկացնելու համար, արտակարգ կիրառման իր դիմումի գնահատման նպատակով : ՀՖՖ-ն պետք է նաև ակումբի (ակումբների) հետ անհրաժեշտ քայլեր ձեռնարկի արտակարգ կիրառման գործընթացին նախապատրաստվելու համար:
4. Շահագրգիռ ակումբը (ակումբները) պետք է ՀՖՖ-ին տրամադրի (տրամադրեն) անհրաժեշտ փաստաթղթային ապացույցները, որոնցով ՀՖՖ-ն պետք է անցկացնի ակումբի (ակումբների) գնահատումը սահմանված նվազագույն չափանիշներով և ուղարկի ներքոնշյալ փաստաթղթերի անգլերեն տարբերակներն ՈՒԵՖԱ ՝ վերջինիս կողմից սահմանված վերջնաժամկետում՝
   ա) հատուկ թույլտվության գրավոր հայցում՝ ՈՒԵՖԱ-ի համապատասխան ակումբային մրցաշարերին մասնակցելու համար
   բ) արտոնագրողի առաջարկը՝ հիմնված անցկացված գնահատման գործընթացի վրա (ներառյալ ամսաթվերն ու այն մարդկանց անունները, ովքեր անցկացրել են ակումբի (ակումբների) գնահատումը)
   գ) բոլոր փաստաթղթային ապացույցները, որոնք ՈՒԵՖԱ-ի հարցումով ներկայացվել են ակումբի (ակումբների) և արտոնագրողի կողմից
   դ) արտակարգ կիրառման գործընթացի ընթացքում ՈՒԵՖԱ-ի կողմից պահանջված ցանկացած այլ փաստաթուղթ:
5. ՈՒԵՖԱ-ն իր որոշումը հիմնավորում է ներկայացված փաստաթղթերով և տալիս է հատուկ թույլտվություն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար, եթե բոլոր չափանիշները բավարարվել են, և եթե ակումբը (ակումբները) վերջին հաշվով որակավորվում է մարզական արդյունքներով: Որոշման մասին ՈՒԵՖԱ-ն տեղեկացնում է ՀՖՖ-ին, որն էլ իր հերթին տեղեկացնում է շահագրգիռ ակումբին (ակումբներին):

6. Եթե տվյալ ակումբը արտակարգ կիրառման գործընթացի ժամանակ, մարզական արդյունքներով, դուրս է մնացել, ապա ՀՖՖ-ն այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնի ՈՒԵՖԱ-ին և տվյալ գործընթացն անմիջապես դադարեցվում է՝ առանց հետագա որոշում կայացնելու: Նման ձևով դադարեցված գործընթացը չի կարող վերսկսվել ավելի ուշ փուլում:
7. Համաձայն ՈՒԵՖԱ-ի կանոնադրության համապատասխան դրույթների՝ ՈՒԵՖԱ-ի որոշումները կարող են գրավոր ձևով բողոքարկվել Լոզանի (Շվեյցարիա) Սպորտային հարցերով Արբիտրաժային Դատարանում (CAS):

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ա. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ, անգլ.՝ IFAC – International Federation of Accountants) Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի կանոնների համաձայն աուդիտորը պետք է լինի անկախ (տես հոդված 70 և Հավելված 5):
2. Աուդիտորը պետք է լինի Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ, անգլ.՝ IFAC – International Federation of Accountants) անդամ: Եթե ՀՀ-ում ՀՄԴ անդամ կազմակերպություն գործունեություն չի ծավալում, Աուդիտորը պետք է լինի ՀՀ Հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ, անգլ.՝ AAAA – Association of Accountants and Auditors of Armenia) անդամ:

Բ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Աուդիտորը պետք է իրականացնի արտոնագրման թեկնածուի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ: Աուդիտորի եզրակացությունը պետք է՝

   ա) ներառի հայտարարություն առ այն, որ աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտների և/կամ համապատասխան ՀՀ չափանիշների ու կանոնների համաձայն, եթե դրանք բավարարում են Աուդիտի միջազգային ստանդարտների նվազագույն պահանջներին, և

   բ) ներկայացված լինի արտոնագրողին տարեկան ֆինանսական հաշվետվությունների հետ միասին, որպեսզի դրանց հիման վրա արտոնագրողը կարողանա կայացնել արտոնագրման որոշում:

   Ավելին, աուդիտորը պետք է ներկայացնի ևս մեկ հայտարարություն այն մասին, թե արդյոք տարեկան ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են Հավելված 5-ով սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին: Եթե ոչ, ապա հաշվետվությունը պետք է ներառի չբավարարված պահանջների համառոտ նկարագրություն: Նման դեպքում ԱՖՎՄ-ն մանրամասն կվերանայի գործարքները՝ ՈՒԵՖԱ-ի ակումբների ֆինանսական վերահսկողության մարմնի ընթացակարգային կանոններին համապատասխան:

2. Աուդիտորը պետք է լրացուցիչ տեղեկատվության և/կամ վերանայված ֆինանսական հաշվետվության ստուգում անցկացնի, եթե այդպիսիք առկա են: Փաստերի բացահայտման վերաբերյալ աուդիտորի եզրակացությունը պետք է՝

ա) նկարագրի արտոնագրողի կողմից սահմանված ընթացակարգերը և յուրաքանչյուրի վերաբերյալ բացահայտումները;

բ) ներառի հայտարարություն առ այն, որ գնահատումն անցկացվել է համաձայնեցված ընթացակարգերի եղանակով՝ համաձայն ISRS 4400-ի կամ համապատասխան ՀՀ չափանիշների ու կանոնների համաձայն, որոնք բավարարում են ISRS 4400- ի չափանիշի նվազագույն պահանջները, և

գ) ներկայացված լինի արտոնագրողին լրացուցիչ տեղեկատվության հետ միասին, որպեսզի դրանց հիման վրա արտոնագրողը կարողանա կայացնել արտոնագրման որոշում:

3. Վերոնշյալ1-2 կետերում նշված ֆինանսական հաշվետվություններից զատ աուդիտորի կողմից կարող են գնահատվել այլ ֆինանսական հաշվետվություններ ևս: Այս պարագայում աուդիտորի եզրակացությունը պետք է՝

ա) ներառի հայտարարություն առ այն, որ գնահատումն իրականացվել է

- համաձայնեցված ընթացակարգերի եղանակով՝ համաձայն 4400-ի կամ համապատասխան ՀՀ չափանիշների ու կանոնների համաձայն, որոնք բավարարում են ISRS 4400- ի չափանիշի նվազագույն պահանջները, կամ
- ապագա ֆինանսական տեղեկատվության գնահատման համար (եթե կիրառելի է)՝ համաձայն Հավաստիացման աշխատանքների միջազգային ստանդարտների (ISAE) 3400 կամ Հայաստանի Հանրապետության համապատասխան ստանդարտների կամ փորձի, եթե դրանք նվազագույնը համապատասխանում են ISAE 3400-ի պահանջներին, և

բ) ներկայացված լինի արտոնագրողին համապատասխան տեղեկատվության հետ միասին, որպեսզի դրանց հիման վրա կայացվի արտոնագրման որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ա. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հաշվապահական հաշվառման վարման ազգային փորձի պահանջներից, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից կամ Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից անկախ՝ սույն կանոնակարգի ֆինանսական չափանիշներն ամեն դեպքում արտոնագրման թեկնածուներին / արտոնագրվածներին պարտավորեցնում են որոշակի նվազագույն ֆինանսական տեղեկատվություն ներկայացնել արտոնագրողին՝ համաձայն Հոդված 70 և 77-ի:

2. Ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր բաղադրիչ պետք է հստակ ներկայացված լինի: Ստորև թվարկվող տեղեկատվությունը ֆինանսական հաշվետվություններում պետք է տեղակայված լինեն ակնառու տեղում և, անհրաժեշտությունից ելնելով, նաև պարբերաբար կրկնվեն՝ տեղեկատվության ճշգրիտ ընկալման համար՝

   ա) հաշվետու կազմակերպության անվանումը (նաև իրավական կառուցվածքը), հաշվետու կազմակերպության/կազմակերպությունների իրավաբանական և գործունեության հասցեն, ինչպես նաև տվյալ տեղեկատվությանն առնչվող այն բոլոր փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել նախորդ ֆինանսական տարվա վերջին օրվանից հետո:

   բ) արդյոք ներկայացված ֆինանսական տեղեկատվությունը վերաբերում է անհատ արտոնագրման թեկնածուին/արտոնագրվածին, կազմակերպությունների խմբերին կամ դրանց միավորումներին և ցանկացած այդպիսի խումբ կամ միավորում կազմող կազմակերպությունների և դրանց կառուցվածքի ու միավորման նկարագրությունը

   գ) ֆինանսական տարվա վերջին օրը և այն ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է ֆինանսական հաշվետվությունը (ինչպես ընթացիկ, այնպես էլ համեմատական տեղեկատվության համար), և

   դ) ներկայացման արժույթը:

3. Եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունները չեն համապատասխանում Հավելված 4-ով սահմանված տեղեկության տրամադրման պահանջներին, ապա արտոնագրման թեկնածուն արտոնագրողին պետք է ներկայացնի նաև՝

ա) Հավելված 4-ով սահմանված տեղեկության տրամադրման պահանջները բավարարելու համար լրացուցիչ տեղեկատվություն,

բ) գնահատման հաշվետվություն՝ տրամադրված նույն աուդիտորի կողմից, որը հաստատում է տարեկան ֆինանսական հաշվետվությունները արտոնագրողի կողմից սահմանված, վերանայված ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանն ու ճշգրտությանը վերաբերող համաձայնեցված ընթացակարգերի միջոցով։

Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվապահական հաշվեկշռի հոդվածների տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները հետևյալն են՝

<u>Ակտիվներ</u>

i) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

ii) դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերներից (ընթացիկ և ոչ ընթացիկ)

iii) դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով (ընթացիկ և ոչ ընթացիկ)

iv) այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր

v) հարկային ակտիվներ (ընթացիկ և ոչ ընթացիկ)

vi) պաշարներ

vii) այլ ակտիվներ (ընթացիկ և ոչ ընթացիկ)

viii) նյութական ակտիվներ

ix) ոչ նյութական ակտիվներ - ֆուտբոլիստներ

x) ոչ նյութական ակտիվներ – այլ

xi) ներդրումներ

<u>Պարտավորություններ</u>

xii) բանկային օվերդրաֆտներ

xiii) բանկային և այլ վարկեր (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xiv) կրեդիտորական պարտքեր խմբին/կապակցված կողմերին (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xv) կրեդիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xvi) կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xvii) կրեդիտորական պարտքեր սոցապ/հարկային մարմիններին (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xviii) հաշվեգրումներ և հետաձգված եկամուտներ (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xix) այլ հարկային պարտավորություններ (ընթացիկ և ոչ ընթացիկ)

xx) այլ կրեդիտորական պարտքեր

xxi) պահուստներ (կարճաժամկետ և երկարաժամկետ)

xxii) այլ պարտավորություններ (ընթացիկ և ոչ ընթացիկ)

<u>Զուտ ակտիվներ/պարտավորություններ</u>

xxiii) զուտ ակտիվներ/ պարտավորություններ

<u>Սեփական կապիտալ</u>

xxiv) բաժնետիրական/ֆոնդային կապիտալ

xxv) վերագնահատման պահուստ

xxvi) չբաշխված շահույթ

xxvii) այլ պահուստներ

2. Ղեկավարությունը կարող է (i)-(xxvii) կետերը ներկայացնել հաշվապահական հաշվեկշռում կամ կից ծանոթագրություններում:

Գ. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Շահույթի և վնասի հաշվետվության տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները ներկայացված են ստորև՝

Հասույթ

i) տոմսերի իրացում
ii) հովանավորչություն և գովազդ
iii) հեռարձակման իրավունքներ
iv) կոմերցիոն գործունեություն
v) ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ
vi) Ֆուտբոլի ազգային մարմնից կամ առավարությունից դրամաշնորհներ/ սուբսիդիաներ
vii) այլ գործառնական եկամուտներ
viii) ընդամենը հասույթ (i-ից մինչև vii կետերի հանրագումար)

Ծախսեր

ix) վաճառքի/նյութերի ինքնարժեք
x) աշխատակիցների վարձատրության ծախսեր (ֆուտբոլիստներ և այլ աշխատակիցներ)
xi) նյութական ակտիվների մաշվածություն և արժեզրկում
xii) ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցումների հետ կապված)
xiii) այլ գործառնական ծախսեր
xiv) ընդամենը գործառնական ծախսեր (vii-ից մինչև xiii կետերի հանրագումար)

Ֆուտբոլիստների գրանցումներ

xv) ֆուտբոլիստների գրանցումների ամորտիզացիա և արժեզրկում
xvi) շահույթ/վնաս– ֆուտբոլիստների գրանցումների օտարումից
xvii) Տրանսֆերային այլ եկամուտներ/ծախսեր
xviii) Ֆուտբոլիստների գրանցումների ընդհանուր զուտ արդյունքը (xv-ից մինչև xvii կետերի հանրագումար)

<u>Այլ</u>

xix) նյութական ակտիվների օտարումից ստացված շահույթ/վնաս

xx) ֆինանսական եկամուտներ և ծախսեր

xxi) ոչ գործառնական եկամուտներ/ծախսեր

xxii) հարկային եկամուտներ/ծախսեր

xxiii) Զուտ արդյունք (viii, xiv, xviii և xix-ից մինչև xxii կետերի հանրագումարը)

2. Ղեկավարությունը կարող է (i)-(xxiii) կետերը ներկայացնել շահույթի և վնասի և հաշվետվությունում կամ կից ծանոթագրություններում:

Դ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվեն հաշվետու ժամանակաշրջանի դրամական միջոցների հոսքերը՝ դասակարգված առանձին-առանձին, ինչպես ներկայացված է ստորև՝

<u>Դրամական միջոցների հոսք գործառնական գործունեությունից</u>

Գործառնական է համարվում հաշվետու կազմակերպության հասույթի սկզբունքային, հիմնական մասը ձևավորող գործունեությունը և գործունեության այլ տեսակները, որոնք չեն հանդիսանում ներդրումային կամ ֆինանսական գործունեություն: Այդ իսկ պատճառով դրանք ծագում են կազմակերպության զուտ արդյունքը պայմանավորող գործարքներից և այլ իրադարձություններից: Տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները նշված են ստորև՝

i) դրամական միջոցների զուտ ներհոսք/արտահոսք գործառնական գործունեությունից

<u>Դրամական միջոցների հոսք ներդրումային գործունեությունից</u>

Ներդրումային գործունեություն են հանդիսանում երկարաժամկետ ակտիվների (ներառյալ ֆուտբոլիստների գրանցումը) ձեռքբերումը և օտարումը, ինչպես նաև այլ ներդրումները, որոնք չեն հանդիսանում դրամական միջոցների համարժեք: Հաշվետու կազմկերպությունը պետք է առանձին ներկայացնի ներդրումային գործունեությունից բխող դրամական հոսքերի համախառն մուտքերն ու ելքերը: Տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները հետևյալն են՝

i) դրամական միջոցների ներհոսք/արտահոսք ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերումից/օտարումից

ii) դրամական միջոցների ներհոսք/արտահոսք նյութական ակտիվների ձեռքբերումից/օտարումից

iii) այլ դրամական միջոցների ներհոսք/արտահոսք ներդրումային գործունեությունից

Դրամական միջոցների հոսք ֆինանսական գործունեությունից

Ֆինանսական են համարվում գործունեության այն տեսակները, որոնք հանգեցնում են հաշվետու կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների: Կազմակերպությունը պետք է առանձին ներկայացնի ֆինանսական գործունեությունից բխող դրամական հոսքերի համախառն մուտքերն ու ելքերը: Տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները հետևյալն են՝

i) դրամական միջոցների ներհոսք/արտահոսք փոխառություններից – բաժնետերեր և կապակցված կողմեր

ii) դրամական միջոցների ներհոսք/արտահոսք փոխառություններից – ֆինանսական հաստատություններ

iii) դրամական միջոցների ներհոսք սեփական/բաժնետիրական կապիտալի աճից

iv) դրամական միջոցների արտահոսք սեփականատերերին/բաժնետերերին վճարված շահաբաժիններից

v) այլ դրամական միջոցների ներհոսք/արտահոսք ֆինանսական գործունեությունից

Այլ դրամական հոսքեր

Տոկոսադրույքներից և շահաբաժիններից ստացված և դրանց դիմաց վճարված դրամական հոսքերը պետք է ներկայացվեն առանձին: Պահպանելով ներկայացման հետևողականությունը մի ժամանակաշրջանից մյուսը՝ յուրաքանչյուր դրամական հոսք պետք է ներկայացվի որպես ֆինանսական, ներդրումային կամ գործառնական գործունեության տողային հոդված:

Շահութահարկին առնչվող դրամական հոսքերը պետք է ներկայացվեն առանձին և դասակարգվեն որպես դրամական հոսքեր գործառնական գործունեությունից, քանի դեռ առկա չեն պատշաճ և հստակ հիմքեր՝ դրանք վերագրելու ֆինանսական կամ ներդրումային գործունեությունը:

2. Դրամական միջոցների և դրանց համարժեքների տարրերը պետք է բացահայտվեն, և դրամական հոսքերի մասին հաշվետվությունում անհրաժեշտ է ներկայացնել այդ գումարների համապատասխանեցումը հաշվապահական հաշվեկշռում արտացոլված դրանց համարժեք գումարային մեծություններին:

Ե. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները պետք է ներկայացվեն համակարգված և կանոնավոր կերպով: Հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների յուրաքանչյուր տարր պետք է ունենա համապատասխան հղում, եթե ծանոթագրություններում տվյալ տարրի վերաբերյալ բացահայտված է ցանկացած բնույթի հավելյալ տեղեկատվություն: Կից ծանոթագրություններում տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները ներառում են հետևյալը՝

   ա) *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն*

   Ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման հիմքերը և հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի տարրեր:

   բ) *Նյութական ակտիվներ*

   Նյութական ակտիվների յուրաքանչյուր խումբ պետք է առանձին ներկայացվի (օրինակ՝ շենք/շինություններ, մարզադաշտ, սարքավորումներ, ֆին. վարձակալությամբ ակտիվենր)
   Հետևյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվի նյութական ակտիվների յուրաքանչյուր խմբի համար՝

   1. Ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ համախառն հաշվեկշռային արժեքները և դրանց կուտակված մաշվածությունները (ներառյալ արժեզրկումից կորուստները);
   2. Ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ համախառն հաշվեկշռային արժեքների համաձայնեցումը՝ ներկայացնելով ավելացումները, օտարումները, հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատման արդյունքում աճը կամ նվազեցումները հաշվետու ժամանակաշրջանում շահույթի և վնասի հաշվետվությունում արտացոլված արժեզրկումից կորուստները, այդ կորուստների հակադարձման և մաշվածությանը:

Նյութական ակտիվների յուրաքանչյուր խմբի համար կիրառվող մաշվածության մեթոդները և օգտակար ծառայության ժամկետները (մաշվածության դրույքաչափերը) պետք է բացահայտված լինեն հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

գ) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացվի առանձին (օրինակ՝ ֆուտբոլիստների գրանցումներ, գուդվիլ, այլ ոչ նյութական ակտիվներ):

Հետևյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվի ոչ նյութական ակտիվների խմբերից յուրաքանչյուրի համար՝

1. Ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ յուրաքանչյուր խմբի համախառն հաշվեկշռային արժեքները և կուտակված ամորտիզացիան (ներառյալ արժեզրկումից կորուստները);
2. Ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ համախառն հաշվեկշռային արժեքների համաձայնեցումը՝ ներկայացնելով ավելացումները, օտարումները, հաշվետու ժամանակաշրջանում ցանկացած նվազեցումներ, որոնք եղել են հաշվետու ժամանակաշրջանում շահույթի և վնասի հաշվետվությունում արտացոլված արժեզրկումից կորուստների արդյունքում և ամորտիզացիան:

Ֆուտբոլիստների գրանցման հաշվապահական պահանջների հետ կապված տեղեկատվությունը տես Հավելված 5-ում:

դ) Գրավադրված եկամուտներ և ակտիվներ

i) Պետք է ներկայացնել որպես պարտավորությունների կամ պայմանական պարտավորությունների երաշխիք գրավադրված սեփականության իրավունքի, անշարժ գույքի, սարքավորումների (օր.՝ մարզադաշտի և մարզագույքի) սահմանափակումների առկայության և չափի վերաբերյալ տեղեկատվություն:

ii) Պետք է ներկայացնել տվյալներ սեփականության իրավունքը սահմանափակող ոչ նյութական ակտիվների (օր.՝ ֆուտբոլիստների գրանցումների) առկայության և հաշվեկշռային արժեքի, ինչպես նաև որպես երաշխիք գրավադրված պարտավորությունների կամ պայմանական պարտավորությունների ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ:

iii) Ֆինանսական ակտիվների և/ կամ ապագա եկամտի գումարի առկայությունը և հաշվեկշռային արժեքը՝ (ինչպիսիք են՝ դեբիտորական պարտքերը և ապագա եկամուտը՝ կապված ֆուտբոլիստների գրանցման, մրցաշարերի մասնակցության դիմաց ստացվող գումարների/ մրցանակային գումարներից հասույթի, աբոնեմենտների և տոմսերի այլ իրացման, հեռարձակման իրավունքների և հովանավորչական գործունեության հետ) գրավադրված՝ որպես պարտավորությունների կամ պայմանական պարտավորությունների երաշխիք:

ե) *Ներդրումներ*

Ներդրումները պետք է իրենց մեջ ներառեն ներդրումներ դուստր կազմակերպություններում, միասին վերահսկվող կազմակերպություններում և ասոցիացված կազմակերպություններում: Դուստր կազմակերպություններում, միասին վերահսկվող կազմակերպություններում և ասոցիացված կազմակերպություններում կատարվող ներդրումների մասով՝ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը՝

i) անունը
ii) գրանցման երկիրը կամ գտնվելու վայրը
iii) կազմակերպության գործունեության/գործառնությունների բնույթը
iv) սեփականության մասնաբաժինների հարաբերակցությունը
v) ձայնի իրավունքի հարաբերակցությունը, եթե տարբերվում է
vi) ներդրումների հաշվառման համար օգտագործվող մեթոդը

զ) *Բանկային օվերդրաֆտներ և վարկեր*

Ֆինանսական պարտավորությունների յուրաքանչյուր խմբի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը՝

1) Ֆինանսական գործիքների չափի և բնույթի մասին տեղեկատվություն, ներառյալ գումարների չափը և վերջնաժամկետները, ինչպես նաև ցանկացած էական պայման, որը կարող է ազդել գումարի, ժամանակը բաշխելու և ապագա դրամական հոսքերի հստակության վրա:
2) Ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և մեթոդները, ներառյալ դրանց կիրառման համար օգտագործվող չափանիշները:

է) *Պահուստներ*

Պահուստները պետք է ֆինանսական հաշվետվություններում ներկայացվեն առանձին խմբերով: Որոշելու համար, թե որ պահուստային գումարները կարող են դիտարկվել մեկ ընդհանուր խմբի մեջ, անհրաժեշտ է գնահատել, արդյոք համապատասխան պարագաները հանդիսանում են բնույթով բավականաչափ նման, որպեսզի հնարավոր լինի դրանք միավորել և ներկայացնել միասնական գումարով:

Պահուստային գումարների յուրաքանչյուր խմբի համար անհրաժեշտ է բացահայտել հաշվեկշռային արժեքը ժամանակաշրջանի սկզբում և վերջում, այդ տարվա ընթացքում օգտագործված, իրացված կամ հաշվեգրված միջոցների արժեքները:

ը) Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

Բաժնետիրական կապիտալը, վերագնահատման պահուստները, սեփական կապիտալի այլ պահուստները և չբաշխված/կուտակված շահույթը պետք է ներկայացվեն առանձին:

i) Բաժնետիրական/բաժնեհավաք կապիտալ

Հաշվետու ժամանակաշրջանում թողարկված բաժնետիրական կապիտալի հետ կապված անհրաժեշտ է բացահայտել հետևյալ տեղեկատվությունը՝

- թողարկված բաժնետոմսերի քանակն ու տեսակը
- թողարկված բաժնետոմսերի հավելագին/էմիսիոն եկամուտ (եթե կիրառելի է)
- բաժնետոմսերի թողարկումից ձևավորված ընդհանուր գումարը
- նոր բաժնետոմսեր թողարկելու պատճառը

ii) Վերագնահատման պահուստներ

Այն դեպքում, երբ գույքի, մարզադաշտի, սարքավորումների և/ կամ ոչ նյութական ակտիվների տարրերը ներկայացված են վերագնահատված գումարներով, պետք է ներկայացվի վերագնահատման ավելցուկը, որը ցույց է տալիս հաշվետու ժամանակաշրջանի փոփոխությունը և բաժնետերերին մնացորդի բաշխման ցանկացած սահմանափակում:

iii) Այլ պահուստներ

Պետք է ներկայացնել ցանկացած այլ տեսակի պահուստները, որոնք ներառված չեն վերագնահատման պահուստներում՝ ներառյալ հաշվետու ժամանակաշրջանում ցանկացած փոփոխությունը և բաժնետերերին մնացորդի բաշխման ցանկացած սահմանափակումը

iv) Կուտակված/չբաշխված շահույթ

Անհրաժեշտ է ներկայացնել կուտակված շահույթի չափը (շահույթը կամ վնասը) հաշվետու ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ, ինչպես նաև տարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները:

թ) Վերահսկող կողմ և գլխավոր վերահսկող կողմ

Եթե հաշվետու իրավաբանական անձը վերահսկվում է մեկ այլ իրավաբանական անձի կողմից, պետք է լինեն բացահայտումներ առ այն, թե ինչ հարաբերություններ կան տվյալ կողմերի միջև, ինչպես նաև այդ կողմի անվանումը և եթե տարբեր է, նաև գլխավոր վերահսկող կողմի անվանումը: Եթե հաշվետու իրավաբանական անձը վերահսկող կողմը կամ գլխավոր վերահսկողը հայտնի չեն, ապա այդ փաստը նույնպես պետք է բացահայտվի՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք հաշվետու կազմակերպության և վերահսկող կողմի կամ կողմերի միջև եղել են գործարքներ թե ոչ:

ժ) *Կապակցված կողմերի հետ գործարքներ*

Կապակցված կողմերի հետ գործարքներ ասելով՝ հասկանում ենք ռեսուրսների, ծառայությունների կամ պարտավորությունների փոխանցում կապակցված կողմերի միջև՝ անկախ գումարի փոխանցման հանգամանքից: Կապակցված կողմերի միջև գործարքը կարող է լինել կամ չլինել իրական արժեքով: Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կապակցված կողմերի միջև իրականացվել է մեկ կամ մի քանի գործարք, ապա հաշվետու կազմակերպություն պետք է բացահայտի կապակցված կողմերի հետ հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրի այդ ժամանակահատվածի ընթացքում կատարված գործարքների և ժամանակահատվածի վերջում չմարված մնացորդների մասին, որն անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների վրա այդ փոխհարաբերությունների ունեցած հնարավոր ազդեցությունը գնահատելու համար:

Բացահայտումները յուրաքանչյուր կապակցված կողմի վերաբերյալ առնվազն պետք է ներառեն հետևյալը՝

i) գործարքների քանակը և բնույթը

ii) այդ գործարքների արդյունքում ձևավորված չմարված մնացորդները, ներառյալ պարտավորությունները և

- դրանց ժամկետները և պայմանները, ներառյալ ապահովվածության առկայությունը,
- ցանկացած տեսակի տրամադրված կամ ստացված երաշխիքների մանրակրկիտ նկարագրություն

iii) կասկածելի դեբիտորական պարտավորությունների մնացորդային արժեքների մասով պահուստները, և

v) կապակցված կողմերի առնչությամբ հաշվետու տարվա ընթացքում կասկածելի դեբիտորական պարտավորությունների մասով ճանաչված ծախսը:

Հետևյալ յուրաքանչյուր կատեգորիայի համար պահանջված բացահայտումները պետք է ներկայացվեն առանձին՝

- մայր կազմակերպությունը
- հաշվետու կազմակերպության նկատմամբ համատեղ վերահսկողություն իրականացնող կամ նրա վրա էական ազդեցություն ունեցող կազմակերպությունները
- դուստր կազմակերպությունները
- ասոցիացված կազմակերպությունները
- համատեղ կազմակերպությունը, որի մասնակից է հանդիսանում հաշվետու կազմակերպությունը
- կազմակերպության կամ դրա մայր կազմակերպության հիմնական ղեկավար անձնակազմը
- այլ կապակցված կողմեր:

Անհրաժեշտ է հաստատել, որ կապակցված կողմերի հետ գործարքներն իրականացվել են գերակշռող շուկայական՝ «պարզած ձեռքի հեռավորության» գործարքներին համարժեք պայմաններով, եթե դրանք հնարավոր է հիմնավորել և նյութական արժեք վերագրել:

ի) *Պայմանական պարտավորություններ*

Բացի այն դեպքերից, երբ դրամական միջոցների արտահոսքը հեռավոր անորոշ ապագայում է, հաշվետու իրավաբանական անձը ֆինանսական տարվա վերջին օրվա դրությամբ պետք է պայմանական պարտավորությունների յուրաքանչյուր խմբի համար բացահայտի վերջինիս բնույթը և նպատակահարմարության սահմաններում նաև՝

i) դրա հնարավոր ֆինանսական ազդեցության գնահատականը

ii) դրամական արտահոսքերի չափերի և ժամկետայնության անորոշությանն առնչվող ցանկացած իրադարձության վերաբերյալ բացահայտում, և

iii) որևէ փոխհատուցման հնարավորություն:

լ) *Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող իրադարձություններ*

Անհրաժեշտ է բացահայտել էական և չկարգավորվող իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ամսաթվից հետո, ներառելով իրադարձության բնույթը և դրա ֆինանսական ազդեցության գնահատականը, կամ հավաստում, որ այդ իրադարձության ֆինանսական ազդեցությունը հնարավոր չէ չափել): Նմանատիպ դեպքեր են հանդիսանում՝

i) ֆիքսված վերջնաժամկետով փոխառության ժամկետի ավարտին մոտենալը, երբ վերավարկավորման կամ փոխառությունը մարելու իրատեսական հեռանկարներ չկան

ii) նշանակալի գործառնական կորուստներ

iii) էական խարդախությունների կամ սխալների բացահայտում, որոնք վկայում են, որ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ չեն կամ խեղաթյուրված են

iv) ղեկավարությունը որոշում է կայացնում դադարեցնել կազմակերպության կամ դրա կոմերցիոն գործունեությունը կամ էլ գալիս է այն եզրակացության, որ նշված գործողությունները անհրաժեշտ են իրական այլընտրանքի բացակայության պարագայում

v) ֆուտբոլիստների հետ կապված գործարքներ, եթե վճարված կամ ստացված գումարները նշանակալի են

vi) անշարժ գույքի հետ կապված գործարքներ, օրինակ՝ կապված ակումբին պատկանող մարզադաշտի հետ:

խ) *Այլ բացահայտումներ*

i) վճարումներ գործակալներին/միջնորդներին

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալներին/միջնորդներին կամ ի շահ վերջիններիս կատարված վճարումների գումարային մեծությունը պետք է բացահայտվի:

ii) Հարկային ծախս

Հարկային ծախսի յուրաքանչյուր բաղադրիչ պետք է ներկայացվի առանձին: Այսինքն, այն գումարային մեծությունը, որը կիրառվել է հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս՝ ընթացիկ և/կամ հետաձգված հարկերի մասով:

iii) Այլ

Ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն կամ բացահայտում, որը ներկայացված չէ շահույթի և վնասի, հաշվապահական հաշվեկշռի կամ դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվություններում, բայց էական նշանակություն ունի այդ հաշվետվություններից որևէ տեղեկատվություն հասկանալու համար և/կամ պահանջվում է ֆինանսական տեղեկատվության նվազագույն պահանջները բավարարելու համար, պետք է բացահայտվի:

Զ. ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

1. Արտոնագրման բոլոր թեկնածուները/ արտոնագրվածները պետք է պատրաստեն և արտոնագրողին ներկայացնեն ֆուտբոլիստների ինքնության հաստատման աղյուսակ:

2. Ֆուտբոլիստների ինքնության հաստատման աղյուսակը պետք է տրամադրել աուդիտորին, ով պետք է համապատասխանեցնի ֆուտբոլիստների ինքնության հաստատման աղյուսակի գումարային մեծությունները տարեկան ֆինանսական հաշվետվության հաշվապահական հաշվեկշռում և շահույթի ու վնասի հաշվետվությունում առկա համապատասխան գումարների հետ: Այնուամենայնիվ, կարիք չկա ներկայացնելու ֆուտբոլիստների ինքնության հաստատման աղյուսակը տարեկան ֆինանսական հաշվետվություններում:

3. Յուրաքանչյուր ֆուտբոլիստի վերաբերյալ ինքնության հաստատման աղյուսակում լրացման ենթակա նվազագույն տեղեկատվությունը հետևյալն է՝

ա) անուն և ծննդյան ամսաթիվ

բ) ֆուտբոլիստի հետ կնքված սկզբնական պայմանագրի ամսաթիվը և գործող պայմանագրի վերջնաժամկետը

գ) ֆուտբոլիստի գրանցման ուղղակի ծախսերը

դ) կուտակված ամորտիզացիա՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում

ե) ֆուտբոլիստի գրանցման ամորտիզացիա հաշվետու ժամանակաշրջանումհաշվետու տարվա ծախս/ամորտիզացիա

զ) ֆուտբոլիստի գրանցման արժեզրկում հաշվետու ժամանակաշրջանում

է) ֆուտբոլիստի գրանցման օտարում (ինքնարժեք և կուտակված ամորտիզացիա)

ը) զուտ հաշվեկշռային արժեք (մնացորդային արժեք), և

թ) շահույթ/(վնաս) ֆուտբոլիստի գրանցման օտարումից; և

ժ) վաճառքի իրավունքներ (կամ նմանատիպ իրավունք), այն է՝ այն ակումբի վաճառքի իրավունքների նկարագրությունը և (հնարավորության դեպքում) քանակականացումը, որտեղ նախկինում գրանցված է եղել ֆուտբոլիստը՝ բացառությամբ մարզումային փոխհատուցման և (կամ) համերաշխության վճարների:

4. Ֆուտբոլիստների ինքնության աղյուսակում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն, հետևյալ ֆուտբոլիտների մասին՝

ա) բոլոր այն ֆուտբոլիստները, ովքեր արտոնագրման թեկնածուի/ արտոնագրվածի կողմից գրանցվել են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ցանկացած պահի, և ում վերաբերյալ առաջացել է ուղղակի ձեռքբերման ծախս (ինչ-որ պահի հաշվետու ժամանակահատվածում և նախորդ ժամանակահատվածներում):

բ) բոլոր այն ֆուտբոլիստները, ում մասով որևէ եկամուտ/շահույթ (կամ վնաս) է ճանաչվել (ինչ-որ պահի հաշվետու ժամանակաշրջանում):

5. Եթե արտոնագրման թեկնածուն / արտոնագրվածը վերանայել է ֆուտբոլիստների վերաբերյալ հաշվետվության տվյալները սույն կանոնակարգում սահմանված հաշվապահական հաշվետվության պահանջներին բավարարելու նպատակով, ապա ֆուտբոլիստների ինքնության հաստատման աղյուսակում այդ ամբողջական տվյալները պետք է համապատասխանեն/համաձայնեցվեն վերանայված ֆինանսական հաշվետվությունների հետ:

Է. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն ղեկավարության կողմից կազմված ֆինանսական նկարագիր կամ մեկնաբանություններ (երբեմն

նշվում է որպես տնօրինության հաշվետվություն), որտեղ նկարագրվում և բացատրվում են հաշվետու իրավաբանական անձի ֆինանսական կարգավիճակի և ֆինանսական գործունեության հիմնական հատկանիշները, ինչպես նաև այն հիմնական ռիսկերը և անորոշությունները, որոնց հետ այն ստիպված է բախվել:

2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է նաև ներառեն այն մարդկանց անունները, ովքեր տարվա ընթացքում ցանկացած ժամանակ հանդիսացել են հաշվետու իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ տնօրենների խորհրդի և նրա վերահսկիչ մարմինների անդամներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ա. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես սահմանված է Հոդված 70-ում, պետք է հիմնված լինեն գրանցված կազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման չափանիշների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ հիման վրա ՝ անկախ արտոնագրման թեկնածուի կազմակերպաիրավական կառուցվածքից:
2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմվեն՝ ելնելով այն ենթադրությունից, որ արտոնագրման թեկնածուն ամբնդհատ գործունեություն իրականացնող կազմակերպություն, ինչը նշանակում է, որ վերջինս կշարունակի ծավալել իր գործունեությունը մոտակա ժամանակաշրջանում: Ենթադրվում է, որ արտոնագրման թեկնածուն չունի ոչ մտադրություն, ոչ էլ անհրաժեշտություն լուծարվելու, կոմերցիոն գործունեությունը դադարեցնելու կամ փոխատուների կողմից պաշտպանություն փնտրելու՝ համաձայն օրենքների կամ կանոնակարգերի:
3. Ֆինանսական հաշվետվությունների շրջանակները, որոնք հիմք են հանդիսանում տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար, պետք է պարունակեն որոշակի հիմնարար սկզբունքներ, այդ թվում՝
   ա) արդար ներկայացում,
   բ) հետևողական ներկայացում,
   գ) հաշվեգրման հիմք հաշվապահական հաշվառման համար,
   դ) յուրաքանչյուր էական հոդվածի առանձին ներկայացում ,
   ե) ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև եկամուտների և ծախսերի հաշվանցման բացառում:
4. Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր արտոնագրման թեկնածու պետք է պատրաստի տարեկան ֆինանսական հաշվետվությունը՝ հիմք ընդունելով գրանցված կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ՀՀ չափանիշները, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները, Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական

հաշվետվությունների միջազգային ստանդարտները, այս կանոնակարգը ներառում է հաշվապահական հաշվառման հատուկ չափանիշներ, որոնց պետք է համապատասխանել, ինչպես սահմանված է Հավելված 5-ի Բ-ից Զ կետերում:

5. Եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունները չեն համապատասխանում Հավելված 5-ով սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին, ապա արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրողին ներկայացնի նաև՝

ա) Վերանայված ֆինանսական հաշվետվությունները՝ Հավելված 5-ով սահմանված հաշվապահական հաշվառման պահանջները բավարարելու համար, որոնք ընդգրկում են նույն ժամանակաշրջանը՝ ներառյալ նախորդ համեմատական ժամանակաշրջանի համեմատական գումարները,

բ) արտոնագրման թեկնածուի ղեկավարության հայտարարությունը, առ այն, որ վերանայված ֆինանսական հաշվետվություններն ամբողջական են, ճշգրիտ և համապատասխանում են կանոնակարգերին, և

գ) գնահատման հաշվետվություն՝ տրամադրված միևնույն աուդիտորի կողմից, որը հաստատում է տարեկան ֆինանսական հաշվետվությունները արտոնագրողի կողմից սահմանված, վերանայված ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանն ու ճշգրտությանը վերաբերող, համաձայնեցված ընթացակարգերի միջոցով:

6. Վերանայված տարեկան ֆինանսական հաշվետվությունը պետք է ներառի՝

ա) վերանայված հաշվապահական հաշվեկշիռը՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ,

բ) հաշվետու ժամանակաշրջանի շահույթի և վնասի մասին հաշվետվություն/

գ) հաշվետու ժամանակաշրջանի սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն, և

դ) ծանոթագրություններ, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփումը, այլ բացատրական ծանոթագրություններ և նշում (կամ նշումներ), որոնք համապատասխանեցնում են հաշվապահական հաշվեկշիռն ու շահույթի և վնասի հաշվետվությունը վերանայված ֆինանսական հաշվետվությունների և համապատասխան տարեկան ֆինանսական հաշվետվությունների միջև:

Բ. ՀԱՄԱԴՐՄԱՆ / ՄԻԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հաշվետու խմբում ընդգրկված բոլոր իրավաբանական անձանց/կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվությունը (ինչպես սահմանված է Հոդված 68-ում) պետք է լինի համադրված կամ միավորված, այնպես, ասես դրանք հանդես գային որպես մեկ կազմակերպություն:
2. Համադրված ֆինանսական հաշվետվություններն այն խմբի ֆինանսական հաշվետվություններն են, որտեղ հիմնադիր/մայր և դուստր ձեռնարկությունների ակտիվները, պարտավորությունները, կապիտալը, եկամուտը, ծախսերը և դրամական միջոցների հոսքերը, ներկայացված որպես մեկ կազմակերպության տվյալներ:
3. Միավորված ֆինանսական հաշվետվությունները ներառում են երկու կամ ավելի (հիմնականում համատեղ կառավարվող) կազմակերպությունների մասին տեղեկատվություն՝ առանց կառավարող կողմի մասին տեղեկության:

Գ. ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՄՇՏԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ֆուտբոլիստի գրանցման ձեռքբերումը պետք է արտացոլվի ֆինանսական հաշվետվություններում, եթե տրանսֆերի իրականացման բոլոր անհրաժեշտ պայմանները բավարարվել են, այսինքն՝ այն կարելի է համարել առանց նախապայմանների, որը նշանակում է, որ երկու ակումբների և ֆուտբոլիստին ձեռքբերող ակումբի ու ֆուտբոլիստի միջև պետք է կնքվի իրավաբանորեն պարտադիր պայմանագիր:
2. Ֆուտբոլիստի գրանցման օտարումը պետք է արտացոլվի արտոնագրման թեկնածուի ֆինանսական հաշվետվություններում, եթե տեղափոխության իրականացման բոլոր անհրաժեշտ պայմանները բավարարվել են, այսինքն՝ այն կարելի է համարել առանց նախապայմանների, և ռիսկերն ու պարգևները փոխանցվել են նոր ակումբին:
3. Արտոնագրման թեկնածուներն, ովքեր որպես ոչ նյութական ակտիվ կապիտալացնում են ֆուտբոլիստների գրանցման ծախսերը, պետք է կիրառեն հաշվապահական հաշվառման նվազագույն պահանջներ, ինչպես նկարագրված է սույն հավելվածի, Գ կետի, 4, 5 և 6 ենթակետերում: Արտոնագրման թեկնածուն ծախսերը որպես ոչ նյութական ակտիվ կապիտալացման փոխարեն կարող է ծախսագրել ֆուտբոլիստների գրանցումների ձեռքբերմանն ուղղված ծախսերը,եթե դա թույլատրվում է հաշվապահական հաշվառման ազգային չափանիշներով:

4. Ֆուտբոլիստի գրանցման ծախսերը որպես ոչ նյութական ակտիվ կապիտալացնող արտոնագրման թեկնածուների հաշվապահական հաշվառման նվազագույն պահանջները հետևյալն են՝

ա) Կապիտալացվել կարող են միայն ֆուտբոլիստի գրանցման համար պահանջվող ուղղակի ծախսերը: Հաշվապահական հաշվառման նպատակներից ելնելով՝ յուրաքանչյուր ֆուտբոլիստի վերագրված հաշվեկշռային արժեքը չպետք է վերագնահատվի, անգամ եթե արտոնագրման թեկնածուի ղեկավարության կարծիքով նրա շուկայական գինը բարձր է ընթացիկ հաշվեկշռային արժեքից: Ավելին, նույնիսկ եթե արտոնագրման թեկնածուն կարող է որոշակի արժեք ստանալ տվյալ ակումբի կողմից մարզված ֆուտբոլիստների խաղից և/կամ տեղափոխությունից, հաշվապահական հաշվառման պահանջներից ելնելով՝ մանկապատանեկան ոլորտի ուղղությամբ կատարվող ծախսերը պետք է չկապիտալացվեն հաշվապահական հաշվեկշռում, քանի որ կապիտալացման ենթակա են միայն ֆուտբոլիստների գրանցման համար կատարվող ծախսերը:

բ) Ֆուտբոլիստների բոլոր տեսակի պարգևատրումները և/կամ լրավճարները (ինչպիսին է օրինակ՝ պայմանագիր կնքելուց տրվող վճարը), պետք է դիտարկվեն որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսեր և ոչ թե ֆուտբոլիստի գրանցումը ձեռք բերելու նպատակով կատարված ծախսեր: Փոխառությունների մասով առաջացող ֆինանսական ծախսերը դիտարկվում են որպես ֆինանսական ծախսեր և չեն հանդիսանում ֆուտբոլիստի գրանցման նպատակով կատարված ծախսեր, նույնիսկ եթե փոխառությունները վերցվել էին՝ ֆուտբոլիստի գրանցումների ձեռքբերումը ֆինանսավորելու համար:

գ) Ֆուտբոլիստների գրանցման նպատակով կատարված ծախսերի ամորտիզացիան հաշվարկվում է ֆուտբոլիստի գրանցումը ձեռք բերելու պահից և դադարում է այն պահին, երբ ակտիվն ամբողջովին ամորտիզացվում կամ ապաճանաչվում է (օրինակ՝ գրանցումը մշտական հիմունքներով փոխանցվում է այլ ակումբի)՝ ըստ նշված դեպքերի տեղի ունենալու հերթականության:

դ) Յուրաքանչյուր ֆուտբոլիստի գրանցման համար ամորտիզացիոն գումարը պետք է համակարգված կերպով բաշխվի ֆուտբոլիստի պայմանագրի

տևողության ժամանակաշրջանի վրա, որը կազմում է առավելագույնը 5 տարի:

Դրա համար անհրաժեշտ է ակտիվի արժեքը պարբերաբար բաշխել որպես ծախս՝ սկսած ֆուտբոլիստի գրանցման օրվանից և պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ մինչև առավելագույնը 5 տարի ժամկետով: Եթե ֆուտբոլիստի՝ ակումբի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարաձգվում է, ապա ֆուտբոլիստի գրանցման ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ գումարած պայմանագիրը կնքելու նպատակով բանակցությունների հետ կապված ցանկացած լրացուցիչ, ուղղակի ծախսերը (օր.՝ գործակալի/ միջնորդի վճարները) կարող են կամ ամորտիզացվել ֆուտբոլիստի պայմանագրի երկարաձգված ժամկետի ընթացքում կամ սկզբնական պայմանագրի մնացյալ ժամկետի ընթացքում, պայմանագրի երկարաձգման օրվանից առավելագույնը մինչև 5 տարի ժամկետով:

ե) Ամեն տարի արտոնագրման թեկնածուի ղեկավարությունը պետք է ստուգի բոլոր կապիտալացված ֆուտբոլիստների արժեքները՝ վերջինիս արժեզրկման նպատակով: Եթե յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար փոխհատուցվող գումարը ավելի քիչ է, քան հաշվեկշռային արժեքը, ապա վերջինս պետք է ճշգրտվի վերականգնվող գումարի չափով, իսկ տարբերությունն արտացոլվի շահույթի և վնասի հաշվետվությունում՝ որպես արժեզրկման գծով ծախս: Խորհուրդ է տրվում, որ արտոնագրողն իր արտոնագրման թեկնածուներից յուրաքանչյուրից պահանջի հետևողական հաշվապահական քաղաքականություն կիրառել ֆուտբոլիստների գրանցման ծախսերի հետ կապված: Ֆուտբոլիստի գրանցման զուտ հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի հաշվետու ժամանակաշրջանում արժեզրկման համար հետևյալ դեպքերում՝

i) Երբ մինչև ֆինանսական տարվա վերջին օրն ակնհայտ է դառնում, որ ֆուտբոլիստն ի վիճակի չի լինի այլևս հանդես գալ տվյալ ակումբում, օրինակ այն դեպքում, երբ ստացել է ֆուտբոլային կարիերայի հետ անհամատեղելի վնասվածք կամ ի վիճակի չէ այլևս զբաղվել

պրոֆեսիոնալ ֆուտբոլով: Տվյալ դեպքում հաշվապահական հաշվեկշռում նշված ֆուտբոլիստին վերագրված զուտ հաշվեկշռային արժեքը պետք է ամբողջովին արժեզրկվի տվյալ հաշվետու ժամանակահատվածում: Ստորև նշված դեպքերը պատճառ չեն հանդիսանում որպես արժեզրկման գծով ծախսճանաչվելու համար՝

- Ֆուտբոլիստը վնասվածք է ստացել հաշվետու ժամանակահատվածի ընթացքում և ժամանակավորապես ի վիճակի չէ զբաղվել պրոֆեսիոնալ ֆուտբոլով տվյալ ակումբում, կամ
- Ֆուտբոլիստի ֆիզիկական պատրաստվածության մակարդակը կամ ֆիզիկական կարողությունները նվազել են, և վերջինս չի ընտրվել առաջին թիմի խաղերում հանդես գալու համար:

Այս դեպքերում ֆուտբոլային կարիերայի հետ անհամատեղելի վնասվածք ստացած կամ ֆուտբոլային գործունեությունը մշտապես ավարտած ֆուտբոլիստների հետագա աշխատավարձերը շարունակում են դիտարկվել որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսեր ֆուտբոլիստի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

ii) Եթե ակումբի ղեկավարությունը պատրաստվում է ֆուտբոլիստի գրանցման մշտական տեղափոխություն իրականացնել, և տեղափոխությունը տեղի է ունենում ֆինանսական տարվա վերջին օրվանից անմիջապես հետո, այս դեպքում հաշվապահական հաշվեկշռում նշված ֆուտբոլիստի գրանցման զուտ հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի արժեզրկման համար եթե նոր ակումբ ֆուտբոլիստի մշտական տեղափոխությունից ստացվող հատուցումը փոքր է նրա զուտ հաշվեկշռային արժեքից: Հաշվապահական հաշվառման այս սկզբունքը պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններում և շարունակաբար կիրառվի մի հաշվետու ժամանակաշրջանից մյուսը:

iii) Եթե ակումբի ղեկավարությունը ժամանակավորապես փոխանցել է խաղացողի գրանցումը ամորտիզացիոն արժեքից ցածր գումարի դիմաց:

5. Եթե երկու կամ ավելի խաղացողներ տեղափոխվում են փողադարձ ուղղություններով ակումբների միջև (տեղի է ունենում ֆուտբոլիստների

«փոխանակում»), արտոնագրման թեկնածուն պետք է գնահատի, թե արդյոք այդ տրանսֆերները պետք է դիտարկվեն որպես խաղացողների փոխանակման գործարքներ՝ համաձայն սույն կանոնակարգի: Եթե այո, ապա ակտիվների փոխանակման միջազգային հաշվապահական պահանջները (այսինքն՝ ներկայումս հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 38, հոդվածներ 45-47) պետք է կիրառվեն ելքային խաղացող(ների) օտարումից ստացված շահույթը և մուտքային խաղացող(ների) գրանցման ծախսերը հաշվարկելիս:

Սկզբունքորեն, ելքային խաղացողի գրանցումից ստացված շահույթը հաշվարկելիս հասույթը չի կարող գերազանցել արտոնագրման թեկնածուի ֆինանսական հաշվետվություններում խաղացողի գրանցման արժեքի զուտ հաշվեկշռային արժեքը՝ ճշգրտված՝ հաշվի առնելու համատեքստում վճարված ցանկացած զուտ կանխիկ գումար: փոխանակման գործարքը և մուտքային խաղացողի գրանցման ծախսերը պետք է կապիտալացվեն առավելագույնը ելքային խաղացողի հաշվեկշռային արժեքով, ճշգրտված՝ հաշվի առնելով ակումբի կողմից փոխանակման գործարքի համատեքստում վճարված ցանկացած զուտ կանխիկ գումարը:

Խաղացողների փոխանակման գործարքն այն է, երբ երկու կամ ավելի խաղացողներ տեղափոխվում են հակառակ ուղղություններով ակումբների միջև, և որը սովորաբար ներառում է հետևյալ պայմաններից մեկը կամ մի քանիսը տրանսֆերային խաղացողների վերաբերյալ (ոչ սպառիչ ցուցակ): Փոխանցումներ, մուտքային և ելքային.

- ներառված են նույն տրանսֆերային պայմանագրում.
- ներառված են տարբեր տրանսֆերային պայմանագրերում, որոնք կապված են միմյանց հետ.
- կնքված են գրանցման նույն ժամանակահատվածում.
- չեն ներառում որևէ կամ միայն սահմանափակ դրամական հատկացումներ.
- ներառում են նույն կամ համանման վճարման պարտավորություններ կամ վճարման վերջնաժամկետներ ինչպես տեղափոխված խաղացողների, այնպես էլ դուրս տեղափոխված խաղացողների համար, որոնք հավանաբար կփոխհատուցեն միմյանց:

6. Ֆուտբոլիստի գրանցման օտարումից ստացված շահույթը/ (վնասը) պետք է լինի ցանկացած վճարված և/կամ վճարման ենթակա հաշվարկված զուտ գումարները, որոնք ուղղակիորեն կապված են ֆուտբոլիստի գրանցման օտարման հետ և ներառում են՝

ա) իրականացված պայմանական տրանսֆերային փոխհատուցում այն գումարների համար, որոնք վճարման ենթակա են դարձել ֆուտբոլիստի գրանցման օտարման ժամանակ (օր.՝ այլ ակումբին վաճառելու դեպքում վճարվելիք գումար),

բ) ցանկացած այլ՝ ուղղակիորեն վերագրելի գումարներ, որոնք վճարվել և/ կամ ենթակա են վճարման այլ կողմին, ինչպիսիք են այլ ֆուտբոլային ակումբը, գործակալը/ միջնորդը կամ ֆուտբոլի ազգային ասոցիացիան/ լիգան։

7. Արտոնագրման թեկնածուն պետք է կիրառի հետևյալ ճշգրտումները փոխկապակցված կողմեր հանդիսացող ակումբների միջև տեղի ունեցող ֆուտբոլիստի գրանցման մշտական տեղափոխության հետ կապված՝

ա) Ակումբը, որը ձեռք է բերել ֆուտբոլիստի գրանցումը, պետք է հաշվարկի ֆուտբոլիստի գրանցումը ձեռք բերելու ծախսերը՝ հաշվետու ժամանակաշրջանի ամորտիզացիոն հատկացման հաշվարկի համար (այն ակումբների համար, որոնք օգտագործում են ֆուտբոլիստների գրանցման հաշվառման կապիտալացման և ամորտիզացիայի մեթոդը) կամ ֆուտբոլիստի գրանցման ծախսերը (այն ակումբների համար, որոնք օգտագործում են ֆուտբոլիստների գրանցման ծախսագրման մեթոդը)՝ օգտագործելով նշված գումարներից ամենամեծը՝

i. ֆուտբոլիստի գրանցումը ձեռք բերելու գործարքի փաստացի արժեքը,

ii. Ֆուտբոլիստի գրանցման ձեռբերման պատմական ծախսերը այն ակումբի ֆինանսական հաշվետվություններում, որտեղից տեղափոխվել է ֆուտբոլիստը։

Եթե հաշվարկված ամորտիզացիոն հատկացումը մեծ է արձանագրված ամորտիզացիոն հատկացումից, կամ ֆուտբոլիստի գրանցման հաշվարկված ծախսերը մեծ են ֆուտբոլիստի գրանցման արձանագրված ծախսերից, ապա պետք է համապատասխան ճշգրտում կատարվի, որպեսզի տարբերությունը արտացոլվի վերանայված ֆինանսական հաշվետվություններում։

բ) Ակումբը, որը փոխանցել է ֆուտբոլիստի գրանցումը, պետք է հաշվարկի ֆուտբոլիստի գրանցման օտարումից ստացված հասույթը (այն ակումբների համար, որոնք օգտագործում են ֆուտբոլիստների գրանցման հաշվառման

կապիտալիզացիայի և ամորտիզացիայի մեթոդը) կամ ֆուտբոլիստի գրանցումից ստացված եկամուտը (այն ակումբների համար, որոնք օգտագործում են ֆուտբոլիստների գրանցման ծախսագրման մեթոդը) հաշվարկելու նպատակով՝ օգտագործելով նշված գումարներից նվազագույնը՝

i. օտարումից ստացված գործարքի փաստացի հասույթը,

ii. զուտ հաշվեկշռային արժեքը՝ կապված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ֆուտբոլիստի գրանցման ծախսերի հետ:

Եթե օտարումից հաշվարկված շահույթը ցածր է օտարումից գրանցված շահույթից կամ ֆուտբոլիստի գրանցման հաշվարկված հասույթը ցածր է ֆուտբոլիստի գրանցման արձանագրված շահույթից, ապա պետք է համապատասխան ճշգրտում կատարվի, որպեսզի տարբերությունը արտացոլվի վերանայված ֆինանսական հաշվետվություններում:

8. Վերոնշյալ հաշվապահական պահանջները համապատասխանաբար կիրառվում են ցանկացած այլ անձնակազմի (օր.՝ գլխավոր մարզչի) նկատմամբ և այլ ակումբին վճարված եկամուտների/ ծախսերի կամ համանման գումարների նկատմամբ:

Դ. ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ֆուտբոլիստի գրանցման ժամանակավոր տեղափոխության (վարձակալության) հետ կապված գործարքներ ունեցող արտոնագրման թեկնածուների համար նվազագույն հաշվապահական հաշվառման պահանջները հետևյալն են՝
2. Ստացված/ վճարված վարձակալական վճարները հաշվառվում են՝ որպես տրանսֆերից ստացված եկամուտ/ ծախս:
3. Ֆուտբոլիստի վարձակալություն առանց գնելու պարտավորության/հնարավորության

   ա) Ստացված/ստացվելիք վարձակալական վճարները, եթե այդպիսիք առկա են, վարձատու ակումբի կողմից պետք է ճանաչվեն որպես եկամուտ վարձակալության պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի ընթացքում: Վարձատու ակումբը պետք է շարունակի ճանաչել ֆուտբոլիստի գրանցման ձեքբերման համար սկզբնական ծախսերը հաշվապահական հաշվեկշռում որպես ոչ նյութական ակտիվ, եթե կիրառել է կապիտալացման մեթոդը, և պարբերաբար կատարի ամորտիզացիոն

հատկացումներ ֆուտբոլիստի հետ պայմանագրային հարաբերությունների ընթացքում:

բ) Նոր ակումբի կողմից վճարված/վճարվելիք վարձակալական վճարները պետք է ճանաչվեն որպես ծախս վարձակալության պայմանագրի գործողության ամբողջ ժամակահատվածում: Եթե նոր ակումբը ստանձնում է ֆուտբոլիստի աշխատավարձը վճարելու պարտավորությունը, այն պետք է ճանաչվի որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախս վարձակլության ժակետի ընթացքում:

4. Ֆուտբոլիստի վարձակալություն՝ գնելու անվերապահ պարտավորությամբ.

ա) Վարձատու ակումբի կողմից գործարքը պետք է ձևակերպվի որպես ֆուտբոլիստի մշտական տեղափոխություն, հետևաբար ֆուտբոլիստի գրանցման իրավունքը պետք է ապաճանաչվի ոչ նյութական ակտիվներից: Վարձակալական, ինչպես նաև ապագա մշտական տեղափոխությունից ստացվելիք մուտքերը պետք է ճանաչվեն վարձակալության պայմանագրի ծագման պահից:

բ) Նոր ակումբի համար վարձակալության ուղղակիորեն վերագրելի ծախսերը և ապագա մշտական տեղափոխությունը պետք է ճանաչվեն համաձայն ֆուտբոլիստի մշտական գրանցման ձեռքբերման հաշվապահական պահանջների:

5. Ֆուտբոլիստի վարձակալություն՝ գնելու հնարավորությամբ.

ա) Վարձատու ակումբի կողմից գործարքը պետք է ձևակերպվի որպես վարձակալություն մինչև այն պահը, երբ վարձակալն օգտվի գնման հնարավորությունից: Երբ այդ հնարավորությունը գործարկվի (, ապա վարձակալության համար ստացվելիք գումարի մնացորդային արժեքը և ապագա մշտական տեղափոխությունից ստացվելիք մուտքերը պետք է ճանաչվեն համաձայն ֆուտբոլիստների գրանցման մշտական օտարման հաշվապահական հաշվառման պահանջների :

բ) Երբ վարձակալի կողմից գնման իրավունքը իրագործվում է, վարձակալության համար վճարվելիք գումարի մնացորդային արժեքը և ապագա մշտական տեղափոխության դիմաց վճարվելիք գումարները պետք է ճանաչվեն համաձայն ֆուտբոլիստի գրանցման մշտական ձեռքբերման հաշվապահական պահանջների:

6. Ֆուտբոլիստի վարձակալություն՝ գնելու պայմանական հնարավորությամբ.

ա) Եթե գնման հնարավորության նախապայմանը համարվում է իրապես որոշակի և կատարված, ապա ֆուտբոլիստի գրանցումը պետք է երկու ակումբների կողմից էլ ճանաչվի որպես մշտական տեղափոխություն վարձկալության պայմանագրի ժամկետի սկզբից:

բ) Եթե նախապայմանը, որն անհրաժեշտ է ֆուտբոլիստի մշտական տեղափոխությունը վարձակալության ժամկետի սկզբից նախաձեռնելու համար, չի կարող չափվել բավարար ճշգրտությամբ, ապա սկզբում ֆուտբոլիստի գրանցումը հարկավոր է ճանաչել որպես վարձակալություն, այնուհետև, երբ նշված նախապայմանը բավարարվի՝ որպես մշտական տեղափոխություն:

7. Արտոնագրման թեկնածուն պետք է կիրառի հետևյալ ճշգրտումները փոխկապակցված կողմեր հանդիսացող ակումբների միջև տեղի ունեցող ֆուտբոլիստի գրանցման ժամանակավոր տեղափոխության հետ կապված՝

ա) Ակումբը, որը ժամանակավորապես փոխանցել է ֆուտբոլիստի գրանցման իրավունքը, պետք է հաշվարկի ֆուտբոլիստի հետ կապված ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով նշված գումարներից ամենամեծը՝

i. Հաշվետու ժամանակաշրջանում գործարքի փաստացի արժեքը,

ii. Ֆուտբոլիստի գրանցման հետ կապված ամորտիզացիոն հատկացման և ֆուտբոլիստի վարձակալության ժամկետի համար աշխատողի՝ վարձատրության գծով ծախսերի համախառն գումարը՝ արտացոլված ֆուտբոլիստին ժամանակավորապես օտարող ակումբի ֆինանսական հաշվետվություններում:

Եթե հաշվարկված ծախսը մեծ է գրանցված ծախսից, ապա պետք է համապատասխան ճշգրտում կատարվի, որպեսզի տարբերությունը արտացոլվի վերանայված ֆինանսական հաշվետվություններում:

բ) Ակումբը, որը ժամանակավորապես փոխանցել է ֆուտբոլիստի գրանցման իրավունքը, պետք է հաշվարկի ֆուտբոլիստի հետ կապված շահույթի գումարը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով նշված գումարներից նվազագույնը՝

i. Հաշվետու ժամանակաշրջանում գործարքից ստացված փաստացի շահույթը,

ii. Ֆուտբոլիստի գրանցման հետ կապված ամորտիզացիոն հատկացման և ֆուտբոլիստի վարձակալության ժամկետի համար աշխատողի՝ վարձատրության գծով ծախսերի համախառն գումարը՝ արտացոլված ֆուտբոլիստին ժամանակավորապես օտարող ակումբի ֆինանսական հաշվետվություններում:

Եթե հաշվարկված շահույթը փոքր է գրանցված շահույթից, ապա պետք է համապատասխան ճշգրտում կատարվի, որպեսզի տարբերությունը արտացոլվի վերանայված ֆինանսական հաշվետվություններում:

Ե. ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՏԱՐՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Խրախուսական վճարներ/ պարգևատրություններ աշխատակիցներին.

ա) Աշխատողի կողմից մատուցած ծառայությունների դիմաց կազմակերպության կողմից տրված բոլոր տեսակի փոխհատուցումները, ներառյալ ցանկացած պարգևատրություն և նյութական խթանման այլ միջոցներ, ինչպիսիք են՝ կատարողականի հետ կապված փոխհատուցումը, պայմանագրի ստորագրման հետ կապված վճարները և այլ խրախուսական միջոցները, պետք է հաշվառվեն որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսեր:

բ) Խրախուսական վճարները/պարգևատրությունները, որոնք ակումբի կողմից ենթակա են ամբողջական հատուցման անձանց, ովքեր ակումբի նկատմամբ չունեն հետագա պայմանական կամ ծառայողական պարտավորություններ (այսինքն՝ ակումբը չունի վճարումները չկատարելու այլընտրանք), պետք է հաշվառվեն որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ:

գ) Խրախուսական վճարները/պարգևատրությունները, որոնք կախված են ակումբին և/կամ ֆուտբոլին առնչվող ապագա որոշակի իրադարձություններից, ինչպես օրինակ, ֆուտբոլիստի մասնակցությունը մրցաշարերի, և/կամ ակումբի մրցաշարային նվաճումները, պետք է հաշվառվեն որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ ժամանակի այն պահից սկսած, երբ այդ իրադարձությունը տեղի է ունեցել, կամ առկա է մեծ հավանականություն, որ այն տեղի կունենա:

դ) Ֆուտբոլիստներին տրվող խրախուսական վճարները/պարգևատրությունները պայմանագիր կնքելիս և/կամ դրա գործողության ժամետը երկարաձգելիս, երբ հաստատվում են աշխատանքային հարաբերություններ կամ ծառայությունների մատուցման պարտավորություններ, պետք է պարբերաբար ճանաչվեն համապատասխան ժամանակաշրջանում:

2. Աշխատակիցներին հատուցման ենթակա վերջնավճարներ.

Ակումբն ամբողջությամբ պետք է ճանաչի աշխատակիցներին հատուցման ենթակա վերջնավճարների գծով ծախսը, երբ այն այլևս չի կարող վիճարկել/չեղարկել :

Զ. ՀԱՍՈՒՅԹԻ ՀԱՏՈՒԿ ՏԱՐՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Աբոնեմենտներ և համանման եկամուտներ.

   Աբոնեմենտների վաճառքից և համանման մարզական աղբյուրներից ձևավորվող հասույթը պետք է համամասնորեն ճանաչվի համապատասխան հանդիպումները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունենալուն պես:

2. Հեռարձակման իրավունքներից և/կամ մրցանակային գումարներից հասույթ

   ա) Հեռարձակման իրավունքներից և/կամ մրցաշարերի մասնակցության դիմաց ստացված ֆիքսված հասույթը պետք է համամասնորեն ճանաչվի համապատասխան հանդիպումները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունենալուն պես:

   բ) Հեռարձակման իրավունքներից և/կամ մրցաշարերի մասնակցության դիմաց ստացվող հասույթը, որը փոփոխական բնույթ է կրում և կախված է, թե արդյոք ակումբը կբավարարի որոշակի պահանջների (ինչպես օրինակ՝ մրցաշարի մասնակցության հավելավճար մրցանակային տեղ զբաղեցնելու համար), պետք է ճանաչվի ժամանակի այն պահին, երբ ակումբի կատարողականի նկատմամբ պահանջները բավարարված են:

3. Հովանավորչական հասույթ և հասույթ գովազդից .

   ա) Հովանավորչական իրավունքներից և գովազդից ստացված հասույթի ֆիքսված մեծությունը պետք է համամասնորեն ճանաչվի հովանավորչական իրավուքների և գովազդային պայմանավորվածությունների ժամանակահատվածի ընթացքում:

   բ) Հովանավորչական իրավունքներից և գովազդից ստացված հասույթի փոփոխական մեծությունը, որը փոփոխական բնույթ է կրում և կախված է, թե արդյոք ակումբը կբավարարի որոշակի պահանջների (ինչպես օրինակ՝ մրցաշարի մասնակցության հավելավճար մրցանակային տեղ զբաղեցնելու համար), պետք է ճանաչվի ժամանակի այն պահին, երբ ակումբի կատարողականի նկատմամբ պահանջները բավարարված են:

   գ) Հովանավորչության պայմանագրի և/կամ գովազդային պայմանավորվածությունների շրջանակներում ցանկացած ոչ դրամային հատուցում պետք է չափվի իրական արժեքով:

4. Նվիրատվություններ և դրամաշնորհներ/ սուբսիդիաներ.

ա) Նվիրատվությունը գույքի կամ գույքային իրավունքների անհատույց հանձնումն է, որն ակումբի կողմից պետք է ճանաչվի որպես գործառնական եկամուտ ստացման պահին:

բ) Դրամաշնորհները/սուբսիդիաները չպետք է ճանաչվեն ակումբի հաշվապահական հաշիվներում, քանի դեռ առկա չեն հիմնավոր հավաստիացումներ, որակումբը կբավարարի դրամաշնորհով/սուբսիդիայով նախատեսված պայմաններին դրամաշնորհը ստանալու համար, և քանի դեռ դրամաշնորհները չեն ստացվել: Այնուհետև, դրամաշնորհը/ սուբսիդիան պետք է պարբերաբար ճանաչվի շահույթի և վնասի մասին հաշվետվությունում այն հաշվետու ժամանակաշրջաններում, երբ ակումբը ճանաչում է ծախսերը, որոնք ենթակա են փոխհատուցման դրամաշնորհային/ սուբսիդավորված միջոցներից: Այդ պատճառով որոշակի ծախսերի փոխհատուցման համար ստացված նպատակային դրամաշնորհները/ սուբսիդիաները ճանաչվում են շահույթի և վնասի մասին հաշվետվությունում միևնույն հաշվետու ժամանակաշրջան(ներ)ում, ինչպես որ դրանց առնչվող ծախսերը: Նույն տրամաբանությամբ, մաշվող ակտիվներին վերաբերող դրամաշնորհները/սուբսիդիաները ճանաչվում են շահույթի և վնասի հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում և այն համամասնությամբ, ինչպես ճանաչվում է այդ ակտիվների մաշվածության ծախսը: Դրամաշնորհը/ սուբսիդիան, որը ենթակա է ստացման որպես արդեն կրած ծախսերի կամ կորուստների փոխհատուցում ֆինանսական օժանդակության տեսքով և առանց հետագա ծախսերի, պետք է ճանաչվի շահույթի և վնասի հաշվետվությունում ստացման պահինստացման:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Պարտավորությունները համարվում են ժամկետանց, եթե դրանք չեն մարվում՝ համաձայն պայմանագրային կամ իրավական ժամկետների:
2. Համաձայն սույն կանոնակարգի՝ պարտավորությունները չեն համարվում ժամկետանց, եթե արտոնագրման թեկնածուն/արտոնագրվածը (այսինքն՝ պարտապանը) մինչև մարտի 31-ը (համաձայն Հոդվածներ 73-76-ի) կարողանում է ապացուցել, որ

   ա) համապատասխան գումարը մարվել է՝ ամբողջովին վճարվել է, կամ հաշվանցվել է պարտապանի նկատմամբ պարտատիրոջ պարտավորությունների դիմաց

   բ) պարտատիրոջ հետ կնքվել է գրավոր պայմանագիր,, որով երկարչաձգվել է վճարման վերջնաժամկետը /նշում. եթե վարկատուն չի պահանջել վճարումը, դա չի ենթադրում, որ վճարման ժամկետն ինքնին երկարաձգվել է/, կամ

   գ) համապատասխան գումարի մասով առկա է իրավական բողոք(հայց) կամ բաց վարույթ, որը նշանակում է որ,

      1) Պարտապանը իրավական բողոք(հայց) է ներկայացրել, որն ընդունվել է ազգային օրենսդրությամբ սահմանված իրավական մարմնի կողմիցկամ ժամկետանց վճարման վերաբերյալ առկա է բաց վարույթ ազգային կամ միջազգային ֆոտբոլային մարմիններում կամ համապատասխան վերաքննիչ մարմիններում: Եթե, այնուամենայնիվ, որոշում կայացնող մարմինները(արտոնագրողը կամ ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական վերահսկողության մարմինը) կհամարեն, որ այդ հայցը ներկայացվել է կամ այդ վարույթը սկսել է միայն մի նպատակով, այն է՝ խուսափել կանոնակարգով սահմանված ժամկետներում պարտավորությունը մարելուց /այսինքն՝ ժամանակ շահել/, համապատասխան գումարը կշարունակի համարվել որպես ժամկետանց պարտավորություն, կամ

      2) Պարտապանը ազգային օրենսդրությամբ սահմանած իրավասու մարմնին, ազգային կամ միջազգային ֆուտբոլային մարմիններին կամ համապատասխան վերաքննիչ մարմնին բողոքարկել է ժամկետանց վճարումների վերաբերյալ հայցը կամ բաց վարույթը, որը ներկայացվել/սկսվել էր իր դեմ պարտատիրոջ կողմից, և ի վիճակի է որոշում կայացնող մարմիններին(արտոնագրողը կամ ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական

վերահսկողության մարմինը) ողջամտորեն ապացուցել, որ ունի հիմնավոր փաստարկներ ներկայացված հայցը կամ սկսված վարույթը բողոքարկելու համար: Սակայն, եթե որոշում կայացնող մարմինները(արտոնագրողը կամ ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական վերահսկողության մարմինը) ներկայացված փաստարկները համարի անհիմն, ապա գումարը կրկին կհամարվի ժամկետանց պարտավորություն, կամ

դ) համապատասխան գումարի վճարումը առկախված է (հղում տալով սույն կանոնակարգի «առկախված գումարների» վերաբերյալ դրույթներին), որը նշանակում է

1) պարտապանը իրավասու մարմնին գրավոր և օրենքով սահմանված կերպով դիմել է սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ պարտավորությունների հետաձգման համար (ինչպես սահմանված է Հոդված 75-ով) և իրավասու մարմինը գրավոր հաստատել է, որ ներկայացված դիմումը հիմնավոր է և գումարը համարվում է առկախված գումարը մինչև մարտի 31-ը (Հոդված 75-ի համաձայն)։

2) պարտապանը կարող որոշում կայացնող մարմիններին (արտոնագրողը կամ ՈՒԵՖԱ-ի Ակումբների ֆինանսական վերահսկողության մարմինը) բավարար հիմնավորումներ ներկայացնել, որ կատարել է բոլոր ողջամիտ գործողությունները՝ նույնականացնելու և վճարելու պարտատեր ակումբին (ակումբներին) մարզումային փոխհատուցումների և համերաշխության վճարների հետ կապված գումարները (ինչպես սահմանված է ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգում)։

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԱՐՏՈՆԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ա. ՍԿԶԲՈՒՆՔԸ

1. Արտոնագրողը սահմանում է գնահատման ընթացակարգերը՝ արտոնագրի համար դիմող բոլոր ակումբների համար ապահովելով հավասար պայմաններ: Արտոնագրողը գնահատում է ակումբների ներկայացրած փաստաթղթերը, քննում է դրանց տեղին լինել կամ չլինելը և ողջամտության սահմաններում որոշում կայացնում, թե արդյո՞ք բավարարվել է, յուրաքանչյուր չափանիշը, և արդյո՞ք անհրաժեշտ է հավելյալ տեղեկատվությունը (եթե այդպիսին առկա է) յուրաքանչյուր արտոնագրի շնորհման համար:

2. Հոդված 9-ում նշված դրույթների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով գնահատման գործընթացները ներառում են գնահատման այն հատուկ գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի արտոնագրողը՝ ստորև նշված ձևով:

Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտոնագրողը պետք է իրականացնի գնահատման հետևյալ նվազագույն գործընթացները՝
   - ա) գնահատել, արդյոք հաշվետու խումբը համապատասխանում է ակումբի արտոնագրման նպատակներին;
   - բ) գնահատել ներկայացված տեղեկատվությունը, որը հիմք կհանդիսանա արտոնագրման որոշում կայացնելու համար,
   - գ) կարդալ և ուսումնասիրել տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև աուդիտորի եզրակացությունը դրանց վերաբերյալ,
   - դ) ուշադրություն դարձնել աուդիտորի եզրակացության ցանկացած փոփոխությունից ծագած հետևանքներին (առանց ձևավորված կարծիքի եզրակացության սովորական ձևին համեմատության հետ) և/կամ թերություններիինտեղեկատվության տրամադրման և հաշվապահական հաշվառման նվազագույն պահանջների հետ համեմատության մեջ՝ համաձայն ստորև նշված 2-րդ դրույթի:

2. Հաշվետու խմբի գնահատումից և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորի եզրակացությանը ծանոթանալուց հետո, արտոնագրողը պետք է դրանք գնահատի համաձայն ստորև ներկայացվող կետերի՝

ա) եթե հաշվետու խումբը չի բավարարում Հոդված 68-ի պահանջները, ապա ՈՒԵՖԱ-ի Արտոնագիրը պետք է մերժվի;

բ) եթե աուդիտորի եզրակացությունը իրենից ներկայացնում է չձևավորված կարծիք՝ առանց որևէ փոփոխության, ապա դա բավարար հիմք է հանդիսանում ՈՒԵՖԱ-ի արտոնագրի շնորհման համար

գ) եթե եզրակացությունում աուդիտորը հրաժարվում է եզրակացության տրամադրումից, կամ այն պարունակում է բացասական կարծիք, ապա ՈՒԵՖԱ-ի արտոնագրի շնորհումը մերժվում է մինչև աուդիտորի կողմից նոր, այնպիսի եզրակացության տրամադրումը, որիը չի պարունակում կարծիքից հրաժարում կամ տվյալ ֆինանսական տարվա կտրվածքով տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջները բավարարող ֆինանասական հաշվետվությունների այլ փաթեթի կապակցությամբ և արտոնագրողի կողմից նոր ադուդիտորական եզրակացությունը հավանության է արժանանում:

դ) եթե աուդիտորական եզրակացությունը պարունակում է կազմակերպության գործունեության անընդհատության վերաբերյալ հատուկ շեշտադրում, նշանակալի աուդիտորական դիտարկում կամ ձևավորված կարծիք, <<բացառությամբ>>-ի պայմանով, ապա ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը պետք է մերժվի, բացառությամբ, եթե

i) տրամադրվում է աուդիտորի նոր եզրակացությունը տվյալ ֆինանսական տարվա կտրվածքով, որը չի պարունակի կազմակերպության գործունեության մասին ենթադրության վերաբերյալ հատուկ շեշտադրում, նշանակալի աուդիտորական դիտարկում կամ ձևավորված կարծիք, կամ

ii) տրամադրվել են և արտոնագրողի կողմից բավարար են գնահատել լրացուցիչ փաստաթղթեր, որոնք հավաստում են արտոնագրման թեկնածուի կարողությունը հանդես գալու որպես գործունեությունը չընդհատող կազմակերպություն առնվազն մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը,: Լրացուցիչ հավաստիացնող փաստաթղթերը պետք է ներառեն, (սակայն չեն սահմանափակվում) Հոդված 77-ում նշված տեղեկատվությունը / ապագա ֆինանսական տեղեկատվություն/:

ե) եթե աուդիտորի եզրակացությունը պարունակում է կազմակերպության գործունեության անընդհատության հետ կապ չունեցող հատուկ շեշտադրում, նշանակալի աուդիտորական դիտարկում կամ ձևավորված կարծիք <<բացառությամբ>>-ի պայմանով, ապա արտոնագրողը պետք է հաշվի առնի այն բոլոր հետևանքները, որոնց կհանգեցնեն ակումբի արտոնագրման նպատակով եզրակացությունում կատարված փոփոխությունները: ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը կարող է մերժվել, քանի դեռ չեն ներկայացվել լրացուցիչ հավաստիացնող փաստաթղթեր, և վերջիններս չեն գնահատվել բավարար արտոնագրողի կողմից: Արտոնագորողի կողմից պահանջվող լրացուցիչ փաստաթղթերը կախված են աուդիտի եզրակացության մեջ փոփոխություններ կատարելու պատճառներից:

զ) Եթե աուդիտորի եզրակացությունը հղում է կատարում Հոդվածի 68-ում ներկայացված ցանկացած իրավիճակի, ապա ՈՒԵՖԱ-ի Արտոնագիրը պետք է մերժվի:

3. Եթե արտոնագրման թեկնածուն ներկայացնում է լրացուցիչ տեղեկատվություն և/կամ վերանայված ֆինանսական հաշվետվություններ, ապա արտոնագրողը պետք է գնահատի նաև համաձայնեցված ընթացակարգերի վերաբերյալ աուդիտորի հաշվետվությունը լրացուցիչ տեղեկատվության և/կամ վերանայված ֆինանսական հաշվետվությունների հետ կապված: ՈՒԵՖԱ-ի արտոնագրի շնորհումը կարող է մերժվել, եթե աուդիտորի եզրակացությունը չի բավարարում արտոնագրողին ւ/կամ այն պարունակում է հղում հայտնաբերված սխալներին և կամ բացառություններին:

4. Արտոնագրողը պետք է ստուգի, որ արտոնագրման թեկնածուն հրապարակել է ֆինանսական տեղեկատվությունը՝ համաձայն Հոդված 71-ի:

Գ. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՕՐԵՆՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Սեփական կապիտալի օրենքի հետ կապված՝ արտոնագրողը պետք է իրականացնի գնահատման հետևյալ նվազագույն գործընթացները.

ա) տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա որոշել սեփական կապիտալի արժեքը արտոնագրողին հայտը ներկայացնելու վերջնաժամկետին նախորդող դեկտեմբերի 31-ի դրությամբ;

բ) գնահատել (եթե կիրառելի է), թե արդյոք ստորադասված փոխառությունները համապատասխանում են պահանջվող պայմաններին;

գ) Եթե արտոնագրողին փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետին նախորդող դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կապիտալը բացասական է, գնահատել, թե արդյոք այն բարելավվել է առնվազն 10%-ով՝ սեփական կապիտալի այն արդյունքի համեմատ, որը նախորդ տարի արտոնագրման թեկնածուին թույլ է տվել բավարարել սեփական կապիտալի օրենքի պահանջները:

դ) Եթե արտոնագրողին փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետին նախորդող դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կապիտալի օրենքը բավարարված չի , գնահատել, թե արդյոք արտոնագրման թեկնածուն մինչև մարտի 31-ը ներկայացրել է նոր աուդիտի ենթարկված հաշվապահական հաշվեկշիռ, ներառյալ դեկտեմբերի 31-ից սկսած բոլոր ներդրումները՝ ցույց տալով, որ սեփական կապիտալը բարելավվել է առնվազն 10%-ով՝ սեփական կապիտալի այն արդյունքի համեմատ, որը արտոնագրման թեկնածուին նախորդ տարի հնարավորություն է տվել բավարարել սեփական կապիտալի օրենքի պահանջները:

Դ. ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Այլ ակումբների, աշխատակիցների և սոցիալական/հարկային կառույցների նկատմամբ «ժամկետանց պարտավորությունների բացակայությոան» չափանիշի առնչությամբ արտոնագրողը կարող է որոշել՝
   ա) գնահատել արտոնագրման թեկնածուից ստացված տեղեկատվությունը, որի դեպքում նա պետք է գնահատումը իրականացնի՝ համաձայն ներքոհիշյալ 2-րդ կետի, կամ
   բ) հանձնարարել անկախ աուդիտորների իրականացնել գնահատել ողջ գործընթացը՝ համաձայն ISRS 4400-ի, որի դեպքում արտոնագրողը պետք է գնահատի արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվությունը (մասնավորապես՝ կրեդիտորական պարտքերի աղյուսակները և համապատասխան լրացուցիչ փաստաթղթերը) և ստուգի աուդիտորի հաշվետվությունը: Արտոնագրողը կարող է անհրաժեշտության դեպքում լրացուցիչ գնահատման գործընթաց իրականացնել, ինչպես նաև

արտոնագրման թեկնածուից պահանջել լրացուցիչ հավաստող փաստաթղթեր:

2. Անկախ նրանից, թե գնահատումը իրականացվում է արտոնագրողի կամ անկախ աուդիտորի կողմից ֆուտբոլային ակումբների, աշխատակիցների և սոցիալական/հարկային մարմինների համար «ժամկետանց պարտավորությունների բացակայության» չափանիշների վերաբերյալ, հետևյալ նվազագույն ընթացակարգերը պետք է իրականացվեն և նկարագրվեն արտոնագրողի կամ աուդիտորի հաշվետվության մեջ:

ա) ստանալ մարտի 31-ի դրությամբ արտոնագրման թեկնածուի կողմից մինչև փետրվարի 28-ը վճարման ենթակա պարտավորությունների գծով պարտավորությունների աղյուսակները (այսինքն՝ տրանսֆերների աղյուսակը, աշխատակիցների աղյուսակը, սոցիալական/հարկային պարտավորությունների աղյուսակը և համապատասխան փաստաթղթերը).

բ) կատարել անհրաժեշտ քայլերը գնահատելու հաշվետվության մնացորդների ամբողջականությունն ու ճշգրտությունը և եզրակացություն տալ կատարված ընթացակարգերից յուրաքանչյուրի վերաբերյալ

գ) Ստուգել փետրվարի 28-ի դրությամբ արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված ցանկացած ժամկետանց մնացորդի ամբողջականությունը

դ) ստուգել փետրվարի 28-ից մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում ցանկացած ժամկետանց պարտավորությունների մարումը; և

ե) բացահայտել ցանկացած ժամկետանց մնացորդ մարտի 31-ի դրությամբ:

3. Ինչ վերաբերում է ՈՒԵՖԱ-ի և արտոնագրողի նկատմամբ «ժամկետանց պարտավորությունների բացակայության» չափանիշներին, ապա, արտոնագրողն առնվազն պետք է իրականացնի հետևյալ գնահատման գործընթացներ

ա) Ստուգել ՈՒԵՖԱ-ից ստացված ցանկացած տեղեկատվություն ՀՖՖ ակումբների առկախված ժամկետանց գումարների վերաբերյալ և ստուգել փետրվարի 28-ից մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում ցանկացած ժամկետանց մնացորդի մարումը;

բ) Իրականացնել ցանկացած լրացուցիչ գնահատում և արտոնագրման թեկնածուից պահանջել ցանկացած լրացուցիչ փաստաթղթային ապացույց, ինչն արտոնագրողը կհամարի անհրաժեշտ;

Ե. ԳՐԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՆԱԽՔԱՆ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԸ

1. Արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացվող ներկայացուցչական նամակների դեպքում արտոնագրողը պետք է կարդա և հաշվի առնի կարևոր նշանակություն ունեցող ցանկացած փոփոխության ազդեցությունը, որը տեղի է ունեցել ակումբների արտոնագրման բոլոր չափանիշների առնչությամբ:
2. Արտոնագրողը պետք է նաև կարդա և հաշվի առնի տնտեսական կարևոր նշանակության որևէ իրադարձության կամ պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը, դրանք համադրելով նաև արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների, ապագա ֆինանսական տեղեկատվության և տրամադրված լրացուցիչ ցանկացած այլ հավաստիացնող փաստաթղթերի հետ: Արտոնագրողը կարող է որոշել, որ այս գնահատումն իրականացվի աուդիտորի կողմից:
3. Արտոնագրողը պետք է գնահատի ակումբի՝ որպես անընդհատ գործող կազմակերպություն իր գործունեությունը առնվազն մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը շարունակելու հնարավորությունը: ՈՒԵՖԱ-ի արտոնագրի շնորհումը պետք է մերժվի, եթե ֆինանսական տեղեկատվությունը գնահատելուց հետո արտոնագրողը համարում է, որ արտոնագրման թեկնածուն անկարող է շարունակել իր գործունեությունը որպես անընդհատ գործող կազմակերպություն մինչև այն արտոնագրման մրցաշրջանի ավարտը, որի համար դիմում է ներկայացրել:
4. Եթե արտոնագրման թեկնածուն (կամ ՀՖՖ-ի գրանցված անդամը, որն արտոնագրման թեկնածուի հետ ունի պայմանագրային հարաբերություններ՝ համաձայն Հոդված 11-ի) կամ էլ հաշվետու խմբում ընդգրկված արտոնագրման թեկնածուի ցանկացած մայր կազմակերպություն արտոնագրման մրցաշրջանից առաջ 12 ամիսների ընթացքում փնտրում է/էր կամ ստացել է պաշտպանություն իր պարտատերերից՝ օրենքների և կանոնակարգերի համաձայն, կամ ստանում է պաշտպանություն գնահատման գործընթացի ժամանակ ապա ՈՒԵՖԱ-ի Արտոնագիրը պետք է մերժվի: Կասկածներից խուսափելու համար ՈՒԵՖԱ-ի Արտոնագիրը պետք է մերժվի անգամ այն դեպքում, եթե ներգրավված կազմակերպությունը արտոնագրման որոշման կայացման պահին այլևս չի ստանում պաշտպանություն իր պարտատերերի

Զ. ԱՊԱԳԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Ապագա ֆինանսական տեղեկատվության հետ կապված՝ արտոնագրողը պետք է գնահատի, թե արդյոք արտոնագրման թեկնածուն դրսևորում է այն պայմանը, որը սահմանված է Հոդված 77-ով, թե ոչ: Եթե արտոնագրման թեկնածուից պահանջվում է ներկայացնել ապագա ֆինանսական տեղեկատվություն, արտոնագրողը կարող է որոշել.

   ա) գնահատել արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվությունը, որի դեպքում արտոնագրողը պետք է կատարի գնահատումը՝ համաձայն ստորև սահմանված սույն հավելվածի Զ. կետի 2-րդ ենթակետ; կամ

   բ) անկախ աուդիտորներին հանձնարարել իրականացնել գնահատման ընթացակարգերն՝ ըստ ISRS 4400-ի , որի դեպքում արտոնագրողը պետք է ստուգի աուդիտորի եզրակացությունը՝ համոզվելու համար, որ նրանք իրագործել են գնահատման ընթացակարգերը՝ ինչպես նկարագրված է սույն հոդվածի ստորև սահմանված 2-րդ կետում

2. Ապագա ֆինանսական տեղեկատվության գնահատումը պետք է առնվազն ներառի հետևյալը՝

   ա) ստուգել հաշվարկների մաթեմատիկական ճշգրտությունը ապագա ֆինանսական տեղեկատվությունում

   բ) արտոնագրման թեկնածուի ղեկավարության հետ քննարկումների և ապագա ֆինանսական տեղեկատվության ստուգման արդյունքում պարզել, թե արդյոք ապագա ֆինանսական տեղեկատվությունը իրականում պատրաստվել է օգտագործելով բացահայտված ենթադրություններն ու ռիսկերը,

   գ) ստուգել ապագա ֆինանսական տեղեկատվության մեջ ներառված սկզբնական մնացորդների համապատասխանելիությունը՝ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաշվապահական հաշվեկշռի հետ,

   դ) ստուգել, թե արդյոք ապագա ֆինանսական տեղեկատվությունը պատշաճ կերպով հաստատվել է արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի կողմից, արտոնագրման թեկնածուի ղեկավարության հայտարարությամբ

առ այն, որ ներկայացված փաստաթղթերը ամբողջական են, ճշգրիտ և համապատասխանում են սույն կանոնակարգերին;;

ե) անհրաժեշտության դեպքում՝ ուսումնասիրել համապատասխան լրացուցիչ փաստաթղթերը, ներառյալ հովանավորների հետ պայմանագրեր, բանկային ծառայությունները, բաժնետիրական կապիտալի ավելացում, բանկի տրամադրած երաշխիքներ և խորհրդի/կոմիտեի նիստերի արձանագրություններ:

3. Արտոնագրողը պետք է գնահատի արտոնագրման թեկնածուի լուծարման հավանականությունը, այն է՝ դրամական կարողությունները՝ ֆինանսական պարտավորությունները կատարելուց հետո, և վերջինիս՝ որպես անընդհատ գործող կազմակերպություն իր գործունեությունը շարունակելու կարողությունը, առնվազն մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը: ՈՒԵՖԱ-ի արտոնագրի շնորհումը պետք է մերժվի, եթե ֆինանսական տեղեկատվության գնահատում անցկացնելուց հետո արտոնագրողը համարում է, որ արտոնագրման թեկնածուն չի կարողանա կատարել իր ֆինանասկան պարտավորությունները և շարունակել իր գործունեությունը որպես անընդհատ գործող կազմակերպություն առնվազն մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը, որի համար հայտ է ներկայացվել:

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ (2025Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Վահան Բերակչյան	ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի պետ
Նաիրա Աբրամյան	ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի պետի տեղակալ
Նունե Սարգսյան	ՀՖՖ Ակումբների արտոնագրման բաժնի մասնագետ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27

ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԵՌ. +374 10 30 50 30

ԷԼ. ՓՈՍՏ. LICENSING@FFA.AM

WWW.FFA.AM